ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՐՔ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՐԻՆԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

«Մաքրության» քաղաքականությունը. ստալինյան մշակութային հեղափոխությունը 1920-ականների երկրորդ կեսին

ԵՐԵՎԱՆ 2022

Նախաբան

«Ստալինյան մաքրումները» պատմագիտության մեջ լայն տարածում ունեցող ձևակերպում է:[1] Այն նշում է 1920-ականների երկրորդ կեսից սկսած Իոսիֆ Ստալինի իշխանության հաստատման ճանապարհը բացած քաղաքական մեթոդները, որոնք հանգեցրին 1936-1938 թվականների «Մեծ տեռորին»:[2] Սակայն սույն հետազոտության շրջանակում «մաքրումների»՝ իբրև պատմական իրադարձի փաստը չէ միայն, որ մեզ հետաքրքրում է: «Մաքրումներն» առավելապես մեզ երևում են իբրև քաղաքական հակում՝ հակում դեպի մաքրությունն ու զտումը: Ի՞նչ կարող է բացահայտել 1920-ականների վերջին և 1930-ականների սկզբին հաստատված ստալինյան քաղաքականությունների ուսումնասիրումը, եթե այդ քաղաքականությունները դիտարկենք իբրև մաքրության քաղաքականություն:[3] Հարցի առաջադրումն ինքնանպատակ չէ: Ստալինյան քաղաքականությունները մաքրության հասկացությամբ ըմբռնելն է, որ միաժամանակ հատուկ դիտակետ է դառնում 1920-ականների երկրորդ կեսին մեկնարկած ստալինյան մշակութային հեղափոխության քննարկման ու վերամտածման համար:[4] Մաքրելն ու

Սույն հետազոտությունն իրականացնելն անհնար կլիներ առանց գիտական ու ընկերական այն միջավայրի, որ ստեղծվել էր *Բարք և քաղաքականություն* նախագծի հետազոտողներ Նարե Սահակյանի, Աշոտ Գրիգորյանի, Սիրանուշ Դվոյանի, Լուսին Շաբոյանի և ղեկավար Վարդան Ազատյանի հետ համատեղ աշխատանքի արդյունքում: Շնորհակալ եմ նրանց մասնագիտական օգնության, խորհուրդների ու դիտարկումների համար, որոնք ուղղորդել և հարստացրել են իմ հետազոտությունը: Առանձնակի շնորհակալ եմ նախագծի համակարգող Լիանա Աղամյանին հետազոտական աշխատանքի ընթացքում աջակցելու ու այդ ընթացքը հաճելի դարձնելու համար: Շնորհակալ եմ Անժելա Հարությունյանին, Լուսինե Չերգեշտյանին, Խաթուն Ատիկյանին և Հովհաննիսյան ինստիտուտի մյուս աշխատակից-ընկերներին, որոնց աշխատանքի հետ է նաև կապված նախագծի հաջողումը: Հետազոտության ողջ ընթացքում ինձ սատարելու համար շնորհակալ եմ Մաղլենա Միրզոյանին և Էրինե Ղազարյանին:

[1] Ի սկզբանե «մաքրումը» («чистка») խորհրդային քաղաքական բառապաշարում «կուսակցական շարքերի մաքրում» արտահայտության հապավումն էր, որը հետագայում պատմականորեն փոխվեց՝ նշելով կուսակցական և պետական իշխանության զավթման ստալինյան քաղաքականությունները: Տե՛ս, օրինակ, J. Arch Getty, *Origins of the Great Purges: The Soviet Communist Party Reconsidered, 1933–1938* (Cambridge: Cambridge University Press, 1987), էջ 38-48:

[2] Պատմագիտության մեջ հայտնի 1930-ականների «Մեծ տեռորը» կամ «Մեծ (ստալինյան) մաքրումներն» այսօր էլ միջազգային գիտական ուսումնասիրությունների կիզակետում է, տե՛ս, օրինակ, Robert Conquest, *The Great Terror: A Reassessment* (Oxford: Oxford University Press, 1990); J. Arch Getty, Roberta T. Manning (խմբ.), *Stalinist Terror: New Perspectives* (New York: Cambridge University Press, 1993); James Harris, *The Great Fear: Stalin's Terror of 1930s* (Oxford: Oxford University Press, 2017); Андрей Сульдин, *1937. Большой террор. Хроника одного года* (Москва: АСТ, 2022): Հայաստանում «Մեծ տեռորի» ուսումնասիրման ուղղությամբ արժեքավոր հատոր է Հրանուշ Խառատյանի, Գայանե Շագոյանի, Հարություն Մարությանի և Լևոն Աբրահամյանի աշխատասիրած *Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա* հատորը (Երևան: Գիտություն, 2015), նաև Վլադիմիր Ղազախեցյանի *1937-ը Հայաստանում* մենագրությունը (Երևան: Զանգակ, 2005):

[3] Հետազոտական աշխատանքի ընթացքում չգտնվեցին առանձին նյութեր, որոնք ստալինյան քաղաքականությունները քննարկում են հենց այս անկյան տակ:

[4] Հիշատակել է պետք, որ մասնավորապես 1928-1931-ի ընթացքում Ստալինի ձեռնարկած «մշակութային հեղափոխությունը» պատմագիտության մեջ ուսումնասիրությունների այս կամ այն չափով հաստատված շրջանակ է նշում: Դեռ 1978-ին Շեյլա Ֆիցպատրիկի խմբագրությամբ լույս տեսած *Մշակութային հեղափոխությունը Ռուսաստանում* ժողովածուի առաջաբանում վերջինս նշում է. «Փոխանակ բացառապես կենտրոնանալու մշակույթում Կուսակցության միջամտության թեմայի վրա (նախընթաց արևմտյան ուսումնասիրությունների հիմնական թեման)՝ մենք նայել ենք, թե ինչ էր կատարվում մշակութային մասնագիտությունների շրջանակում և փորձել հարաբերել սա ժամանակի սոցիալական և քաղաքական փոփոխությունների հետ՝ ներառյալ դեպի ինտելիգենցիա բանվորության առաջքաշման (выдвижение) համար շարժումը»: Տե՛ս Sheila Fitzpatrick (խմբ.), *Cultural Revolution in Russia, 1928-1931* (Bloomington, London: Indiana University Press, 1978), էջ 4: Ըստ էության, մշակույթ հասկացությունն այս պարագայում նշում է այսպես կոչված «բարձր մշակույթը»: Տե՛ս Sheila Fitzpatrick, *The Cultural Front. Power and Culture in Revolutionary Russia* (Ithaca, London: Cornell University Press, 1992), էջ 1: Մենք մշակութային հեղափոխությունն ըմբռնում ենք առավել լայն իմաստով՝ կենցաղի, վարքուբարքի, առօրյա կյանքի վերափոխման գործընթացների շրջանակով հանդերձ: «Մշակութային հեղափոխություն» եզրույթի քննարկման համար տե՛ս Մայքլ Դեյվիդ-Ֆոքսի *Crossing Borders: Modernity, Ideology, and Culture in Russia and the Soviet Union* (Pittsburgh: University of Pittsburgh Press, 2015) գրքի «What is Cultural Revolution?»

զտելը քաղաքական այն հասկացություններն էին, որոնք տասնամյակի կեսին ուղղակիորեն փոխադրվեցին մշակույթի դաշտ: 1920-ականների երկրորդ կեսին մշակույթի, կենցաղի ու վարքուբարքի հանդեպ գործադրված քաղաքական մաքրության սկզբունքի ուսումնասիրումը նոր անկյուն է բացում ստալինիզմի գաղափարական հենքը վեր հանելու համար:[5] Անշուշտ մեր խնդիրը չէ բառերի ու հասկացությունների համընկնման մակարդակում առաջ քաշված հետազոտական հարցը լուծված համարելը: Բուն խնդիրն է, թե ինչպես է հնարավոր որսալ *քաղաքական մաքրության սկզբունքների փոխադրման բարդ ընթացքը կենցաղի ու մշակույթի ոլորտ*: Հենց այս մտահոգությունն է մեր հետազոտության համար առանցքային դարձնում 1920-ականների երկրորդ կեսին ճարտարապետության շուրջ ծագած բանավեճերն ու առճակատումները Խորհրդային Հայաստանում:[6]

1928-ին դեռևս Մոսկվայի բարձրագույն գեղարվեստա-տեխնիկական արվեստանոցների (Վխուտեմասի) ուսանող երիտասարդ նկարիչ, ճարտարապետ Միքայել Մազմանյանը Երևանի *Խորհրդային Հայաստան* պաշտոնաթերթում տպագրված իր մի հոդվածում այսպես է փաստարկում նոր՝ խորհրդային ճարտարապետության նշանակության օգտին. «Հոկտեմբերյան հեղափոխությունը .... զտեց ճարտարապետությունը հին ոճերից և առաջ մղեց կառուցողական նոր սկզբունքներ: Ճարտարապետությունը դառնում ե նոր կենցաղն

գլուխը (էջ 104-132): Միաժամանակ նշել է պետք, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեկնարկած մշակութային հեղափոխության, նաև ստալինյան մշակութային հեղափոխության միջազգային ուսումնասիրությունների կենտրոնում գլխավորապես Ռուսաստանն է, այնինչ Միության մյուս հանրապետությունների դեպքը դեռևս մնում է հետազոտման կարոտ:

[5] Մշակույթի և ստալինյան քաղաքականությունների խնդիրների տեսակետից արժեքավոր է Շեյլա Ֆիցպատրիկի խմբագրությամբ լույս տեսած վերոնշյալ՝ *Cultural Revolution in Russia* հատորը, տե՛ս նաև Sheila Fitzpatrick, *Everyday Stalinism: Ordinary Life in Extraordinary Times: Soviet Russia in the 1930s* (Oxford: Oxford University Press, 1999); Kees Boterbloem (խմբ.), *Life in Stalin's Soviet Union* (London: Bloomsbury Academic, 2019); Lewis Seigelbaum և Andrei Sokolov (խմբ.), *Stalinism as a Way of Life: A Narrative in Documents* (New Haven: Yale University Press, 2000): Ռուսաստանում ստալինիզմի ուսումնասիրման ուղղությամբ մեծ աշխատանք է տանում «Ելցին» կենտրոնը, որի մասնակցությամբ իրականացվող «ստալինիզմի պատմություն» նախագծի շրջանակում հրապարակվում են ստալինիզմը քննող արժեքավոր հատորներ: Մատենաշարը տե՛ս https://bit.ly/3V3Ot3b, այց՝ 28 օգոստոսի 2022 թ.:

[6] Այս զարգացումներն առաջին անգամ չէ, որ դառնում են գիտական հետաքրքրության առարկա: Դրանց անդրադարձ գտնում ենք Լոլա Դոլուխանյանի՝ դեռևս 1978-ին տպագրված *Из истории развития архитектуры Советской Армении в 20-е годы* (Ереван: Издательство АН АрмССР, 1978) բրոշյուրում և 1980-ին հրատարակված *Архитектура Советской Армении: 20-е годы* (Ереван: Советакан грох, 1980) մենագրությունում: 2000-ականներին արդեն 1920-ականների ճարտարապետական զարգացումները բյուրեղացնող այդ բանավեճերի ու 20-ականների ավանգարդ ճարտարապետության շուրջ խոսակցությունը կրկին հրապարակ եկավ 1950-60-ականների «խորհրդային մոդեռնիստական» ճարտարապետության շուրջ քննարկումների համատեքստում: Տե՛ս, օրինակ, Ruben Arevshatyan, «Blank Zones in Collective Memory or The Transformation of Yerevan's Urban Space in the 60's», ըստ՝ *Red Thread,* 2009-2011, թիվ 1-3, էջ 29-35, նաև Ռուբեն Արևշատյան, «Ազգայինը և ճարտարապետությունը», https://bit.ly/3VrkNwn, այց՝ 8 հուլիսի 2022 թ.; Ռուբեն Արևշատյան, «Empire Strikes Back կամ արդիությունների կոնֆլիկտ», https://bit.ly/3VjanyW, այց՝ 8 հուլիսի 2022 թ.: Այս կապակցությամբ տե՛ս նաև Սարհատ Պետրոսյան, «Էպոխան՝ մի շենքի մեջ», https://bit.ly/3gvgOQ6, այց՝ 8 հուլիսի 2022 թ., Կարեն Բալյան, «Ճարտարապետական հետընթաց», https://bit.ly/3Xx37RW, այց՝ 8 հուլիսի 2022 թ.: Հիշատակել է պետք 2019-ին Երևանում բացված, ապա նախկին Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում շրջած «Վաղվա քաղաքը» ցուցահանդեսը (կուրատորներ՝ Ռուբեն Արևշատյան և Գեորգ Շյոլհամեր), ինչպես նաև 2014-ին Վենետիկի 14-րդ միջազգային ճարտարապետական բիենալեում ներկայացված հայկական տաղավարը «Իղձերի մայրաքաղաքը» խորագրով (կուրատորներ՝ Արևշատյան և Շյոլհամեր): Վերջինիս առիթով հրատարակվելիք կատալոգի համար է գրված Վարդան Ազատյանի՝ 1920-ականների ճարտարապետությանն անդրադարձող «Ժամկետն ընդդեմ ժամանակի. քսանականների կորսված մոդեռնիզմը» հոդվածը, ըստ՝ https://bit.ly/38qdLF9, այց՝ 18 մարտ 2022 թ.: 1920-ականների ճարտարապետական զարգացումների շուրջ մերօրյա քննարկումներն ի մի բերելու մի փորձ է Վահե Բուդումյանի հեղինակած «Կարմիր շենքեր» ֆիլմաշարը և «Ճարտարապետական արդիություններ» ֆիլմը, որտեղ Ռուբեն Արևշատյանի, Սարհատ Պետրոսյանի, Լոլա Դոլուխանյանի, Նազարեթ Կարոյանի, Վարդան Ազատյանի խոսակցություն-հարցազրույցները շոշափում են 1920-ականների արդի ճարտարապետության և դրա փոխակերպման խնդիրները: 1920-ականների խորհրդահայ ճարտարապետության կայացման շուրջ քննարկման համար տե՛ս նաև Լևոն Աբրահամյան, «Թամանյանի Երևանը կոնստրուկտիվիզմի և ստալինյան ճարտարապետության միջև», https://bit.ly/3vezqrZ, այց՝ 25 դեկտեմբերի 2022 թ.:

ու սոցիալիստական շինարարությունը կազմակերպող գործոններից մեկը»: Մազմանյանը հավելում է. «*Պրոլետարիատի դիկտատուրայի յերկարատեվ շրջանում ճարտարապետությունը չի կարող չենթարկվել դասակարգային պայքարի որենքներին*» (ընդգծումը՝ Մազմանյանի):[7] 1928-ին՝ ստալինյան առաջին հնգամյակի մեկնարկին, Մազմանյանի հնչեցրած այս պնդումն ինքնին նշանային է: Ի վերջո, հնգամյակի մեկնարկով հրահրված դասակարգային պայքարի սրման սկզբունքն էր, որ ընկած էր «ստալինյան մաքրումների» հիմքում:

1928-ին ստալինյան առաջին հնգամյակով սկսված երկրի արդյունաբերականացումը ներկայացվում էր իբրև իսկական հեղափոխություն.

> Երկրի ներսում դա «մշակութային հեղափոխություն» էր, «դասակարգերի պատերազմ» («...մեր դասակարգային թշնամիները գոյություն ունեն: Եվ ոչ միայն գոյություն ունեն, այլև աճում են, փորձելով հանդես գալ Խորհրդային Միության դեմ»,- պնդում էր Ստալինը 1928-ի մայիսին) և պայքար միջազգային մասշտաբով սոցիալիզմի գոյությունը պահպանելու համար:[8]

Հենց այդ թշնամիների դեմ հայտարարված պայքարն էր, որ իրականացվում էր քաղաքական բռնություններով ու ճնշումներով: Ստալինյան հեղափոխության ալիքը թե՛ մաքրում էր կուսակցությունն «անհարազատ տարրերից», թե՛ վերացնում էր գյուղացիությունն իբրև դասակարգ, թե՛ անխնա կերպով երկիրը զրկում էր հին կադրերից և մասնագետներից, այսպես կոչված «հին տեխնիկական ինտելիգենցիայից»:[9]

Քաղաքական այս հետնախորքին Մազմանյանի հոդվածից մեջբերումներն ակներև են դարձնում, թե սրված դասակարգային պայքարի սկզբունքին ենթակա՝ «զտված» ճարտարապետությունն ինչպես էր դառնում նոր կենցաղը երաշխավորող գործոն: Ակնհայտորեն 1920-ականների երկրորդ կեսին նոր՝ պրոլետարական ճարտարապետության ստեղծման նպատակ հետապնդող ճարտարապետը քաղաքական իրադարձության վկայակոչմամբ է արձանագրում ճարտարապետության «զտումը»: Եվ այս անելու Մազմանյանի համոզմունքն այն էր, որ դասակարգային պայքարի օրենքները դարձել են ճարտարապետության զարգացման օրենքներ:

Անտեսել չի կարելի, որ 1928-ին Մազմանյանի մարտական գրելաոճը ելնում էր 1920-ականների երկրորդ կեսին հաստատվող ստալինյան քաղաքականությունների հռետորաբանությունից ու առաջին հնգամյա պլանի գործարկման քաղաքական պահանջից: Այսպիսով, նոր ճարտարապետությամբ կենցաղը վերակառուցելու ու ճարտարապետությունը սրված դասակարգային պայքարի օրենքներին ենթարկելու Մազմանյանի մարտակոչը հնչում է դեռևս տասնամյակի սկզբին գործարկված Նոր տնտեսական քաղաքականությունից (ՆԷՊ-ից) հրաժարման ու ստալինյան հնգամյակի մեկնարկի սահմանագծին:[10]

---

[7] Միքայել Մազմանյան, «Ճարտարապետության յեվ վոճի մասին», *Խորհրդային Հայաստան*, 28 հունիսի 1928 թ.:

[8] Տե՛ս Николя Верт, *История Советского государства. 1900-1991* (Москва: Весь мир, 2002), էջ 218: Ստալինյան առաջին հնգամյակի մասին տե՛ս, օրինակ, Верт, *История Советского государства*, էջ 216-223; Джузеппе Боффа, *История Советского Союза*, h. 1 (Москва: Международные отношения, 1990), էջ 329-346: Հայաստանում մեկնարկած հնգամյա պլանի մասին տե՛ս Վլադիմիր Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1941 թթ.* (Երևան: Պատմ. ինստ., 2006), էջ 347-455:

[9] Տե՛ս Верт, *История Советского государства,* էջ 185-229:

[10] 1920-ականների սկզբին Նոր տնտեսական քաղաքականության հաստատման և 1927-28-ին դրանից հրաժարման մասին տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 176-185, 200-209; Боффа, *История Советского Союза*, էջ 153-328: Տե՛ս նաև Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1941 թթ.*, էջ 204-227; 260-317:

Պատահական չէ, որ նույն՝ դասակարգային պայքարի սրման տրամաբանությամբ 1920-ականների երկրորդ կեսին Հայաստանում մեծամասնական առաջին ղեկավար գործիչների դեմ աջ-ազգայնական թեքման դրոշի տակ սկսված արշավն իր արձագանքը գտավ նաև ճարտարապետության մեջ:[11] Մազմանյանի ու երիտասարդ մյուս ճարտարապետների՝ Գևորգ Քոչարի, Կարո Հալաբյանի, Հովհաննես Մարգարյանի թիրախում հայտնվեցին ավագ սերնդի այն արվեստագետներն ու ճարտարապետները, որոնք գործում էին հին ղեկավարության աջակցությամբ և հովանավորությամբ. քննադատության կիզակետում էր մասնավորապես Ալեքսանդր Թամանյանը:[12] Հատկապես քննադատվում էին ավագ սերնդի ճարտարապետների կողմից «հայկական ոճի» վերստեղծման փորձերը, որոնք, Գևորգ Քոչարի գնահատմամբ, կատարվում էին նախկին ղեկավարության «ջերմ աջակցությամբ»:[13] «Հայկական ոճի» վերստեղծման այդ փորձերը Մազմանյանը համարում էր «իդեոլոգիական կոնտրաբանդա»:[14] Երիտասարդ ճարտարապետների համար «ճարտարապետական ֆորմայի հարցերը» նույնական էին «իդեոլոգիայի հարցերին». դրանք միևնույն հարցերն էին պարզապես:[15] Այսպես ակնհայտ է դառնում, որ 1920-ականների երկրորդ կեսին ճարտարապետությունը փաստացիորեն դարձել էր մարտնչող ստալինիզմը գաղափարաբանորեն հաստատելու կոչված ճակատ:

«Միջնադարյան ֆեոդալական տարր» որակված «հայկական ոճի» դեմ դուրս գալու քայլն այլ բան չէր ենթադրում, քան «զտել ազգային կուլտուրայի ամեն մի հատվածը պրոլետարիատին անհարազատ ազդեցություններից»:[16] «Զտման» այս հրամայականի արդյունքում ազգայինի ըմբռնումն ինքը երկփեղկվեց՝ ենթարկվելով սրված դասակարգային պայքարի սկզբունքներին. «իսկական ազգային» պետք է համարվեին միայն պրոլետարիատին դասակարգայնորեն հարազատ ժողովրդական ճարտարապետության ձևերն ու ոճը:[17] Քաղաքական հրամայականով սեփական ավանդույթը մաս-մաս անելու, այն զատելու ու զտելու երիտասարդ ճարտարապետների

---

[11] Հայաստանում աջ-ազգայնական թեքման մեջ մեղադրում էին այն քաղաքական գործիչներին, որոնք դեռևս 1920-ականների սկզբից արտահայտվում էին Հայաստանի տեղական առանձնահատկությունները հաշվի առնելու, գյուղի սոցիալիստական վերակառուցման ավելի դանդաղ ընթացքի անհրաժեշտության օգտին: Ներկուսակցական խմորումներում Հայաստանում կուսակցության ստալինացման մեկնարկային կետ դարձավ 1927-ի ամռանն Աշոտ Հովհաննիսյանի՝ Կենտրոնական կոմիտեի քարտուղարի պաշտոնից հեռանալը: Այս մասին տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1941 թթ.*, էջ 325-327:

[12] Տիպական է, որ երիտասարդների ու ավագների միջև անգամ սերնդային տարբերությունը, որ կողմերն իրենք երկուստեք հրապարակ էին բերում, միաժամանակ քաղաքական, իդեոլոգիական կողմնակցության հղում էր դարձել: Տեքստում ճարտարապետների կամ քաղաքական գործիչների միջև տարիքային տարբերությունը, ուրեմն, մեր առաջ քաշած մոտեցումը չէ: Այդ տարբերությանը տեղ տալիս մեծ հաշվով ելնում ենք 1920-ականների մտայնությունից: Եթե, օրինակ, ոմն ինժեներ Մ. Մելիքյանը շեշտում էր, որ ամենալուրջ ուշադրությունը պետք է դարձնել, որպեսզի «նորերը [մասնագետները] չընկնեն հների ազդեցության տակ ու չենթարկվեն իդեոլոգիական սայթաքումների», կուսակցական գործիչ Արամայիս Երզնկյանն իր հերթին քննադատաբար նկատում էր, թե «Սողոմոնի իմաստությամբ, դեռ ևս աղվամազ չբուսած մի քանի յերիտասարդներ շինարարության ճշգրիտ դասեր են տալիս մեզ տնտեսվարներիս»: Տե՛ս Մ. Մելիքյան, «Մեր շինարարության հիմնական խնդիրներից», *Խորհրդային Հայաստան,* 16 մայիսի 1928 թ. և Ա. Յերզնկյան, «Մի քանի խոսք յեվ մի փոքրիկ պահանջ (Դիսկուսիոն կարգով)», *Խորհրդային Հայաստան,* 11 հուլիսի 1928 թ.:

[13] Քոչարը «հայկական ոճի» վերստեղծման աջակիցներին մասնավորապես բնորոշում է իբրև «ազգային ոճի մոնոպոլիստներ»: Տե՛ս Գեորգ Քոչար, «Մի անհաջող փորձ ճարտարապետական վոճի խնդրում (պատասխան ընկ. Ա. Կ.-ին)», *Նոր ուղի*, 1929, թիվ 1, էջ 329: Պատմականորեն «հայկական ոճ» հղացքի ի հայտ գալու հետագիծը տե՛ս Վարդան Ազատյան, *Արվեստաբանություն և ազգայնականություն. Հայաստանի և Վրաստանի միջնադարյան արվեստները 19-20-րդ դդ. Գերմանիայում* (Երևան: Ակտուալ արվեստ, 2012):

[14] «Մեր ճարտարապետության ուղին», *Խորհրդային Հայաստան,* 6 հունվարի 1929 թ.:

[15] Մազմանյան, «Ճարտարապետության յեվ վոճի մասին»:

[16] Մելիքյան, «Մեր շինարարության հիմնական խնդիրներից» և Մազմանյան, «Ճարտարապետության յեվ վոճի մասին»:

[17] Մազմանյանը հայտարարում էր, որ «ազգը – դա պրոլետարիատն ու գյուղացիությունն է»: Տե՛ս Մազմանյան, «Ճարտարապետության յեվ վոճի մասին»:

նպատակադրումը մեզ երևում է իբրև «ստալինյան մաքրումների» գաղափարաբանության ճարտարապետական վկայակոչում:

Սակայն հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք քաղաքականության ու ճարտարապետության միջև այս բարդ փոխկապակցումներում տեսնել քաղաքական սկզբունքների փոխադրումը հենց կենցաղի ու մշակույթի ոլորտ: Նկատենք, որ քաղաքական օրակարգը որդեգրած նոր ճարտարապետության խնդիրների տեսանկյունից կենցաղի ուսումնասիրման մեր փորձն առաջին հայացքից մի զգալի չափով սահմանափակ է թվում: Ճարտարապետական խնդիրները քննելիս կենցաղը բարդ է որսալ իբրև ուսումնասիրման առանձին առարկա: Այն նախևառաջ երևան է գալիս իբրև քաղաքականության ու դրա սկզբունքները որդեգրած ճարտարապետության օրակարգերին ենթակա տիրույթ: Սակայն քաղաքականապես կենցաղը մաքրելու ստալինյան հրամայականը կարծես ինքնին ի հայտ է գալիս հենց կենցաղի երկրորդայնացման մեջ: Ուստի կենցաղի անտեսումը պետք է համարել ստալինյան քաղաքականությունների համար խիստ ախտանշային երևույթ:

Կենցաղի երկրորդայնացման այս քաղաքականությունը պարզ երևում է 1927-ին Կոմունիստական կուսակցության Երևանի կոմիտեի քարտուղար Դրաստամատ Տեր-Սիմոնյանի հայկական գյուղերի կենցաղին անդրադարձող հոդվածում: Խոսելով կառուցողական աշխատանքների թափին ու տնտեսության զարգացմանը զուգահեռ գյուղերի վերակառուցման պահանջի մասին՝ Տեր-Սիմոնյանը հայկական գյուղերը բնորոշում է իբրև «նախակենցաղ»:[18] Այս բնորոշումը հատկանշական կերպով ցույց է տալիս, թե ստալինյան քաղաքական հայացքում հայաստանյան գյուղերի հաստատված կենցաղն ինչպես է արժեզրկվում՝ համարվելով «նախակենցաղ»՝ ուրեմն և զուրկ կենցաղից: Այս մոտեցումը մեծ հաշվով հուշում է, որ քաղաքականության ու կենցաղի միջև 1920-ականների երկրորդ կեսին անհաղթահարելի տարանջատում էր դրված: Կենցաղը վերափոխելու խնդրում քաղաքականությունն ակնհայտորեն չէր ելնում եղած պայմաններից ու հաստատված վարքուբարքից: Հակառակը՝ քաղաքական ուժն ազատվում, մաքրվում էր հին կենցաղից: Այս անկյան տակ դիտված, սույն հետազոտությունը ոչ այնքան բացահայտում է կենցաղի բուն փոփոխությունը, որքան այն վերևից ուժով փոխող քաղաքականության սրացումները: Վերջիններս որսալու, քաղաքականությամբ կենցաղը մաքրելու արարքը երևան բերելու խնդրին բախվելիս է, ուրեմն, որ առանցքում հայտնվում է ճարտարապետության հարցերի քննարկումը:

1920-ականների երկրորդ կեսի հայաստանյան ճարտարապետության շուրջ զարգացումները, որոնք էապես կապված են նաև Միքայել Մազմանյանի, Գևորգ Քոչարի, Հովհաննես Մարգարյանի, Կարո Հալաբյանի անունների հետ, իբրև մասնագիտական հետաքրքրությունների առարկա նորություն չեն: Ինչպես նշվեց, հատկապես 2000-ականներին ճարտարապետական այդ ավանդույթի վերաբացահայտման ուղղությամբ արդեն իսկ աշխատանք է տարվել:[19] Այլ հարց է, որ սույն հետազոտության խնդրի բերումով այդ ավանդույթին մոտենալու անկյունն է, որ, ըստ մեզ, վերանայման կարիք ունի:

---

[18] Տե՛ս «Ընկեր Դրաստամատ Սիմոնյանի զեկուցումը «Արվեստի բնագավառում վարելիք մեր քաղաքականության մասին»», *Խորհրդային Հայաստան,* 12 հոկտեմբերի 1927 թ.:

[19] Դրա օրինակ է արդեն հիշատակված մտայնությունը, որով 1950-60-ականներին «խորհրդային մոդեռնիզմի» վերելքն ուղղակի կապի մեջ է դրվում 1920-ականների ավանգարդի ավանդույթի վերածնման հետ: Հիշատակենք նաև Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի նախաձեռնած «Հայ ճարտարապետներ» մատենաշարի մասին, որի առաջին գիրքը նվիրված է Միքայել Մազմանյանի ստեղծագործությանը: Տե՛ս Մ. Գրիգորյան, Ռ. Կուրթանջյան, Ե. Վարդապետովա, *Միքայել Մազմանյան* (Երևան: Կոլլաժ, 2020):

1920-ականների ճարտարապետական խնդիրները քննարկելու տեսանկյունից առանցքային պետք է համարել 2014-ին Վենետիկի ճարտարապետական բիենալեի հայկական տաղավարի կատալոգի համար գրված Վարդան Ազատյանի տեքստը: Վերջինիս կատարած հետազոտական աշխատանքը թերևս առաջինն է, որ առաջադրում է 1920-ականների թամանյանական և ավանգարդիստական ճարտարապետությունները միևնույն՝ մոդեռնիստական ավանդույթի ներսում դիտելու հայացք: Այս հայացքն էական է մասնավորապես վերջին տասնամյակում 1920-ականների ճարտարապետության շուրջ հանրային քննարկումները հասկանալու համար: Թամանյանական և ավանգարդիստական ճարտարապետությունների շուրջ իր ելույթներում ու բանախոսություններում, օրինակ, Ռուբեն Արևշատյանը դրանք դիտարկում է իբրև «երկու տարբեր արդի ճարտարապետական դպրոցներ և մոտեցումներ», լայն իմաստով՝ «արդիականացման տարբեր մոդալություններ», «տարբեր արդիություններ»:[20] Ձևակերպվող այս տարբերությունը Սարհատ Պետրոսյանը սրում է, իր հարցազրույցներից մեկում այն ներկայացնելով իբրև «դեբատ համեմատաբար պահպանողական ուղղության կողմնակիցների (որի կարկառուն ներկայացուցիչն էր Թամանյանը և մասամբ, որոշ վերապահումով, կարող ենք ասել, [Նիկողայոս] Բունիաթյանը) և երիտասարդների միջև, որոնք վերադառնալով [Մոսկվայից] փորձեցին իրենց ռեալիզացնել»:[21] Պետրոսյանի գնահատմամբ «կոմունիզմի սկզբնական գաղափարի տրանսֆորմացիան, որ բերեց դեպի բռնատիրություն.... դրա տրանսֆորմացիայի արդյունքում երիտասարդները, այսպես ասած, չկարողացան շարունակել իրենց աշխատանքը և նորից «հաղթող» դուրս եկավ թամանյանական մոտեցումը»:[22] Ինքնին հետաքրքրական է, որ Պետրոսյանի նշած կոմունիստական գաղափարն ու դրա տրանսֆորմացիայի արդյունքում հաստատված ստալինյան բռնատիրությունը չեն դիտարկվում որպես արդիականացման քաղաքական նախագծեր, որոնց իրենք՝ ճարտարապետներն անձնապես զինվորագրված են եղել: Ըստ էության, այս հայացքում չեզոքացվում են քաղաքականության ու ճարտարապետության այն բարդ փոխկապակցումները, որոնք ելնում էին հենց քաղաքական արդիականացման նախագծից ու դրա գործարկումից: Ըստ այդմ թե՛ թամանյանական, թե՛ ավանգարդիստական ավանդույթներն իբրև մեզանում արդիականացման դրսևորումներ դիտելով է, որ հնարավոր է դառնում դրանք բացահայտել իբրև քաղաքական կոնկրետ օրակարգերի ներսում ձևակերպվող ու ճարտարապետության ճակատում հետևողականորեն առաջադրվող դիրքորոշումներ:

1920-ականների ճարտարապետությունը քննող Վարդան Ազատյանի հետազոտական հայացքը հարցադրում է թամանյանական և ավանգարդիստական ճարտարապետությունները հակադրության սկզբունքով դիտարկելու մոտեցումը: Ավելին՝ հակադրությամբ մտածելու այսօրվա ձևն Ազատյանը քննելի է դարձնում հենց իբրև ստալինիզմի արդյունք:[23] Ազատյանը դրա հիմքերը տեսնում է 1930-ականների սկզբին, և ուշադրություն հրավիրում պատմական այն դրվագի վրա, երբ տնտեսության մեջ «մեծ բեկում» կատարելու ու վերևից հեղափոխություն իրականացնելու ծրագրի արդյունքներից համապատասխան եզրակացություններ անելով՝ Ստալինը խոսում է «նոր իրադրության մասին»:[24] Նոր իրադրությունն այլ բան չէր, քան քննադատություն հին

[20] «Ճարտարապետական արդիություններ», https://bit.ly/3V0nsgS, այց՝ 8 հուլիսի 2022 թ. և Ռուբեն Արևշատյան, Աղասի Թադևոսյան, Հարություն Վերմիշյան, «Մշակութային հեղափոխություն», https://bit.ly/3ufJ1yt, այց՝ 8 հուլիսի 2022 թ.:
[21] «Ճարտարապետական արդիություններ», https://bit.ly/3V0nsgS:
[22] «Ճարտարապետական արդիություններ», https://bit.ly/3V0nsgS:
[23] Վարդան Ազատյան, «Մարտահրավերը», https://bit.ly/3V4EtXn, այց՝ 8 հուլիսի 2022 թ.:
[24] Տե՛ս Иосиф Сталин, «Год великого перелома. К XII годовщине Октября», ըստ՝ *Сочинения,* հ. 12 (Москва: Государственное издательство политической литературы, 1952), էջ 118-135; Иосиф Сталин, «Новая обстановка – новые задачи хозяйственного строительства. Речь на совещании хозяйственников, 23 июня

կադրերի հանդեպ գործադրված այն կոպիտ ու ժխտողական դիրքի, որը հենց «մեծ բեկմամբ» պայմանավորված քաղաքական դիրքորոշումն էր 1920-ականների վերջին: Ստալինյան հերթական այս շրջման արդյունքում է միաժամանակ, որ, ըստ Ազատյանի, ձևավորվում են այն սկզբունքները, որոնցով այժմ մեզ հայտնի է ստալինիզմը (վերադարձ ավանդույթին, վերադարձ պատմությանը, վերադարձ հումանիստական արժեքներին):[25] Դրա հետևանք է նաև այն, որ «ստալինիզմը մեզ հայտնի չէ ավանգարդ մտայնության խրախուսմամբ մշակույթում, արվեստում»:[26]

Ավանգարդիստների համար Թամանյանն ավանդապաշտ էր և դրանով իսկ քննադատելի: Սակայն ստալինյան շրջմամբ 1930-ականների սկզբին Թամանյանի հենց ավանդապաշտությունը դարձավ գնահատելի:[27] Ավանդապաշտականի ու նորարարականի սուր հակադրությունն էր, որ 1920-ականների վերջում առաջ էին տանում երիտասարդ ավանգարդիստները ճարտարապետության մեջ. մի հակադրություն, որը, Ազատյանի մեկնաբանմամբ, «հրեշավոր փոփոխություն կրելով ոչնչացրեց իրենց [ավանգարդիստներին] և վեր հանեց, կրկին վերալեգիտիմացրեց նույն Թամանյանին և ավագ սերնդի ճարտարապետներին, որոնց դեմ էր մշակված 20-ականների վերջի «մեծ բեկումը» ճարտարապետության մեջ»:[28]

Ազատյանի այս հայացքն է, որ վեր է հանում 1920-ականների ճարտարապետական «երկու արդիությունները» հակադրության մեջ տեսնելու մեզ ժառանգված ձևի խնդրականությունը: Մյուս կողմից, այդ հակադրությունն առեարեսելն է հենց, որ միաժամանակ դառնում է ստալինիզմը հասկանալու մերօրյա մարտահրավերը.

> Կա մարտահրավեր ստալինիզմն ըմբռնելու առումով և այն նենգ տրամաբանությունը, որով գործում է ստալինիզմը: Երբ մենք շարունակում ենք հակադրել ավանգարդիստներին և Թամանյանին՝ որպես նորարարներ և ավանդապաշտներ, պահպանողականներ և փորձարարական, նորարար հեղինակներ, մենք շարունակում ենք մնալ ստալինյան շրջանակի մեջ: Իսկ եթե նայում ենք 20-ականների կտրվածքով, մենք տեսնում ենք, որ և՛ Թամանյանը, և՛ իրեն պաշտպանող կոմունիստ գործիչները կիսում էին նույն մոդեռնիստական հենքը, ավանդույթը, իսկ ավանգարդիստները նույն նախագծի ռադիկալ դրսևորումն էին:[29]

Այս առումով հայկական արդիությունների պատմության մեջ 1920-ականների հեղափոխական նախագծից ծնված ու դրա հեղափոխական ներուժը յուրացրած ստալինիզմն ամենառադիկալ քաղաքական նախագծերից մեկը պետք է համարել: Ստալինյան շրջանակից դուրս գալու Ազատյանի նախանշած ճանապարհը շատ կոնկրետ դեպքի՝ 1920-ականների վերջի հայաստանյան արդի ճարտարապետության հակասությունները բացահայտելու օրինակով միաժամանակ հնարավորություն է տալիս մոտենալու ստալինիզմին՝ իբրև հայության արդիականացման փորձի ամենացավագին էջերից մեկին:

1931 г.», ըստ՝ *Сочинения*, h. 13 (Москва: Государственное издательство политической литературы, 1952), էջ 51-80: Ստալինիզմի հաստատման պատմության վճռական այս դրվագների մասին տե՛ս, օրինակ, Верт, *История Советского государства*, էջ 209-209; Боффа, *История Советского Союза*, էջ 367-383:

[25] Ազատյան, «Մարտահրավերը», https://bit.ly/3V4EtXn:

[26] Ազատյան, «Մարտահրավերը», https://bit.ly/3V4EtXn:

[27] Ստալինյան այս շրջումը, ինչպես դիպուկ կերպով ցույց է տալիս Ազատյանը, ամրագրվեց սոցիալիստական ռեալիզմի հաստատմամբ: Տե՛ս Ազատյան, «Մարտահրավերը», https://bit.ly/3V4EtXn:

[28] Ազատյան, «Մարտահրավերը», https://bit.ly/3V4EtXn:

[29] Ազատյան, «Մարտահրավերը», https://bit.ly/3V4EtXn:

Ազատյանի հետազոտական աշխատանքը մեզ համար առանցքային է 1920-ականների երկրորդ կեսի ճարտարապետական խնդիրներն ու ստալինիզմի հետ դրանց բարդ փոխկապակցումները հասկանալու հարցում: Սակայն, սույն աշխատանքում Ազատյանի բացած հետազոտական ճանապարհը թեքվում է դեպի կենցաղի ուսումնասիրություն: Ի վերջո, ճարտարապետական խնդիրների քննարկումը մեզ համար առանցքային է այնքանով, ինչքանով դրանք օգնում են բացահայտելու ստալինյան «մաքրության» քաղաքականության առանձնահատկությունն ու ցույց տալու դեպի կենցաղի ոլորտ դրա փոխադրումը: Ազատյանի հոդվածում հստակ է, թե քաղաքական կուրսի փոփոխությամբ ինչպես է ճարտարապետությունը ենթակա դառնում սրված դասակարգային պայքարի ստալինյան սկզբունքին: Քաղաքականության ու ճարտարապետության սկզբունքների համընկնման կետում է, որ մեզ համար իբրև հետազոտական խնդիր է ձևակերպվում ստալինյան մշակութային հեղափոխությամբ օրակարգային դարձած կենցաղի վերափոխման ծրագիրը: Բացի այդ, 1920-ականների առաջին կեսի մշակութային հեղափոխության մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս վերանայել ազգային կոմունիստների և տասնամյակի երկրորդ կեսին հաստատված ստալինյան քաղաքականությունների միջև այն հակադրությունը, որ նկատելի է Ազատյանի հոդվածում:[30] Կենցաղի վերափոխման քաղաքական ծրագրի մեր հետազոտությունը երևան է բերում դրանց միջև առկա ավելի բարդ կապեր: 1920-ականների սկզբին առաջին ղեկավար կոմունիստների (ինչպես օրինակ՝ Ալեքսանդր Մյասնիկյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Արտաշես Կարինյանի, Սահակ Տեր-Գաբրիելյանի և այլոց)՝ հաստատված կենցաղն ու վարքուբարքը վերափոխել հավակնող մշակութային հեղափոխության ծրագիրն արդեն իսկ ենթադրում էր գործի գցել ինքնամերժման այն տրամաբանությունը, որ տասնամյակի երկրորդ կեսին ճանապարհ պիտի բացեր ստալինյան մշակութային հեղափոխության համար: Այս հայացքը թույլ է տալիս ազգային կոմունիզմի ու ստալինիզմի քաղաքականությունները տեսնել ոչ այնքան հակադրության, որքան փոխակերպման բարդ ընթացքի մեջ:

Այս կերպ, ստալինյան արդիականացման նախագիծը մեզ երևում է իբրև հայերի արդիանալու ճանապարհին հառնած հերթական փորձաքար, որը հաղթահարելու համար սահմանված գինը դարձավ սեփական ավանդույթից, ժառանգված մշակույթից ու վարքուբարքից ուժով մաքրվելու պահանջը, ուրեմն և ինքնահրաժարման պահանջը: Այս իմաստով 1920-ականների երկրորդ կեսին կատարվող քաղաքական ու մշակութային իրադարձությունների հիմքում տեսանելի է ստալինյան նույն մոտեցումը: Ի վերջո, 1920-ականների երկրորդ կեսին Հայաստանում ազդարարված քաղաքական հաշվեհարդարներն ու մաքրումները նշում էին այն քաղաքական ղեկավարության ոչնչացումը, որը հայաստանյան կյանքի ու մշակույթի հետ գործնականում հարաբերվող քաղաքական մտքի ու գործի տեղական ավանդույթի մի օղակն էր: Այդ ղեկավարության անդամներից շատերը (Ալեքսանդր Մյասնիկյան, Սարգիս Լուկաշին, Ֆլորա Վարդանյան և այլք) կոմունիստական կուսակցություն էին մտել՝ թիկունքում ունենալով նախկին հնչակյան, դաշնակցական և սպեցիֆիկյան իրենց հարումներն ու կողմնակցությունները:[31]

---

[30] Ազգային կոմունիզմ հասկացությունը փոխառել ենք Վարդան Ազատյանից, որով վերջինս նշում է Խորհրդային Հայաստանի առաջին ղեկավար կոմունիստների քաղաքականությունը: Տե՛ս Vardan Azatyan, «Disintegrating Progress: Bolshevism, National Modernism, and the Emergence of Contemporary Art Practices in Armenia», *ARTMargins*, 2012, թիվ 1, էջ 63: 1920-ականների առաջին կեսին ազգային կոմունիստների քաղաքական օրակարգին ու դրա շրջանակում մեկնարկած մշակութային հեղափոխությանն անդրադարձող մեր հետազոտությունը տե՛ս Իրինա Շահնազարյան, «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև. կենցաղի և արվեստի արդիականացման փորձը 1920-ականների առաջին կեսին», էջ 12-23, *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ,* https://bit.ly/3gAztL1, այց՝ 18 հուլիսի 2022 թ.:

[31] Այս մասին տե՛ս Ազատյան, «Ժամկետն ընդդեմ ժամանակի»: Նման քաղաքական ուղի անցած կոմունիստի տիպական օրինակ է Աշոտ Հովհաննիսյանը, որի ազգային կուսակցությունից դեպի կոմունիզմ բարդ անցումն է երևան բերում Վարդան Ազատյանն իր ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն». Աշոտ Հովհաննիսյանի

Հետևաբար վերջիններս տեղական քաղաքական մտքի ու գործունեության ավանդույթը միավորում էին կոմունիստական օրակարգի հետ: Ստալինյան քաղաքական մաքրության օրակարգի շրջանակում, սակայն, ազգային կոմունիստների քաղաքական այս «խառը» ավանդույթն ինքնին սկզբունքորեն տեղ չէր կարող գտնել:[32] Միաժամանակ Հայաստանում քաղաքական մաքրումները հայաստանյան քաղաքական պատմությունից հանում էին այն օղակը, որը հենց քաղաքական բազմաշերտ ավանդույթի մի թնջուկ լինելու հանգամանքի ուժով էր ի վիճակի տեղական կարիքներից ելնող ու տեղական պայմանները հաշվի առնող քաղաքականություն վարել: Քաղաքական այդ ուժի վերացմամբ էր, որ քաղաքական մաքրության ստալինյան գործելակերպը սողոսկում էր ճարտարապետության ու կենցաղի ոլորտ: Մշակութային «խառը» ավանդույթն այլևս տեղ չուներ նաև նոր՝ պրոլետարական մշակույթ ստեղծելու ստալինյան նախագծում: «Հայկական ոճը» ֆեոդալական հայտարարելը կամ հայկական գյուղերը «նախակենցաղ» անվանելը հստակ գնահատականներ էին, որոնք չէին ենթադրում այլևս անցյալի հանդեպ նուրբ ու տարբերակող մոտեցում. մի մոտեցում, որ ինքնին անխուսափելիորեն կվտանգեր սեփական ավանդույթը հստակ տարանջատմամբ՝ կա՛մ ժողովրդական, կա՛մ ֆեոդալական տեսնելու հնարավորությունը: Հակառակը՝ նոր ճարտարապետությունն ու կենցաղը պետք է հաստատվեին ընդդեմ այդ մոտեցման՝ անցյալը մաս-մաս անելու, զատել-զտելու ու դրա մաս կազմող «թշնամական» ժառանգությունից արագ ու կտրուկ ձևով ազատվելու գնով:

Նորը ստեղծելիս հնի ու հնից ժառանգված ավանդույթի հետ հարաբերման ստալինյան այս մոտեցումը, թվում է, միաժամանակ բացահայտում է ստալինյան քաղաքականությունները բնորոշող հիմնարար մի սկզբունք. դրա հակապատմական բնույթը: Թե՛ քաղաքականապես, թե՛ մշակութայնորեն սեփական ավանդույթը մասնատելու ու այն մաքրելու արարքն այլ բան չէր ենթադրում, քան ներկայից սեփական անցյալի վտարումը, ուրեմն և առհասարակ ժամանակի վտարումը: Այդ կերպ ստալինիզմի դեպի մաքրություն հակումը միաժամանակ երևան է բերում դրա հակաժամանակյա ու հակապատմական բնույթը, երբ անցյալի ավանդույթը դառնում է ընտրողական, հետևաբար և պայմանական: Ստալինիզմը հասկանալու այս անկյունն է բացում Ազատյանը, երբ ստալինիզմի ու ՆԷՊ-ով իշխանության եկած ղեկավարության միջև տարբերությունը դիտում է իբրև ժամկետի ու ժամանակի վրա աշխատող քաղաքականությունների տարբերություն.

> Եթե ՆԷՊ-ն իր բնույթով ելնում էր ժամանակի ներհակ հոսունության գաղափարից, «աշխատում էր ժամանակի վրա», առաջադրելով անցյալ ժամանակի պարտված, բայց չոչնչացված ավանդույթի հետ երկարաժամկետ ու բարդ առերեսման սկզբունքը, ապա ստալինիզմը ժամանակի արտաքսումն էր հասարակական կյանքից: Ստալինյան քաղաքականություններում ժամանակը պարզապես ժամկետ է, որը պետք է հաղթահարել ավելի սրընթաց, քան ենթադրում է ինքը՝ ժամկետը: Եթե ՆԷՊ-ը ելնում էր «ժամանակի գիտակցությունից», ապա ստալինիզմը՝ «վերջնաժամկետի գիտակցությունից:[33]

ավարտաճառը և նրա գործուն պատմագիտությունը» ուսումնասիրության մեջ, ըստ՝ Աշոտ Հովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը/Israel Ory und die armenische Befreiungsidee* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2016), էջ 567-709:

[32] Սեփական «խառը» պատմության հետ հարաբերման 1920-ականների փորձն է երևան բերում Վարդան Ազատյանը 1920-ականների ճարտարապետությանն անդրադարձող իր «Ժամկետն ընդդեմ ժամանակի. քսանականների կորսված մոդեռնիզմը» հոդվածում:

[33] Տե՛ս Ազատյան, «Ժամկետն ընդդեմ ժամանակի»: Ազատյանի մեկ այլ քննարկում, որտեղ հեղինակն անդրադառնում է 1920-ականների գեղարվեստական օրակարգերին խորհրդահայ առաջին ղեկավար գործիչների ու ստալինյան քաղաքականությունների համատեքստում, տե՛ս «Հետամնաց, ապազգային, ձախ.

Տևական ժամանակում, հարյուրամյակների ընթացքում ձևավորված տեղական մշակույթի ու վարքուբարքի վերափոխման համար պահանջվող երկարաժամկետ աշխատանք ստալինյան կարճաժամկետ հնգամյակներն այլևս չէին ենթադրում: Հաստատված կենցաղը դիտվում էր իբրև քաղաքական արդիականացման խոչընդոտ, որը պետք է արագ տեմպով վերացվեր: Դրա վերացմանն էր կոչված նոր՝ պրոլետարական ճարտարապետությունը: Ուրեմն, 1920-ականների երկրորդ կեսին ստալինյան քաղաքականություններին ենթակա ճարտարապետությունն այն միջոցն էր, որով հին կենցաղի արդիականացումը պետք է դառնար նույն այդ կենցաղի ոչնչացման ճանապարհը:

Մաս 1

«Ճարտարապետություն, կենցաղ յեվ վոճ». կառուցողական արվեստի «նոր հունը» 1926-1927 թվականներին

Ճարտարապետությունն ու «դարաշրջանի վոգին հարազատորեն արտահայտելու» պահանջը

1926-1927 թվականներն առանցքային տարիներ պետք է համարենք, եթե հետևողական ենք կենցաղում ու ճարտարապետության մեջ ստալինյան քաղաքական սկզբունքների փոխադրումը քննելու խնդրում: Հենց այս կարճ ժամանակահատվածում է նկատելի դառնում, թե ինչպես են 1920-ականների առաջին կեսին մշակութային դաշտում ներդրված ազգային կոմունիստ գործիչների հեղափոխական մոտեցումները ստալինյան քաղաքականության լույսի ներքո աստիճանաբար սկսում դիտարկվել իբրև հակահեղափոխական:

Փաստացիորեն 1926-1927-ին ողջ Խորհրդային Միության քաղաքականությունն ու տնտեսությունը դեռևս ընթանում էին ՆԷՊ-ով ուղենշված ծրագրով: 1920-ականների սկզբին անժամկետ ներդրված տնտեսական քաղաքականության այդ ծրագիրը, որ հրապարակ բերվեց «ռազմական կոմունիզմի» անհաջող փորձի հետնախորքին, ենթադրում էր առավելապես մեղմ ու չափավոր քաղաքական գործադրություն:[34] Հայաստանում քաղաքական-տնտեսական կուրսի այս փոփոխությունն անմիջականորեն կապված էր երկրում հաստատված նոր ղեկավար կազմի հետ: Հեղափոխական կոմունիստ գործիչների՝ Ալեքսանդր Մյասնիկյանի, Սարգիս Լուկաշինի, Սաքո Համբարձումյանի, Ասքանազ Մռավյանի, Աշոտ Հովհաննիսյանի և այլոց անվան հետ

«3-րդ հարկ»-ի քննադատությունները», ըստ՝ *Երկխոսությունն իբրև անելիք. «3-րդ հարկ»-ի հայտը և այժմեականությունը 30 տարի անց,* գիտաժողովի նյութերի ժողովածու (Երևան: Գաֆէսճեան արվեստի կենտրոն, 2020), էջ 30-39:

[34] Խորհրդային Ռուսաստանում «ռազմական կոմունիզմի» և ՆԷՊ-ի հաստատման մասին տե՛ս, օրինակ, Верт, *История Советского государства*, էջ 133-158, 163-185, նաև՝ Боффа, *История Советского Союза*, էջ 123-135, 153- 171: Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության մասին տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.*, էջ 21-26, ինչպես նաև նույնի *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը. 1920-1929 թթ.* (Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ, 1975), էջ 61-71, իսկ ներդրված ՆԷՊ-ի քաղաքականությունների մասին տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.*., էջ 204-227 և Ղազախեցյան, *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը*, էջ 79-106:

պետք է կապել ՆԷՊ-ի մեղմ ռազմավարություններին արձագանքող այն քաղաքականության ներդրումը Հայաստանում, որը ելնում էր համեմատաբար չափավոր ու տեղական կարիքները հաշվի առնող մոտեցումներից:

Վերջիններիս իշխանության գալով էր նաև, որ 1920-ականների առաջին տարիներին Հայաստանում ազդարարվեց մշակութային հեղափոխության մեկնարկը: Մշակութայնորեն թերզարգացած երկրում սոցիալիզմի կառուցման ճանապահին մշակութային հեղափոխության իրագործումը դարձել էր կոմունիստ գործիչների առջև դրված քաղաքական անհետաձգելի պահանջ:[35] Սակայն ինքնին բաց հարց էր, թե որքանով էր հնարավոր քաղաքական հրահանգով վերափոխել հարյուրամյակների ընթացքում հաստատված տեղական մշակույթը, կենցաղն ու բարքը: Քաղաքականությամբ կենցաղը վերափոխելու ծրագրի հարուցած լարումներն առերեսող ազգային կոմունիստների գործելակերպը ելնում էր քաղաքականության գործադրման հանդեպ զգուշավորությունից: Քաղաքական փոփոխված պայմաններում հնից հրաժարման ու նոր մշակույթի հաստատման համար տրամադրված տևական ժամանակն ու ժամանակի ընթացքում սպասվող հեղափոխական աշխատանքը դարձան վաղ 1920-ականներին կենցաղի վերափոխման երաշխիքները: Այնուամենայնիվ, 1920-ականների կեսերին արդեն ակնհայտ էր՝ որքան քաղաքական փոփոխված պայմաններում հին կենցաղից ազատագրումն ու նորի հաստատումը ձգձգվում էր, ստեղծելով գոյակցող ու միմյանց այլափոխող կենցաղավարության ձևեր, այնքան այդ կիսանոր կամ կիսահին վարքուբարքը վերջնականապես կարգի բերել պահանջող կոչերը դառնում էին կտրուկ և անհամբեր:[36]

Բարդ ընթացք ստացած մշակութային հեղափոխության այս ծրագրում առանձնակի էր արվեստի դերը: Արվեստն այն ոլորտն էր դիտվում, որը միայն իրեն հատուկ միջոցներով ու ձևերով պետք է նպաստեր նոր՝ սոցիալիստական կենցաղի ու մշակույթի հաստատմանը: Քաղաքական հեղափոխությամբ արվեստի համար սահմանված այս նոր խնդիրը, սակայն, դրվեց այն արվեստագետների առջև, որոնք կրթվել և իբրև ստեղծագործողներ կայացել էին մինչհեղափոխական շրջանում: 1920-ականների սկզբին կոմունիստ առաջին ղեկավարների հրավերով նորաստեղծ Խորհրդային Հայաստան տեղափոխված արվեստագետների թվում էին Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Ալեքսանդր Թամանյանը, Գաբրիել Գյուրջյանը, Ստեփան Աղաջանյանը և այլք: Հայաստանում մշակութային կյանքի գրեթե լիակատար բացակայության պայմաններում քաղաքական հովանավորությամբ ու աջակցությամբ հենց իրենց՝ Հայաստան տեղափոխված «հին» սերնդի արվեստագետներին էր վստահվել նոր արվեստի ստեղծումը:[37] Նրանք պետք է ձևակերպեին նոր կենցաղի վերափոխման ընթացքը որպես

---

[35] Մշակութային հեղափոխությունն իբրև քաղաքական առաջնահերթ խնդիր սահմանեց Լենինը 1923-ին «Կոոպերացիայի մասին» իր հոդվածում: Տե՛ս Վլադիմիր Լենին, *Երկերի լիակատար ժողովածու,* հ. 45 (Երևան: Հայաստան, 1983), էջ 436-446: Արդեն իսկ կայացած հեղափոխությունը թե՛ Ռուսաստանում, թե՛ հաջորդիվ խորհրդայնացված երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, ի սկզբանե կարծես ամփոփում էր իր ներքին հակասությունը. սոցիալիստական հեղափոխության կայացումը մշակութայնորեն հետամնաց երկրում սահմանադրել էր հեղափոխության հիմնարար լարումը՝ լարումը քաղաքականության և մշակույթի միջև: Այս մասին տե՛ս Շահնազարյան, «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև», էջ 12-18:

[36] Ազգային կոմունիստների մշակութային քաղաքականության այլափոխման այս ընթացքն ենք քննում «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև» հետազոտության շրջանակում:

[37] Նոր արվեստ ստեղծելու գործը հին սերնդի արվեստագետներին վստահելու առաջին հայացքից ինքնին հակասական փաստը ելնում էր հստակ քաղաքական դիրքորոշումից: Այն նախևառաջ պայմանավորված էր Հայաստանում տիրող իրադրությամբ, որտեղ, ի տարբերություն ռուսաստանյան գեղարվեստական կյանքի ակտիվությանը, մշակութային կյանք գրեթե գոյություն չուներ: Դրա կայացմանն ուղղված պետական քաղաքականության մասին տե՛ս Շահնազարյան, «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև», էջ 31-36: Հայաստանյան գեղարվեստական կյանքն անմխիթար վիճակում էր նաև Առաջին հանրապետության տարիներին, որի գոյության կարճ ժամանակահատվածում գեղարվեստական կյանքի կայուն հիմքեր դնելու հնարավորություն չստեղծվեց: Այս մասին տե՛ս, օրինակ, Գուրգեն Վարդանյան, *Մշակույթը առաջին*

գեղագիտական զգայություն՝ այդ կերպ ամրագրելով հայաստանյան կյանքն իր հեղափոխական կայացման ընթացքի մեջ:[38] Տևական ժամանակում իրագործելի այս պահանջն ուրվագծում էր 1920-ականների առաջին կեսին նոր արվեստի քաղաքական սահմանները: Այդ սահմաններն էին, որ 1926-1927 թվականներին սկսեցին խաթարվել:[39] Տասնամյակի երկրորդ կեսին հեղափոխական *նորը* հստակ ձևակերպելու աստիճանաբար լսելի ու անհամբեր դարձող պահանջը շոշափելի էր դարձնում ստալինյան քաղաքականությունների աճող թափը:[40] Այդ թափը իրենց թիկունքում զգում էին այն երիտասարդ արվեստագետներն ու ճարտարապետները, որոնք մարտական էին տրամադրված թե՛ նոր արվեստը, թե՛ նոր կենցաղը հնից արագ ու կտրուկ միջոցներով ազատելու հարցում:[41]

Ճարտարապետության մեջ 1926-1927-ի այս անցումը տեսնելու առիթ են Երևանում Ժողովրդական տան (ներկայիս Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի) կառուցման շուրջ մեկնարկած քննարկումները:[42] Դրանք երևան են բերում 1920-ականների երկրորդ կեսին տեղական ճարտարապետական ավանդույթը որոշարկելու հարցում ծագած տարակարծությունները. մի կողմից սեփական ավանդույթը դրա բարդությամբ հանդերձ ընդունելու փորձը, մյուս կողմից՝ ներկայի պահանջների համեմատ անցյալի ընտրված ավանդույթ ստեղծելու ձգտումը:

«Յեռուն քաղաքական-կուլտուրական կյանքով» ապրող Երևանի համար Ժողովրդական տուն կառուցելու հատուկ կարևորությունն էր շեշտում հանգամանքը, որ մամուլի էջերում

հանրապետությունում (1918-1920թթ.) (Երևան: Գիտություն, 2003); *Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին. գիտաժողովի նյութեր* (Երևան: Տիգրան Մեծ, 2018); Արթուր Ավագյան, «Հայաստանի Առաջին Հանրապետության մշակութային կյանքի պատմությունից», *Բանբեր հայագիտության*, 2018, թիվ 2, էջ 159-167: 1920-ականների առաջին կեսին նոր արվեստի ստեղծման գործին լծված արվեստագետներից հատկապես առանցքային դերակատարում ունեցան Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, ինչպես նաև Ալեքսանդր Թամանյանը, որոնք համարվում էին նոր արվեստի ու ճարտարապետության առաջամարտիկները: 1920-ականներին վերջիններիս ստեղծագործության անդրադարձի համար տե՛ս, օրինակ, Azatyan, «Disintegrating Progress», էջ 63-69; Ազատյան, «Ժամկետն ընդդեմ ժամանակի»; Շահնազարյան, «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև»:

[38] Այս առումով տիպական էր Խորհրդային Հայաստանում 1924-ին ստեղծված արվեստագետների առաջին միավորման՝ Հայաստանի կերպարվեստից աշխատավորների ընկերության օրակարգը: Այն մի կողմից սահմանում էր «հայրենի կենցաղին մերձենալու» խնդիր, մյուս կողմից նպատակ դնում «հենվելով մեր ժողովրդական պարզ յեվ խորունկ արվեստի նմուշների վրա յեվ ուսումնասիրելով մեր հին վոճերը», ստեղծել «մեր որերին յեվ նրանց շնչին համապատասխան այսորվա նոր արվեստը»: Տե՛ս Գ. Գուրջյան, «Կերպարար արվեստագետների ընկերությունը», *Վերելք,* 1924, թիվ 1, էջ 62: Հայրենի կենցաղին մերձենալով ու հին ոճերի ուսումնասիրմամբ նոր արվեստ ստեղծելու այս մոտեցումը ոչ միայն արվեստագետների հակվածությունն էր, այլև հենց ՆԷՊ-ին բնորոշ քաղաքական մտայնությունը:

[39] 1920-ականների առաջին կեսին ամրագրված այդ սահմաններն ուշագրավ կերպով ձևակերպում էր Խորհրդային Հայաստանի լուսավորության առաջին կոմիսար Աշոտ Հովհաննիսյանը. «Բնականաբար մեր համակրանքը լինելու յե նրանց կողմը, վորոնք նոր աչքով կնայեն աշխարհի և կյանքի վրա, վորոնց համար զուր չեն անցել վերջին տարիների արյունոտ վայրիվերումները, վորոնք տեսնում են գալիքը և նշմարում նրա տարրերը նոր հաստատվող կենցաղի մեջ»: Տե՛ս «Խմբագրության կողմից», *Նորք,* 1922, թիվ 1, էջ 6:

[40] Այս մասին տե՛ս Շահնազարյան, «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև», էջ 48-64:

[41] Այս փոփոխությունը սուր կերպով նկատելի էր մասնավորապես մտավորականության շրջանում: Ըստ Շեյլա Ֆիցպատրիկի արդեն մեկնարկած առաջին հնգամյակի պայմաններում սկսում է «քաղաքական առճակատում «պրոլետարական կոմունիստների» և «բուրժուական» ինտելիգենցիայի միջև, որտեղ «պրոլետարական կոմունիստները» փորձում էին տապալել հին ռեժիմից ժառանգված մշակութային հեղինակությունները: Մշակութային հեղափոխության նպատակն էր ստեղծել նոր՝ «պրոլետարական ինտելիգենցիա»»: Տե՛ս Sheila Fitzpatrick, «Cultural Revolution as Class War», ըստ՝ *Cultural Revolution in Russia*, էջ 8: Տե՛ս նաև վերջինիս *The Cultural Front* գրքի «Professors and Soviet Power» գլուխը (էջ 37-64):

[42] Տե՛ս, օրինակ, Ա. Մռավյան, «Յերևանի Ժողովրդական տան կառուցման խնդիրը», *Խորհրդային Հայաստան,* 24 փետրվարի 1926 թ.; Մ. Սարյան, «Յերևանում կառուցվելիք Ժողովրդական տան խնդիրը», *Խորհրդային Հայաստան,* 6 մարտի 1926 թ.; «Նախապատրաստական աշխատանքներ», *Խորհրդային Հայաստան,* 1926, թիվ 1, էջ 2; Ա. Սպենդիարյան, «Վորոշ հարմարություններ պետք ե ստեղծել», *Խորհրդային Հայաստան,* 1926, թիվ 1, էջ 2; Արա Սարգսյան, «Հինը չի կարող բավարարել», *Խորհրդային Հայաստան,* 1926, թիվ 1, էջ 2; «Յերևանի Ժողովրդական տան կառուցումը», *Աշխատանք,* 1927, թիվ 16, էջ 25-26; «Յերևանի ժողովրդական տան նախապատրաստական աշխատանքները», *Հ.Խ.Ս.Հ. Հայանդրհեռգործի փոստային ինֆորմացիոն բյուլլետեն*, 1926, թիվ 7, էջ 7-8:

դրա շուրջ քննարկումները մեկնարկում են Ասքանազ Մռավյանի անդրադարձով: Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնը զբաղեցնող Մռավյանի հոդվածում ըստ էության ձևակերպվում էր Ժողտան կառուցման առթիվ երկրի պետական, քաղաքական դիրքորոշումը.

> Յերևանի Ժողովրդական Տունը պետք ե արժանավոր գեղարվեստական մի շենք լինի, համապատասխան մեր լիարյուն հասարակական-քաղաքական կյանքին, համահնչյուն տնտեսական-կուլտուրական սոցիալիստական շինարարության պաֆոս ապրող բանվորա-գյուղացիական Հայաստանի պատմական այս եպոխային:
>
> Ժողովրդական Տունը կառուցող ճարտարապետը պիտի ջանա հարազատորեն արտահայտել մեր բացառիկ դարաշրջանի վոգին, նրա համարձակ թռիչքը:[43]

Հետաքրքրականորեն առաջիկայում Ժողովրդական տուն կառուցելու շուրջ քննարկմանը մասնակցելու Մռավյանի՝ հոդվածում հնչեցրած կոչին արձագանքում են ոչ թե ճարտարապետ-մասնագետները, այլ արվեստագետները՝ նկարիչ Մարտիրոս Սարյանը և քանդակագործ Արա Սարգսյանը: Սարյանը, որ 1921-ին Խորհրդային Հայաստան տեղափոխված առաջին արվեստագետներից էր, 1920-ականների սկզբին համարվում էր նոր՝ խորհրդային արվեստի առաջամարտիկը: Իր հերթին երիտասարդ Արա Սարգսյանը, որ Երևան էր տեղափոխվել միայն 1925-ին, այն արվեստագետներից էր, որ 1920-ականների երկրորդ կեսին ակտիվորեն համագործակցում էր երիտասարդ ճարտարապետների հետ:[44] Թե՛ Սարյանի, թե՛ Սարգսյանի արձագանքներում առանցքային հարցն այն է, թե ինչպես էին վերջիններս ըմբռնում դարաշրջանի ոգին «հարազատորեն արտահայտելու» Մռավյանի պահանջը: Այս հարցի պատասխանն էապես օգնում է բացահայտելու գեղարվեստական այն հակադիր դիրքերի ձևակերպումը, որոնք աստիճանաբար փեղեկում էին 1920-ականների երկրորդ կեսի հայաստանյան գեղարվեստական կյանքի հիմքերը:

Սարյանի նկարչական հայացքն ուղղված է Հայաստանում ու նրա սահմաններից դուրս հանդիպող «կանգուն ու ավերված» ճարտարապետական այն հուշարձաններին, որոնք աչքի են ընկնում իրենց «հատուկ բնույթով և իրենց առանձին պարզ կոնստրուկցիայով».

> Այդ հուշարձանները զարմանալիորեն կապվում և ներդաշնակվում են բնության և իրենց շուրջն ընկած պեյզաժի հետ, վորը հայկական մոնումենտալ ճարտարապետության առանձնահատկություններից մեկն ե: Այս ճարտարապետության արմատները գտնվում են ժողովրդական ճարտարապետության մեջ, գյուղական այն բազմաթիվ շինությունների մեջ, վորոնք կպած են գետնին և համարյա թե միաձուլված բնության հետ, սակայն իրենց մեջ ճարտարապետական բազմատեսակ ձևերի անսպառ ու կենդանի աղբյուր են պարունակում:[45]

Ազգային կոմունիստների մշակութային քաղաքականությանն արձագանքող Սարյանի համար «հայկական ժողովրդական» այս ոճը, որին պետք է հետևեին նոր շինարարները, ինքնին «խառը» ավանդույթ է ներկայացնում: Նկարչի ըմբռնմամբ հայկական

---

[43] Մռավյան, «Յերևանի ժողովրդական տան կառուցման խնդիրը»:

[44] Այդ համագործակցության օրինակ էր 1929-ին Ստեփան Շահումյանի հուշարձանի համար հայտարարված մրցույթին Սարգսյանի, Հալաբյանի, Մազմանյանի և Քոչարի ներկայացրած համատեղ նախագիծը: Տե՛ս «Ստեփան Շահումյանի մոնումենտի նախագիծը Յերեվանում», Հայաստանի ազգային պատկերասրահի (ՀԱՊ) հուշաձեռագրային բաժին, ֆ. 184, թպ. 1, ի. 3748:

[45] Սարյան, «Յերևանում կառուցվելիք Ժողովրդական տան խնդիրը»:

մոնումենտալ ճարտարապետությունն արմատներով կապված է ժողովրդական ճարտարապետությանը և բազմատեսակ ձևերի աղբյուր է: Այս կերպ, դարաշրջանի ոգին «հարազատորեն» արտահայտելու պահանջն ի կատար ածելու խնդրում Սարյանը հայացքն ուղղում է անցյալի ճարտարապետական հենց այդ «խառը» ավանդույթին. հայացք, որում մոնումենտալ և ժողովրդական ձևերի տարանջատման սկզբունք ինքնին չի էլ ենթադրվում: Սարյանի հոդվածում իբրև նոր՝ խորհրդային ճարտարապետության օրինակ է բերվում Ալեքսանդր Թամանյանի կառուցած հիդրոէլեկտրակայանի շենքը: Դրա ճարտարապետական ոճի բնորոշումն ըստ էության սահմանում էր ավագ սերնդի արվեստագետների ընբռնած չափանիշը. ճարտարապետությունը պետք է «համապատասխան[եր] այժմեյականությանը և .... ամուր կերպով շաղկապ[վեր] հայկական կլասիկ ձևերի հետ»:[46]

Ուշագրավ կերպով Արա Սարգսյանի հոդվածի առաջին տողերը կարծես ամբողջովին ժխտում են Սարյանի ընբռնած հայկական ճարտարապետական ավանդույթի հենց «խառը» բնույթը: Սարգսյանի համար հայկական ճարտարապետական ոճի առանձնահատկությունները՝ «մեր ճարտարապետական պարզությունը, գմբեթների տիպի վար վազող գծերը, առհասարակ զարդարանքները և խաչքարերը», որոնք «շնչում են աղոթք և մռայլություն» ակնհայտորեն հղում են միայն մեկ՝ միջնադարյան եկեղեցական ավանդույթին:[47] Անցյալի ժառանգությունը տարբերակող Սարգսյանի այս հայացքում նկատելի է, թե ինչպես է ճարտարապետական ավանդույթը դառնում միագիծ: Սարգսյանի «քննական աչքում» անցյալի այս զտված ժառանգությունը բյուրեղացնող «հայկական ոճն» այլևս չէր կարող բավարարել «նոր եպոխայի» պահանջներին. «Հանգիստ թողնենք այլևս յեկեղեցական և ժողովրդական տուները, դրանք բոլորը պատմության են պատկանում»:[48] Պատմության ու ավանդույթի հակադիր այս ընբռնումները ենթադրում էին ներկա խնդիրների հետ հարաբերման արվեստի ու ճարտարապետության հիմնավորապես տարբեր սկզբունքներ: Սարյանի պարագայում դրանք ՆԷՊ-ի՝ ժամանակին, պատմությանն ու «խառը» ավանդույթին տեղ տվող մոտեցումներն էին: Սարգսյանի դեպքում՝ անցյալի «տիրող հասարակարգի» հետ դրա «հոգեբանությունն արտահայտող» ճարտարապետական ոճն ուղիղ կապելու մոտեցումն էր:[49] Անցյալի ճարտարապետական ժառանգությունն այս կերպ միայն մեկ ավանդույթի հանգեցնելու

---

[46] Սարյան, «Յերևանում կառուցվելիք Ժողովրդական տան խնդիրը»: Սարյանի հոդվածին անդրադառնում ենք նաև առանձին նախաբանով, տե՛ս «Արդի հայ արվեստի տեսլականը. Մարտիրոս Սարյանի անդրադարձը Երևանի Ժողովրդական տան կառուցման խնդրին», ըստ՝ *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, https://bit.ly/3Xxt184, այց՝ 11 օգոստոսի 2022 թ.:

[47] Սարգսյան, «Հինը չի կարող բավարարել»: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[48] Նշել է պետք, որ Ժողովրդական տան կառուցման համար կազմվել էր հատուկ հանձնաժողով, որը պետք է քններ հայտարարված մրցույթին ներկայացվող նախագծերը: Ժողտան կառուցմանն անդրադարձող հոդվածներից մեկի բովանդակությունից պարզ է դառնում, որ նույն հանձնաժողովը նաև որոշակի պահանջ էր առաջադրել ճարտարապետական ոճի առնչությամբ. «Թատրոնի վոճի վերաբերյալ հանձնաժողովը գտել ե, վոր նա պիտի լինի հոյակապ, վայելուչ, կոնստրուկտիվ ձեվով և զերծ ավելորդ մանր պաճուճանքներից: Այս առումով թատրոնի վոճը լինելու յե հայկական, վորը պարզ ե և իր պարզության մեջ հոյակապ»: Տե՛ս «Յերևանի ժողովրդական տան նախապատրաստական աշխատանքները», էջ 7:

[49] Հատուկ հիշատակման է արժանի փաստը, որ հենց 1926-ին Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը սուր քննադատության առարկա դարձավ: Գրականագետ Գուրգեն Վանանդեցին «պրոլետարական քննադատության» դրոշի ներքո առաջ քաշեց Սարյանի արվեստի «հասարակական արժեքի» խնդիրը: Հաստատվող ստալինյան քաղաքականությունների թափով ոգևորված է Վանանդեցին հայտարարում, որ «իր գյուղական հետամնաց մոտիվներով, իր փախուստով քաղաքից դեպի գյուղ Սարյանը հանդիսանում է արտայայտիչ պահպանողական մանր-բուրժուազիայի տրամադրության»: Տե՛ս Գ. Վանանդեցի, *Մարտիրոս Սարյան, Յեղիշե Չարենց. նրանց ստեղծագործությունների հասարակական արժեքը* (Յերևան: Տպ. Հերմես, 1926), էջ 19: Անչափ ուշագրավ է այս քննադատության դեմ թատերագետ, գրականագետ Վահրամ Թերզիբաշյանի հնչեցրած դիրքորոշումը, որը միանշանակորեն պաշտպանում է Սարյանի արվեստն՝ իբրև «գերազանցորեն հեղափոխական» արվեստ: Տե՛ս Վահրամ Թերզիբաշյան, *Գիր ու արվեստ (դեմքեր, յերկեր, հարցեր)* (Լենինական: Տպարան Երրորդ դիվիզիայի քաղաբժնի, 1926), էջ 96: 1920-ականների արվեստի պատմության առանցքային այս դրվագը դեռևս պատշաճ լուսաբանման կարիք ունի:

Սարգսյանի հայացքը շոշափելի է դարձնում դասակարգային պայքարի սրման ստալինյան սկզբունքի մուտքը ճարտարապետական խնդիրների դաշտ:

Ժողովրդական տան կառուցման խնդրում այժմեականությունն ու ավանդույթը կամրջող Սարյանի ըմբռնման հակառակ բևեռում հայտնվում է Սարգսյանի տեսլականը. «Թեման «*Արդի ժողովրդական տունն*» ե, հակադիր հնին, ուրեմն ճարտարապետական վոճի պահանջը պիտի լինի նաև հակադիր պահանջ այդ [«հայկական»] վոճին» (ընդգծումը՝ Սարգսյանի):[50] Ի վերջո արդիականության հակադիր ըմբռնումներն էին, որ ամրակայում էին Սարյանի ու Սարգսյանի ելակետերը: Եթե Սարյանի համար նոր շինարարները պիտի դիմեին ժողովրդական ոճի «կենդանի աղբյուրին», ապա Սարգսյանի հայացքում ճարտարապետի ելակետը պետք է լինեին «ժողովրդի վոգին և գաղափարախոսությունը»: Ժողովրդի ոգու ինչպիսի՞ ըմբռնումն ու ինչպիսի՞ գաղափարախոսությունն էր, ուրեմն, հենարան տալիս երիտասարդ արվեստագետներին ու ճարտարապետներին «հայկական ոճի» քննադատության ու դեպի «*իսկականը*», դեպի «*նոր հայկական ոճը*» (ընդգծումները՝ Սարգսյանի) ճանապարհը մաքրելու համար:[51]

Հայաստանյան «նախակենցաղ գյուղերի» խնդիրը

1926-1927-ին ազգային կոմունիստների հեղափոխական գաղափարախոսությունը ստալինացման իր ակնհայտ միտումներն էր արդեն դրսևորում: Կոմունիստական կուսակցության XV համագումարը, որը կայացավ 1927-ի դեկտեմբերին, ամփոփեց տրոցկիզմի դեմ երկարամյա պայքարի արդյունքները և հայտարարեց դրա լիկվիդացման մասին:[52] Փաստացիորեն լիկվիդացիայի էր ենթարկվել Լև Տրոցկու գլխավորած «ձախ» թեքումն ու ըստ այդմ չեզոքացվել ՆԷՊ-ից հրաժարման ու երկրի զարգացման հեռանկարը «արդյունաբերության դիկտատուրայի» հաստատման հետ կապելու Տրոցկու պահանջը:[53] Դեռ 1920-ականների կեսերին, ՆԷՊ-ը շարունակելու Նիկոլայ Բուխարինի դիրքորոշումը պաշտպանելով, Ստալինը հաջողեց Տրոցկուն հեռացնել քաղաքական ասպարեզից: Սակայն 1927-ին ստալինյան կուրսում նկատվեց նոր փոփոխություն: XV համագումարում ընդունված բանաձևերում դեռևս թույլ, բայց արդեն շոշափելի էր քաղաքական կուրսի դեպի «ձախ» թեքման միտումը: Այս սպասվող շրջադարձն էր, որ

[50] Ոճի ու ավանդույթի հանդեպ այս դիրքորոշումը Սարգսյանը պաշտպանում էր հետևողականորեն: 1927-ին «Քանդակագործության զարգացման ուղիները մեզանում» հոդվածում, որտեղ քննադատության առարկան կրկին «հայկական ոճն» էր, Սարգսյանը նշում է. «Հին վոճը մասամբ նորոգել, չի նշանակում նորն ստեղծել.... Նոր ստեղծվող վոճը կարող ե ամբողջովին հակադիր լինել հնին, դրանով չի կորչում պատմական զարգացման կապը, այլ ընդհակառակը, շարունակվում ե»: Տե՛ս Արա Սարգսյան, «Քանդակագործության զարգացման ուղիները մեզանում», *Գրական դիրքերում,* 1927, թիվ 2, էջ 11: Սարգսյանի հոդվածին անդրադառնում ենք նաև առանձին նախաբանով, տե՛ս «Արվեստագետի «իդեոլոգիական դեմքը». Արա Սարգսյանը նոր արվեստի բնույթի մասին», ըստ՝ *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, https://bit.ly/3EBVWiU, այց՝ 12 օգոստոսի 2022 թ.:

[51] Պետք է նշել, որ Թամանյանի ոչ միայն նախագծած առանձին կառույցներն էին դառնում սուր բանավեճերի ու քննարկումների առարկա, այլև դեռևս 1924-ին Թամանյանի ներկայացրած Երևանի նոր հատակագիծը: Երևանի թամանյանական հատակագծի մշակման աշխատանքները, 1920-1930-ականներին դրանց դեմ ուղղված մասնագիտական ու քաղաքական քննադատությունները թե՛ ճարտարապետության, թե՛ կենցաղի արդիականացման խնդիրները երևան բերող անչափ ուշագրավ դեպքեր են: Ցավոք, տեղի սղության պատճառով Երևանի հատակագծման խնդիրներին անդրադառնալու հնարավորություն այս դեպքում չունենք:

[52] Տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 200:

[53] Երկրի տնտեսական զարգացման «ձախերի» տեսլականը տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 184: Ֆիցպատրիկը նշում է, որ XV համագումարից մի քանի ամիս անց՝ քաղաքական աճող լարվածության մթնոլորտում է անակնկալ ձևով անցում կատարվում մշակութային հեղափոխությունը որպես դասակարգային պայքար ըմբռնելու հայեցակարգին: Տե՛ս Fitzpatrick, «Cultural Revolution as Class War», էջ 9:

շուտով «աջ» թեքման կարգավիճակում պետք է դներ հենց Բուխարինին և ՆԷՊ-ի պաշտպաններին:[54]

Կենտրոնում ծավալված ներկուսակցական այս լարումների ուղիղ արձագանքը Հայաստանում եղավ Աշոտ Հովհաննիսյանին՝ Կենտկոմի քարտուղարի պաշտոնից հեռացնելը: Նրան մեղադրում էին քաղաքական մի շարք սխալների մեջ, որոնցից էր, օրինակ, թույլ պայքարն ազգայնականության ու տրոցկիզմի, «դաշնակիզմի» ու սպեցիֆիզմի դեմ: 1927-ին բորբոքված պայքարի պայմաններում Հովհաննիսյանը հրաժարվում է զբաղեցրած պաշտոնից: Քիչ ավելի ուշ Հայաստանում քաղաքական ղեկավարության դեմ սկսված այս պայքարն ուղեկցվելու էր նույն ղեկավարությանն աջ-ազգայնական թեքման մեջ դատապարտող մեղադրանքներով:[55] Նման պայմաններում, ինչպես բարձրաձայնում էր 1927-ի *Խորհրդային Հայաստանի* խմբագրականներից մեկը, պահանջվում էր «իդեոլոգիական զենքերի ուժեղ սրում, գաղափարական կրակի ուղղումն դեպի ներկուսակցական հակալենինյան տրամադրություններն ու հոսանքները....»:[56]

1927-ին կուսակցական գաղափարախոսության զենքերը սկսեցին սրվել նաև ճարտարապետության ու կենցաղի ասպարեզում: Նույն տարում կազմակերպված իդեոլոգիական ֆրոնտում աշխատողների առաջին խորհրդակցության ընթացքում Դրաստամատ Տեր-Սիմոնյանի ելույթը թերևս դրա առաջին լուրջ դրսևորումներից է դառնում:[57] Ինքնին հետաքրքրական է, որ «Արվեստի բնագավառում վարելիք մեր քաղաքականության մասին» զեկուցող Տեր-Սիմոնյանի ելույթում ճարտարապետությունը, կենցաղը և ոճը ներկայացվում են իբրև ելույթի մեկ ենթաբաժին: Դրանք միմյանց կողքին դնելու Տեր-Սիմոնյանի քայլը երևան է բերում փոխկապակցված խնդիրների մի թնջուկ, որի գոյացումն իսկ բացահայտում է ճարտարապետության ու կենցաղի խնդիրների հետ քաղաքականության հարաբերման ստալինյան մոտեցումը:

Տեր-Սիմոնյանի գնահատմամբ՝ հայաստանյան քաղաքների ու գյուղերի տները ոչ իրենց քանակով և ոչ էլ որակով չէին կարող բավարարել ազգաբնակչությանը, պետական և հասարակական հաստատություններին ու կազմակերպություններին. «Արդյունագործության զարգացումը խթան ե դառնում քաղաքային հսկայական շինարարության, իսկ գյուղատնտեսության զարգացումը պահանջում ե հին նախակենցաղ գյուղերի կատարյալ վերակառուցում»: Տեր-Սիմոնյանի ելույթի այս կետում ակնհայտ է դառնում, թե ինչպես է ճարտարապետությունն ուղիղ հատվում կենցաղի հետ: Ավելին, հստակ ընդգծվում է, թե ճարտարապետությունն ինչ տեսակ կենցաղի հաղթահարմանն էր կոչված: Հայաստանյան գյուղերը «նախակենցաղ» անվանելը կարծես հատուկ սրում է գյուղերին ու գյուղական կենցաղին տրվող գնահատականը: Այն հայաստանյան գյուղերը հասցնում է «նախակենցաղ»՝ այլ կերպ ասած՝ կենցաղ չունենալու աստիճանի: Սրանով ապահովվում էր մի հայացք, որում հայաստանյան գյուղերում իրենց կենցաղով հանդերձ արժեքավոր ոչինչ չէր մնում: Այդ հայացքն ինքնին մաքրման ու զտման արարք էր ենթադրում: Տեր-Սիմոնյանի՝ հայաստանյան գյուղերը «նախակենցաղ» անվանելը

---

[54] 1927-ի այս դրությունը մեծ հաշվով արդյունքն էր դեռ 1924-ին Լենինի մահից անմիջապես հետո նրա ժառանգության վրա մենիշխանություն հաստատելու Ստալինի փորձի: Իրեն իբրև Լենինի գաղափարների միակ օրինական մեկնաբան ներկայացնող Ստալինի իշխանության ուժը կենտրոնական («լենինյան») դիրքի հետ նույնացումն էր: Դրա արդյունքում էր, որ ներկուսակցական սուր վեճերը մեկնաբանվում էին իբրև կենտրոնի «գլխավոր գծի» պայքար «աջ» կամ «ձախ» թեքումների դեմ: Տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 198:

[55] Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1941 թթ.*, էջ 325-327:

[56] Տե՛ս «Իդեոլոգիական պայքարի ֆրոնտում», *Խորհրդային Հայաստան,* 4 օգոստոսի 1927 թ.:

[57] Տե՛ս «Ընկեր Դրաստամատ Սիմոնյանի զեկուցումը»: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Տեր-Սիմոնյանի ընդարձակ ելույթի առաջին հատվածը տե՛ս «Ընկեր Դրաստամատ Սիմոնյանի զեկուցումը «Արվեստի բնագավառում վարելիք մեր քաղաքականության մասին»», *Խորհրդային Հայաստան,* 7 հոկտեմբերի 1927 թ.:

ենթադրում էր մաքրել գյուղը եղած կենցաղից: Այդ բնորոշումը չէր նշում գյուղի կենցաղի որոշակի բնույթ, այլ դրան տրվող գնահատական էր: Տեր-Սիմոնյանի հայացքում գյուղն այս կերպ զտվում-զրկվում էր իրեն հատուկ կենցաղից: Բայց հայաստանյան գյուղերում ապրվող կյանքի ձևերը, կենցաղն ու վարքուբարքն արժեզրկող այս հայացքը միաժամանակ ստեղծում էր արժեզրկված կենցաղի հակառակ բևեռը: Այդ բևեռում է հայտնվում ճարտարապետությունը, որը փաստացիորեն դառնում է «նախակենցաղ» գյուղի նոր կենցաղը կազմակերպողը: Պատահական չէ, որ Տեր-Սիմոնյանը ճարտարապետությամբ կենցաղի վերակառուցումը բնորոշում է իբրև «կատարյալ վերակառուցում»: Ակնհայտորեն «նախակենցաղ» գյուղի ու այն «կատարյալ» վերակառուցման ենթարկելու կոչված ճարտարապետության միջև խզումը շեշտում է ճարտարապետությանը տրվող գնահատականը՝ այն դարձնելով կյանքի ու կենցաղի վերակառուցմանը կոչված ոլորտ:

Ճարտարապետության ու կենցաղի խնդիրների հատման այս կետում է, որ Տեր-Սիմոնյանը քննարկման առարկա է դարձնում ճարտարապետական ոճի խնդիրը: Մոտիկ ապագայում սպասվող «քաղաքային և գյուղական տների, հասարակական պետական շենքերի կառուցման աննախընթաց ծավալ» ակնկալող Տեր-Սիմոնյանը հարց է բարձրացնում ճարտարապետության հետագա զարգացման մասին. «Ի՞նչ հուն պիտի ստանա կառուցողական արվեստը Հայաստանում»: «Ամեն կողմից լսվող» ձայներին ունկնդիր Տեր-Սիմոնյանն արձանագրում է, թե Հայաստանում տարվող շինարարության մեջ «ընդհանուր սիստեմ» չի եղել, մասնագետ ճարտարապետները կառուցել են այնպիսի շենքեր, որոնք «իրենց հարմարությունների տեսակետից անհամապատասխան են կառուցողական տեխնիկայի նորագույն նվաճումներին» և «իրենց վրա շեշտակի կրում են հին հայկական վոճի կնիքը»:[58] «Մասսաների մեջ» Տեր-Սիմոնյանի հավաստմամբ «սովորական» դարձած այն կարծիքն է ինքը բարձրաձայնում, թե «տների և շենքերի փոխարեն յեկեղեցիներ են կառուցվում թե՝ ռեստավրացիայի յե յեթարկվում հայկական հին ֆեոդալական վոճը»: Ընդ որում, այն, ինչ վճռական է թվում Տեր-Սիմոնյանի ելույթում՝ «մասսաների սովորական կարծիքի» վերաճումն է քաղաքական գնահատականի: Ինքը՝ քաղաքական ոչ երկրորդական պաշտոն զբաղեցնող Տեր-Սիմոնյանը հասարակական կարծիքից դեպի քաղաքական գնահատական անցումը կատարում է պարզ քայլով՝ հաստատելով, որ «այս դիտողություններն իրավացի յեն, քանի վոր իրոք նոր կառուցված տների մեծ մասը վանքերի և ամրոցների տպավորություն ե գործում»:

Այս կերպ, «մասսաների կարծիքը» քննարկման առարկա դարձնող Տեր-Սիմոնյանի հոդվածը բացահայտում է քաղաքական մակարդակ տեղափոխված «հայկական ոճի» քննադատության անկյունը: «Հայկական ոճը» ֆեոդալական համարելը հիմքում դասակարգային այն քննադատությունն էր, որ այսուհետ պետք է դառնար «հայկական ոճը» վերածնողների դեմ ուղղված քաղաքական արշավի հիմնական փաստարկներից մեկը: Ճարտարապետական ոճի ու դասակարգի միջև տարվող այս ուղիղ կապը նշում էր ստալինյան հաստատվող այն դիրքավորումը, որտեղից Տեր-Սիմոնյանը բացահայտ կռվի մեջ է մտնում «հայկական վոճի յերկրպագուների» հետ: Դրանցից առաջինը, Տեր-Սիմոնյանի գնահատմամբ, «հայկական ճարտարապետական վոճի գլխավոր կիրառող» ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանն էր, երկրորդը՝ «հայկական վոճի մի ուրիշ ջատագով», «ինքզինքը արվեստագետ և հնագետ» համարող Աշխարհիբեգ Քալանթարը: Ի

[58] Տեր-Սիմոնյանի գնահատմամբ՝ կառուցված այդ շենքերը չէին բավարարում ոչ միայն աշխատավորության «եստետիքական հասկացողություններին», այլև նրա «առողջապահական և հասարակական կենցաղային պահանջներին». «Լույսի և ոդի պակասություն, տարրական տեխնիքական հարմարությունների բացակայություն, ապրողների կենցաղի ներփակության սահմանում – ահա հայկական վոճով կառուցվող շենքերի տեխնիքական հատկանիշները»:

դեմս Բունիաթյանի ու Քալանթարի «հայկական ոճի յերկրպագուներին» քննադատության թիրախում առնելու առիթը նույն շրջանում *Արվեստ* հանդեսում տպագրված վերջիններիս հոդվածներն էին:[59] Այդ հոդվածներն անշուշտ ինքնին հետաքրքրական են, բայց ուշագրավն առավելապես դրանց դեմ ելնելու Տեր-Սիմոնյանի գաղափարախոսական հիմքերն են: Նպատակային կերպով է Տեր-Սիմոնյանը Քալանթարի հոդվածից մեջբերում այն հատվածը, որտեղ հոդվածագիրն անդրադառնում է «շաբլոն ու անհեթեթ» դարձվածքին, թե «հայկական վոճով ինչ ել շինես յեկեղեցի դուրս կգա»: Բավական կտրուկ կերպով ինքը՝ Քալանթարը, նման մտայնությունը համարում է «ապացույց մտքի ու ճաշակի անճարակության....»:[60] Ուշագրավը սակայն այն է, որ Քալանթարի դրած բաժանարար գիծը «հայկական ոճի» պաշտպանների և այն մերժողների միջև Տեր-Սիմոնյանի համար միաժամանակ դառնում է քաղաքական սահմանագիծ ու նույն այդ բաժանումը Քալանթարի դեմ ուղղելու առիթ.

> Այդ վոճի վերակենդանացման դեմ ե՝ մեր բանվորական մասսան, մեր կուսակցական կազմակերպությունը, դեմ ե մեր իդեոլոգիական խորհրդակցությունը. ուրեմն միտք ու ճաշակ ունի միայն «արվեստագետ-հնագետ» Աշխարհբեգ Քալանթարը, իսկ դրանցից զուրկ ենք մենք .... յեթե վերցնենք նրա «հայ ճարտարապետության գործնական նշանակությունը» վերնագիր կրող հոդվածը դա վոչ թե նրա «մտքի ու ճաշակի ապացոյցն ե, այլ անճարակությունը ....»: Այդ անճարակ մտքից զգալիորեն նացիոնալիստական հոտ ե փչում:

Նացիոնալիզմի մեջ այս մեղադրանքի հիմքը դասակարգային գործոնն էր. վերակենդանացնել ֆեոդալական դարաշրջանի ծնունդ «հայկական ոճը» Տեր-Սիմոնյանի համար նշանակում էր «հայկական ֆեոդալի եստետիկական ըմբռնումներով համակել սոցիալիստական հասարակություն կառուցող դասակարգին»: Ակնհայտ է, որ Տեր-Սիմոնյանը ֆեոդալական ոճի վերականգնման փորձերի քննադատությամբ նույն այդ դասակարգին մաքուր պահելու օրակարգն է պաշտպանում: Միաժամանակ հենց այս կետում է պարզորոշ դառնում, թե սոցիալիստական հասարակություն կառուցող դասակարգին «հայկական ոճից» զերծ պահելու այդ օրակարգն ինչպես է կապվում կենցաղի խնդրի հետ: Տեր-Սիմոնյանը Բունիաթյանի հոդվածից մեջբերում է այն հատվածը, որտեղ վերջինս համոզմունք է հայտնում, թե «հայկական վոճի վերածնությունը կարելի յե իրագործել այժմյան շրջապատող կենցաղի հետ հարմոնիկ միացումով»:[61] Ուրեմն, ֆեոդալական համարվող «հայկական ոճի» և ներկայի՝ սոցիալիստական կենցաղի այդ միացումը նույն դասակարգային խնդրի շրջանակում է ըմբռնվում: Ավելին, դրանք միմյանց կապելու նպատակադրումը դառնում է քաղաքական կոնկրետ՝ աջ-ազգայնական թեքմանը հարելու նշան: Պատահական չէ, որ Տեր-Սիմոնյանի համար «հայկական ոճը» ներկայի կենցաղի հետ ներդաշնակեցնելու փորձը սահմանում է փեղեկումը «մենք ու դուք»-ի. «Նման փորձ կարող են անել մասնագետ ճարտարապետներն ու նացիոնալիստ «հնագետ-արվեստագետները», բայց վոչ մենք: Յեվ ժամանակն ե արդեն, վոր այդ մարդկանց ասենք, թե ձեր փորձերն ապարդյուն են»:[62]

---

[59] Տե՛ս Նիկողայոս Բունիաթյան, «Ժամանակակից ճարտարապետական վոճը յեվ հայկական գեղարվեստը», *Արվեստ,* 1926, թիվ 1-2, էջ 10-11; Աշխարհբեգ Քալանթար, «Հայ ճարտարապետության գործնական նշանակությունը», *Արվեստ,* 1927, թիվ 5-6, էջ 11-12:

[60] Նույնը Քալանթարի հոդվածում տե՛ս Քալանթար, «Հայ ճարտարապետության գործնական նշանակությունը», էջ 11:

[61] Նույնը Բունիաթյանի հոդվածում տե՛ս Բունիաթյան, «Ժամանակակից ճարտարապետական վոճը յեվ հայկական գեղարվեստը», էջ 11:

[62] Նույն խորհրդակցության շրջանակում փիլիսոփա, հասարակական գործիչ Հայկ Գյուլիքեխյանի ելույթը, սակայն, ակնհայտ է դարձնում, որ «հայկական ոճի» շուրջ կարծիքները հենց քաղաքական

Տեր-Սիմոնյանի խոսքերն իրականում ճշմարտություն էին պարունակում: 1920-ականների սկզբին ազգային կոմունիստների նախաձեռնած կենցաղի վերափոխման ծրագրի հաջողումը կապվում էր տևական ժամանակում քաղաքականության չափավոր գործադրության հետ: Այժմ սակայն այդ ժամանակը սպառված էր. «Ժամանակին տեղ տալու ժամանակ չկա»:[63] Այս կերպ, 1920-ականների առաջին կեսին Խորհրդային Հայաստանի առաջին ղեկավար գործիչների ուրվագծած քաղաքական ծրագրի հեռանկարում «հայկական ոճի» ավանդույթը նոր կենցաղի հետ կապելու արվեստագետների փորձն այլևս համարվում էր ապարդյուն և ներկայի պահանջների համեմատ՝ ժամանակավրեպ: Պատահական չէ, որ ո՛չ կենցաղի, ո՛չ ճարտարապետության խնդիրների Տեր-Սիմոնյանի քննարկման մեջ ավանդույթի մասին խոսք այլևս չկա:[64] Անցյալի ճարտարապետությունը միանշանակորեն ֆեոդալական համարելը հավակնում էր չեզոքացնել ավանդույթի շուրջ հնարավոր խոսակցությունները: Տեր-Սիմոնյանը մի կողմից հայկական գյուղերը համարում էր «նախակենցաղ», մյուս կողմից՝ ճարտարապետներից պահանջում վերջ տալ «հայկական վոճի անշնորհք ընդորինակմանը»: Այս կերպ, ինչպես գյուղն էր Տեր-Սիմոնյանի մոտեցմամբ զրկվում իր կենցաղից՝ «նախակենցաղ» համարվելու փաստարկով, այնպես էլ նոր կենցաղ ստեղծելուն կոչված ճարտարապետությունն է զրկվում ավանդույթից՝ անպետք ընդօրինակում համարվելու փաստարկով:[65] Այս տրամաբանությամբ գյուղի՝ որքան էլ թերզարգացած, բայց եղած կենցաղի գոյության անտեսումը նշանակում էր «մաքուր» տեղ տալ ճարտարապետությանը, որտեղ վերջինս սոցիալիզմ կառուցող հասարակությանը դասակարգայնորեն հարիր ոճով պետք է կազմակերպեր «մաքուր» նոր կյանք ու կենցաղ:

Ճարտարապետության «այնքան ակտուալ» խնդիրները

1927-ին քաղաքական մակարդակում ճարտարապետության ու կենցաղի մասին հնչած այս գնահատականների լույսի ներքո ուշագրավ է դառնում փաստը, որ Դրաստամատ Տեր-Սիմոնյանի ելույթին *Խորհրդային Հայաստան* թերթի նույն էջում հաջորդում է Միքայել Մազմանյանի «Շինարարական խնդիրներ» վերնագրով հոդվածը:[66] Այն էապես վեր է

խորհրդակցության մակարդակում տարամիտված էին: Գյուլիքեխյանն իր հերթին, հակառակ Տեր-Սիմոնյանի, նշում էր. «Այստեղ շատ խոսվեց միջնադարյան հայկական վոճի մասին: Մեր շինարարության մեջ յես նմանորինակ սիստեմի վերածված տենդենց չեմ գտնում: Մասնավոր սխալներ անշուշտ յեղել են: Բայց ամենախոշոր սխալը կլիներ, յեթե ասեյինք, վոր կոյլտիմանացիայի [կոնտամինացիայի] ե յենթարկվում Նարեկացու Բագրատունյաց շրջանի ստիլը»: Տե՛ս «Ընկեր Հայկ Գյուլի-քեխյանի յեզրափակման խոսքը», *Խորհրդային Հայաստան,* 29 սեպտեմբերի 1927 թ.:

[63] Տե՛ս Ազատյան, «Ժամկետն ընդդեմ ժամանակի»: Ժամանակի ստալինյան զգացողության ու ըմբռնողության մասին Մոշե Լևինն ուշագրավ դիտարկում է անում. «Ամբողջ հեղաշրջման մեջ հրատապության զգացողությունն ապշեցնող է. պարտադրված տեմպը ժամանակի դեմ մրցավազք է ենթադրում, ասես երկրի ճակատագրի համար պատասխանատուները զգում էին, թե պատմությունը սպառվում է»: Տե՛ս Moshe Lewin, «Society, State, and Ideology during the First Five-Year Plan», ըստ՝ *Cultural Revolution in Russia,* էջ 41:

[64] Շեյլա Ֆիցպատրիկը ՆԷՊ-ի ու ստալինյան քաղաքականությունները տարբերակում է իբրև «փափուկ գիծ» և «կոշտ գիծ»: Ֆիցպատրիկը մասնավորեցնում է. «.... Կոշտ գիծը՝ կոմսնապարծության և մասնագետակերության [спецеедство] գիծը, խտրական էր և հարկադիր, ժառանգված մշակութային ավանդույթին անտեղյակ կամ դրա հանդեպ արհամարհական: Այն խանդավառված էր «պրոլետարական մշակույթով» ու հատկապես պրոլետարական մշակութային հիմնարկությունների գերիշխմամբ և հարաբերականորեն անտարբեր էր պետության այն կարիքների նկատմամբ, որոնք կապված էին տեխնիկական մասնագետների ծառայությունների հետ»: Տե՛ս Fitzpatrick, *The Cultural Front,* էջ 94:

[65] Թեև Բունիաթյանն ինքը քննադատում է պատմական ոճերը «անմտորեն ընդորինակելու սկզբունքը»՝ շեշտելով, որ «գեղարվեստի ամեն մի արտադրություն, մանավանդ ճարտարապետության մեջ, պետք ե հարմարվի եպոխայի պահանջներին, արտացոլելով իր մեջ ժամանակակից կյանքի ռիթմը», այնուամենայնիվ Տեր-Սիմոնյանը դրան առանձնակի ուշ չի դարձնում: Տե՛ս Բունիաթյան, «Ժամանակակից ճարտարապետական վոճը յեվ հայկական գեղարվեստը», էջ 10:

[66] Մ. Մազմանյան, «Շինարարական խնդիրներ», *Խորհրդային Հայաստան,* 12 հոկտեմբերի 1927 թ.: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

հանում Տեր-Սիմոնյանի ճարտարապետության, կենցաղի ու ոճի խնդիրների բերումով հնչեցրած քաղաքական գնահատականների մուտքը բուն ճարտարապետության դաշտ: Միաժամանակ Մազմանյանի հոդվածը պարզորոշում է, թե ինչպես էին իրենք՝ ճարտարապետները ստանձնում կյանքն ու կենցաղը վերակառուցելու քաղաքականապես իրենց վերապահված դերը:

Ինչպես Տեր-Սիմոնյանը, Մազմանյանը նույնպես մոտ ապագայում «աննախընթաց չափերի» շինարարության ակնկալիքով է խնդիրներին «ավելի լուրջ մոտենալու» պահանջ առաջադրում: Այդ պահանջը վերաբերում էր ինչպես «կազմակերպչական-տեխնիքական», այնպես էլ «սոցիալ-կենցաղային» ու «ճարտարապետական-ֆորմալ հարցերին»: Նշել է պետք, որ ճարտարապետության ու կենցաղի խնդիրներին Մազմանյանի անդրադարձն ընդհանուր դրույթների ձևով է շարադրված և միայն ուրվագծում է կենցաղի վերակազմակերպման այն տեսլականը, որ երիտասարդ ճարտարապետները, այդ թվում և ինքը՝ Մազմանյանը շուտով դարձնելու էին ճարտարապետական գործնական խնդիր:[67]

Մազմանյանի՝ սոցիալ-կենցաղային խնդիրների քննարկման հիմքում հասարակական-տնտեսական կյանքն է, որը ճարտարապետությանը թելադրում էր «միանգամայն նոր խնդիրներ և պահանջում համապատասխան ֆորմաներ»: Ճարտարապետության այդ նոր խնդիրները բարձրաձայնելիս Մազմանյանն առաջ է քաշում պարզ հակադրություն՝ թե վանքերի ու ամրոցների փոխարեն պետք է կառուցել գործարաններ, աշխատանքի պալատներ, բանվորական ակումբներ: Ակնհայտ է, որ միջնադարյան և արդի ճարտարապետական կառույցների տեսակների միջև այս հակադրության հիմքում, ինչպես Սարգսյանի ու Տեր-Սիմոնյանի, այնպես էլ Մազմանյանի դեպքում դասակարգային ուղիղ հակադրության սկզբունքն է ընկած: Նույն այդ սկզբունքն է գործադրվում նաև նոր կենցաղի խնդիրների պարագայում, որոնք ուղղակիորեն կապված էին բնակարանային շինարարության հետ. «Այլևս անհնարին ե ոգտագործել հին, ցարական շրջանի բնակարանները, վորոնք շինվում եյին զուտ շահադիտական նպատակներով, հակաառողջապահական և զորանոցային վոճով»: Մազմանյանի այս քննադատությունը, սակայն, ուղղված չէր միայն անցյալի շինարարությանը. «Պետք ե արձանագրել, վոր մեր նորակառույց բնակարանների մեծ տոկոսն իր հիմքում ունի այդ շենքերի հատակագիծը»: Այս կերպ պարզ է, որ անցյալի ու ներկայի ճարտարապետությունների հակադրությունը պայմանավորող դասակարգային պայքարի սկզբունքից ելնելով, Մազմանյանի համար ևս խնդրահարույց է դառնում ներկայում

[67] Նշել է պետք, որ մինչև 1920-ականների երկրորդ կեսը երիտասարդ ավանգարդիստների գաղափարական ու գեղագիտական հայացքները բացահայտող մի անկյուն է տրամադրում վերջիններիս կատարած գրքերի կոնստրուկտիվիստական ձևավորումները: Դրանց է նվիրված Հասմիկ Թանգյանի հետազոտական աշխատանքը: Տե՛ս Հասմիկ Թանգյան, *Հայ գրքի կոնստրուկտիվիստական ձևավորումները 1920-ական թթ.. Միքայել Մազմանյան, Կարո Հալաբյան, Գևորգ Քոչար,* մագիստրոսական թեզ (Երևան: Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, 2014): Նկարիչ-ճարտարապետների արդեն իսկ հստակ ձևակերպված ավանգարդիստական դիրքորոշումներն առաջադրող դեկլարացիա պետք է համարել 1924-ին Եղիշե Չարենցի հետ միասին Միքայել Մազմանյանի ու Կարո Հալաբյանի հրատարակած Standard ամսագիրը, որտեղ վերջիններս արդեն քննադատում էին «հին վոճերի», այդ թվում «հայկական ոճի» վերստեղծման փորձերը: Տե՛ս «,,Ստանդարտի,, կուրսը», *Standard*, 1924, թիվ 1, էջ 2: Standard-ին անդրադարձող քննարկումների համար տե՛ս Սուրեն Աղաբաբյան, *Եղիշե Չարենց,* գ. 1 (Երևան: Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1973), էջ 329-350; Դավիթ Գասպարյան, *Եղիշե Չարենցը և 1920-ական թվականների սովետահայ պոեզիան* (Երևան: Հայկ. ՍՍՀ ԳԱԱ, 1983), էջ 156-161; Գրիգոր Պըլտեան, *Հայկական ֆուտուրիզմ* (Երևան: Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, 2009), էջ 390-439; Վարդան Ազատյան, «Հայկական ֆուտուրիզմը Հայաստանում», մաս 1, https://bit.ly/3vdU4IC, այց՝ 25 դեկտեմբերի 2022 թ.; Սիրանուշ Դվոյան, «Հայկական ֆուտուրիզմը Հայաստանում», մաս 2, https://bit.ly/3vhHHva, այց՝ 25 դեկտեմբերի 2022 թ.; Մարկ Նշանեան, «Չարենց և յեղափոխութիւնը», *Կամ,* 2015, թիվ 6, էջ 79-123; Աշոտ Ոսկանյան, *Չարենցի ժամանակը* (Երևան: Փրինտինֆո, Ակտուալ արվեստ, 2017), էջ 65-91, նաև Արթուր Ավագյան, «“Standard”: О судьбе некоторых эстетических концепции в армянской художественной жизни 1920-х годов», ըստ՝ *Արվեստագիտություն. հոդվածների ժողովածու,* գ. 1 (Երևան: Գիտություն, 1998), էջ 121-135:

անցյալի ճարտարապետական մեթոդներով շենքերի կառուցումը: Ի վերջո դրանցից հրաժարման, ներկայի ու անցյալի ճարտարապետական սկզբունքները հստակորեն միմյանցից զատելու օրակարգի շրջանակում է Մազմանյանն առաջադրում կոմունա-տների գաղափարը: Դրանք կոլեկտիվ կենցաղավարության ու կոլեկտիվ պրակտիկաների իրացման հեղափոխական նախագծի մարմնավորումն էին:[68] Ուրեմն, անցյալի՝ դասակարգայնորեն ներկայի պահանջներին չհամապատասխանող ճարտարապետական ձևերի քննադատությունը Մազմանյանի պարագայում ուղղակիորեն կապվում էր նոր կենցաղի առաջադրած «կոլլեկտիվիստական աշխարհայեցողության» հետ.

> Անհրաժեշտ է կազմել վոչ միայն առանձին տների (վորպես միավորի) նախագիծը, այլև այն դիտել վորպես մի ամբողջ հողամասի (կվարտալի) մի բջիջը, հողամաս, վոր ունի իր ներքին կազմությունը, իր ճաշարանը, ընթերցարանը, բաղնիքը, մանկական մսուրը, պարտեզը և այլն: Յուրաքանչյուր ընտանիք առանձնացած լինելով հանդերձ՝ հնարավորություն ունի շփվելու մյուս բնակիչների հետ:[69]

Այս «բարդ», բայց միաժամանակ «անհրաժեշտ ու հրատապ» խնդրի լուծումն էր պահանջվում, ըստ Մազմանյանի, ճարտարապետությունից՝ «վորպես անհրաժեշտ մի քայլ՝ նոր կենցաղը կազմակերպելու գործում»:

Սոցիալ-կենցաղային խնդիրների քննարկումը թեև ավելի տեսանելի է դարձնում Մազմանյանի նեղ մասնագիտական մոտեցումը՝ ի դեմս առաջ քաշված կոմունա-տան գաղափարի, բայց այդ գաղափարը հաստատող դասակարգային պարզ հակադրության սկզբունքն է, որ Մազմանյանը կիսում է թե՛ Սարգսյանի, թե՛ Տեր-Սիմոնյանի հետ: Նույն

---

[68] Կենցաղի վերափոխման ծրագրի առաջնահերթություններից էր անհատական կենցաղի փոխարեն կենցաղի կազմակերպման կոլեկտիվ սկզբունքների կենսագործումը: Կենցաղի կոլեկտիվացմանն էր ուղղված նաև Մազմանյանի հիշատակած կոմունա-տների կառուցումը: Կոմունա-տներում վերափոխվող կենցաղի ամենաարմատական տարբերակներից էր առաջարկում, օրինակ, Նիկոլայ Կուզմինը: Վերջինիս «ուտոպիական» նախագծի քննարկումը, տե՛ս, օրինակ, Richard Stites, *Revolutionary Dreams: Utopian Vision and Experimental Life in the Russian Revolution* (New York, Oxford: Oxford University Press, 1989), էջ 200-204; Кинга Нендза-Щиконовска, «Частное — значит политическое. Утопия дома-коммуны Николая Кузьмина и современный ей дискурс коллективизации приватного», https://bit.ly/3V6Y5Kg, այց 3 հոկտեմբերի 2022 թ.: Կոմունա-տների ու դրանցում կազմակերպվող կենցաղի օրինակներ են ներկայացնում 1930-ին Մոսկվայում լույս տեսած *Սոցիալիզմի քաղաքները և կենցաղի սոցիալիստական վերակառուցումը* ժողովածուում (Б. Лунин (խմբ.), *Города социализма и социалистическая реконструкция быта: сборник статей* (Москва: Работник просвещения, 1930)) ներառված հոդվածներից շատերը: Տե՛ս, օրինակ, Арх. Пастернак, «Проблема дома-коммуны», էջ134-136; «Дом коллектива», էջ 137-138; П. Голубков, «В новом доме», էջ 139-140; «Инструкция о заселении дома-коммуны», էջ 141-142: Կոմունա-տների մասին տե՛ս, օրինակ, Stites, *Revolutionary Dreams*, էջ 205-222: 1927-ին է, որ ՌԽՖՍՀ Տնտեսական խորհրդակցությունն ընդունեց հատուկ որոշում տների այնպիսի տիպի կառուցման նպատակահարմարության մասին, որոնցում կկիրառվեր «օժանդակ տարածքների (խոհանոցների, ճաշարանների, բաղնիքների, լվացքատների և այլն) կոլեկտիվ օգտագործման» սկզբունքը: Այս որոշման մասին քննարկում տե՛ս, օրինակ, Дмитрий Хмельницкий, «Легенда о соцгородах», https://bit.ly/3V6PXtt, այց՝ 3 հոկտեմբերի 2022 թ.: Ինքնին հետազոտական հետաքրքրական նյութ ներկայացնող Հայաստանում կոլեկտիվ տնտեսության ու կենցաղի անցնելու թերևս առաջին դեպքի մասին, տե՛ս Արմեն, «Այց Լուկաշենին», *Խորհրդային Հայաստան,* 24 մարտի 1926 թ., նաև «Լուկաշեն», *Հ.Խ.Ս.Հ. Հայանդրհեռգործի փոստային ինֆորմացիոն բյուլլետեն*, 1926, թիվ 1, էջ 7-8:

[69] Այն, թե ինչպես էին երիտասարդ ճարտարապետները տեսնում նոր ճարտարապետությամբ ընտանիքի վերափոխվող կենցաղը, կարելի է դատել Հովհաննես Մարգարյանի հոդվածից. «Նոր կառուցվող բնակարաններից իսպառ պետք է վերացնել ընտանիքի հոգսի հիմքը.... խոհանոցը, փոխարինելով.... ելեկտրականացված մի անկյունով»: Անհրաժեշտ էր «պարզ, թեթև ու ծալվող կահ-կարասիքի ու շարժական միջնորմների (перегородки) գործադրումը, անշարժ կարասիքի (որ. պահարանների) տեղավորումը պատերի մեջ կամ դրանցից միջնորմ կազմելը: Այս հանգամանքը մի կողմից նպաստելով բնակարանի սանիտարական դրությանը, ազատելով նրան փոշու բներից, մյուս կողմից հնարավորություն է ընձեռնում միևնույն տարածությունը մի քանի անգամ մի քանի կերպ ոգտագործելու»: Տե՛ս Ովիկ Մարգարյան, «Ճարտարապետական շինարարության խնդիրներից (Մտքերի փոխանակության կարգով)», *Խորհրդային Հայաստան*, 8 հուլիսի 1928 թ.: Սակայն այս նոր կենցաղը գործնականում կյանքի կոչելու դժվարությունների մասին էր խոսում, օրինակ, կուսակցական գործիչ Աբրամ Գոլցմանի ինքնին դժվար իրագործելի առաջարկը՝ «կենցաղային սպասարկմանն ուղղված տնտեսական գործունեությունը վերածել արդյունաբերության»: Տե՛ս А. Гольцман, «Социалистическая перестройка быта», ըստ՝ *Города социализма*, էջ 39-44:

այդ սկզբունքն է, որ վերջիններիս հետ գրեթե նույնական դիրքորոշման կրող է դարձնում Մազմանյանին նաև ճարտարապետության ձևային հարցերի դեպքում: «Հայկական ոճ» ձևակերպում որպես այդպիսին Մազմանյանի հոդվածում չկա: Սակայն «շինարարական առաջավոր տեխնիկայի» բերած ճարտարապետական նոր ձևերի պաշտպանությամբ Մազմանյանը քննադատում է ըստ էության «հայկական ոճը» բյուրեղացնող նկարագիրը՝ «դարերի ընթացքում կաղապարված ու շտամպ դարձած յեկեղեցական, պալատական և այլ ֆունկցիաներ արտահայտող ֆորմաները», որոնց մեջ, ըստ Մազմանյանի, «չի կարելի տեղավորել ժամանակակից բովանդակություն»: Ժամանակակից բովանդակությունն անխառն, մաքուր պահելու, անցյալի ֆեոդալական, կղերական ճարտարապետության ձևերից այն զերծ պահելու օրակարգից ելնելով պետք է հասկանալ Մազմանյանի պնդումը, թե «միանգամայն աննպատակ ե .... բոլոր հին վոճերի ռեստավրացիան»: Նորագույն ճարտարապետությունը, Մազմանյանի սահմանմամբ, ընթանում էր ֆունկցիոնալ և ռացիոնալ ուղիներով.[70]

> Առանց պաճուճանքների ու զարդերի, հիմնվելով պարզ յերկրաչափական ձևերի ջինջ տպավորության վրա՝ տալ այդ ֆորմաների ներդաշնակ պրոպորցիաներն ու հարաբերությունները՝ շենքի ֆունկցիան պարզ դարձնելու դիտավորությամբ: Տեսողական եներգիայի ժլատ վատնումով հասնել եստետիքական ցանկալի հետևանքների – ահա նորագույն ճարտարապետության պահանջն ամեն մի շենքի արտաքին կազմության նկատմամբ:[71]

Պարզ կերպով նորագույն ճարտարապետության տեսլականով տոգորված երիտասարդ ճարտարապետներն էին, որ միաժամանակ ստանձնեցին կենցաղը վերափոխելու ճարտարապետներին տրված քաղաքական նոր դերակատարումը:[72] Մազմանյանն ինքը հաստատում էր, որ «ճարտարապետությունն արվեստներից ամենակենսականն ե, անմիջապես կապված կյանքին, նոր կազմակերպվող կենցաղին»:[73] Կյանքն ու կենցաղը կազմակերպելուն կոչված ճարտարապետության «այնքան ակտուալ» խնդիրները, որոնք ակնհայտորեն բացվում էին դասակարգային պայքարի սրման ստալինյան սկզբունքի

---

[70] Նույնպիսի դիրքորոշում էր արտահայտում նաև Տեր-Սիմոնյանը: Վերջինիս համոզմամբ ճարտարապետները պետք է առաջնորդվեին «նորագույն ռացիոնալ արխիտեկտուրայի սկզբունքներով»: Տե՛ս «Ընկեր Դրաստամատ Սիմոնյանի զեկուցումը»:

[71] Նոր ճարտարապետությունը նույն կերպ էր ներկայացնում նաև Արա Սարգսյանը. «Հետ-հեղափոխության ճարտարապետությունը կարիք չունի քանդակագործության ոժանդակության, նա ամենապարզ, հասարակ ձևերով, հիմնված զուտ յերկրաչափական որենքների վրա, պիտի ծառայի ամենանվազ վատնումով՝ մակսիմալ նպատակին»: Տե՛ս Սարգսյան, «Քանդակագործության զարգացման ուղիները մեզանում», էջ 10: Նույն կարծիքին էր նաև Մարգարյանը. «Գեղարվեստական մոմենտն.... պետք ե գտնել մասերի ուտիլիտար-կոնստրուկտիվ դասավորումով»: Տե՛ս Մարգարյան, «Ճարտարապետական շինարարության խնդիրներից»:

[72] Երիտասարդ ճարտարապետների նորագույն ճարտարապետության այս տեսլականն ուղղակիորեն կապված էր արևմտյան արդիական ճարտարապետության, դրան հատուկ տեխնիկայով, մեքենայացմամբ ու ստանդարտացմամբ ոգևորվածության հետ: Այդ ոգևորվածությունը հատկապես երևում է Գևորգ Քոչարի հոդվածում, որը նա գրել էր Գերմանիայում կայացած «բնակարանային շինարարության կուլտուրայի ցուցահանդես» այցից հետո: Տե՛ս Գևորգ Քոչար, «Արևմուտքի ճարտարապետական տեխնիկայից (Մի ամիս Գերմանիայում)», *Խորհրդային Հայաստան,* 29 հունվարի 1928 թ.: Նույն ոգևորությամբ երիտասարդ ճարտարապետները քննադատում էին հայաստանյան ճարտարապետությանը հատուկ «պապենական կառուցողական պրիոմները»: Տե՛ս Կարո Հալաբյան, «Շինարարական խնդիրները», *Խորհրդային Հայաստան*, 24 հունիսի 1928 թ., նաև Մարգարյան, «Ճարտարապետական շինարարության խնդիրներից»: Եվրոպական մոդեռնիզմով և հատկապես գերմանական բաուհաուզով երիտասարդ ավանգարդիստների տարվածության մասին են նշում, օրինակ, Ռուբեն Արևշատյանն ու Վարդան Ազատյանը: Տե՛ս «Վերնատուն. Ռուբեն Արևշատյան 17.07.2019», https://bit.ly/3Va3tMP, այց՝ 31 հոկտեմբերի 2022 թ.; Ազատյան, «Մարտահրավերը», https://bit.ly/3V4EtXn:

[73] Ինչպես նշում է Ռիչարդ Սթայթը՝ «Ռուսական հեղափոխության մեջ ճարտարապետներն ու քաղաքաշինարարներն ամբողջ ազգը վերածնելու, կառուցվածքներն (structures) ու հակա-կառուցվածքները (anti-structures) սրընթաց տնտեսական զարգացման ծրագրերին հավասարեցնելու, մարդկանց նոր, սոցիալիստական ռասա դաստիարակելու համար «սոցիալական կոնդենսատորներ» ապահովելու տեսլականներ ունեին»: Տե՛ս Stites, *Revolutionary Dreams,* էջ 190:

կենսագործման լույսի ներքո, Մազմանյանի ըմբռնմամբ, շուտափույթ լուծում էին պահանջում տնտեսական մարմիններից ու հասարակությունից:

Շուտափույթ լուծումները երկար սպասեցնել չտվին: 1928-ի քաղաքական, տնտեսական վճռական բեկումներն իրենց կնիքը շուտով պետք է դնեին նաև կենցաղի ու ճարտարապետության «այնքան ակտուալ» հարցերի վրա:

Մաս 2

«Ճարտարապետական ֆորմայի հարցերը – իդեոլոգիայի հարցերն են»

«Հայկական վո՞ճ, թե...»

1928-ի հուլիսին կայանում է Հայաստանի կոմունիստական կուսակցության IV պլենումը: Պլենումում զեկույցով հանդես է գալիս կուսակցության Կենտրոնական կոմիտեի քարտուղար Հայկազ Կոստանյանը:[74] Հետաքրքրականորեն վերջինիս զեկույցում տնտեսական խնդիրներին անդրադարձող հատվածում առանձին ենթաբաժիններ են կազմում բնակարանային շինարարության և «Հայկական վո՞ճ, թե...» ինքնին ուշագրավ վերտառությամբ հատվածները: Բնակարանային շինարարության ու «հայկական ոճի» խնդիրներին Կոստանյանի անդրադարձի մեկնակետը տնտեսական ասպեկտն էր. տների կառուցման վրա, ըստ Կոստանյանի, խոշոր գումարներ էին ծախսվում, իսկ այդ տներն իրենց որակով «ամեն քննադատությունից ցածր» էին: Տարվող շինարարության տնտեսական ասպեկտի քննադատությանն է, որ Կոստանյանն ուղիղ կապում է կենցաղի ու ոճի խնդիրը.

> Մենք պետք ե մի անգամ ընդմիշտ դնենք այդ գործի կարգավորման խնդիրը: Պետք ե, նախ և առաջ, ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների վրա. այդ գործի կազմակերպումը, տեխնիկական շինարարական մասը, այդ շինարարությունը մեր կենցաղին համակերպելը, և վերջապես, ձեզ բոլորիդ հայտնի, չարաբաստիկ վոճը, այսինքն ճարտարապետական ձևը:

Կոստանյանը ծառացած խնդիրը հստակ է ձևակերպում. «Մենք նոր կենցաղի խնդիր ենք դնում....»: Բայց ակնհայտորեն Կոստանյանի համար նոր կենցաղի խնդիրը բախվում ու ուղղակիորեն կապվում էր ոճի խնդրին. «Մենք.... ճամբարներ ենք կառուցում մեր պիոներների համար, բայց դրա հետ միասին կառուցում ենք այնպիսի նեղ բակեր և այնպիսի փոքրիկ սենյակներ, վորտեղ յերեխան կխեղդվի: Այդպես ենք կառուցում հատկապես հանուն «վոճի»»: Առհասարակ բնակարանային խնդրի քննարկման Կոստանյանի ելակետն այն է, որ «կենցաղի մեջ ինչ վոր նորություն» է մտնում: Ուրեմն և այդ նորությունն էր, որ կանխվում էր կոնկրետ ճարտարապետական ոճի կիրառմամբ: Այս հակադրությունը միաժամանակ սուր պատմական երանգ է ստանում, երբ Կոստանյանը

[74] «Ընկեր Հայկազ Կոստանյանի զեկուցումը ՀԿ(բ)Կ ԿԿ 4-րդ պլենումում», *Խորհրդային Հայաստան,* 15 հուլիսի 1928 թ.: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

պատկերավոր ձևով նշում է այն հարուցող տարբերությունը. «Չե՞ որ վերջապես, տարբերություն կա հինգերորդ դարի և մեր դարաշրջանի միջև»:

Հինգերորդ դարի ու ներկա ժամանակի միջև քաղաքականապես ամրագրվող այս խզումը ճանապարհ է բացում հասկանալու, թե Կոստանյանն ինչպես էր ըմբռնում ոճի խնդիրն ու ըստ այդմ այն կապը, որ գոյանում էր ոճի և նոր հաստատվող կենցաղի միջև: Կոստանյանի ելույթի առանցքում ևս «հայկական ոճն» է: Սակայն ուշագրավն այն է, որ ոչ միայն ինքնին այդ ոճն է դառնում քննադատության առարկա, այլև վիճարկվում է դրա բուն իմաստը.

> Յես ձեզ հավատացնում եմ, վոր մեզանից վոչ վոք դեմ չե հայկական վոճին: Բայց մեզ ցույց տվեք այդ հայկական վոճը: Մեզանում կառուցում են հինավուրց ինչ վոր այլանդակ պալատներ, ինչ վոր հռոմեական կոլիզեյներ, բայց ասում են, թե սա հայկական վոճ ե.... Այդ կառուցումների մեջ վոչ մի հայկական վոճ չկա, այլ, մեղմ արտահայտված՝ կա յեկեղեցական, ֆեոդալական, միջնադարյան վոճ:

Ակնհայտորեն Կոստանյանի խոսքում «հայկական ոճը» չի նույնացվում եկեղեցական, ֆեոդալական, միջնադարյան ոճի հետ: Կոստանյանի այս տարբերակումն ուրեմն «հայկական ոճի» ենթադրյալ պաշտպանություն է ընդդեմ այդ ոճի, որի կիրառման համար Կենտկոմի քարտուղարը պատասխանատուներ է փնտրում.

> Ինչո՞ւ յեն մեր վզին փաթաթում այդ վոճը: Ո՞վ ե իրավունք տվել նոր դեր ունեցող մեր նոր շենքերին, հին, վաղուց անցած ժամանակների հնամաշ զգեստ հագցնել և այդ վոճը հրամցնել մեզ վորպես ազգային, հայկական, ժամանակակից մի վոճ:

Գրեթե ուղղակիորեն Սարյանի՝ խորհրդային ճարտարապետական նոր ոճի չափանիշները կրկնելով՝ այժմ այդ չափանիշներին համապատասխանող ոճը Կոստանյանը որակում էր իբրև եկեղեցական, ֆեոդալական ու միջնադարյան: «Հայկական ոճը» այս որակումներից մաքրելու Կոստանյանի արարքը կենսագործում է դասակարգային պայքարի սրման սկզբունքները: «Հին, վաղուց անցած ժամանակների» ճարտարապետությունը մի ավանդույթ էր, որից պետք էր կտրել ազգային, հայկական, ժամանակակից ոճը: Պատահական չէ, որ դասակարգայնորեն մաքուր ճարտարապետական ոճի համար կռիվ տալով Կոստանյանը նաև մեկ այլ հակադրություն է առաջադրում: Նա «հայկական ոճը» հակադրում է «պրոլետարական ոճին»՝ հաստատակամորեն բռնելով երկրորդի կողմը. «Մենք ունենք մեր խորհրդային պրոլետարական գեղեցկությունը: Այդ գեղեցկության նվազագույնն ե հանդիսանում այն ամենը, ինչ հարմար ե, պարզ, առողջ, գործնական, առողջապահական, կոլլեկտիվիստական և այլն»: Նորագույն տեխնիկա, շենքի ֆունկցիոնալ հատկություններ. սրանք են այն առաջնահերթությունները, որոնք Կոստանյանը սահմանում է նոր ճարտարապետության համար, մինչդեռ իր համոզմամբ «մեր կառուցողները վերցնում են հինգերորդ դարի, վոսկե դարի զգեստը, հագցնում են ինդուստրիալ դարին և մեզ ասում են, թե դա հայկական վոճ ե»:

1928-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության քարտուղարի այս ելույթը ցույց է տալիս կենցաղի ու ճարտարապետության խնդիրների հանդեպ քաղաքական մոտեցման սրացումը: Այս կամ այն ոճի կիրառումը դարձել էր իրավունքի հարց, որից ակնհայտորեն Կոստանյանի ղեկավարությունը զրկում էր «հայկական ոճի» պաշտպաններին: Ի վերջո, Կոստանյանի այս դիրքորոշումն ամրակայում էր հենց հայտարարված դասակարգային պայքարի սրման սկզբունքը: Ստալինյան քաղաքական տրամաբանությամբ էր պատմական ժամանակը դառնում պայմանական. «հայկական ոճն» ու դրա արդյունքում

ձևավորված կենցաղը պայմանականորեն ու ուղիղ կերպով կապվում էին 5-րդ դարի հետ, իսկ ներկան՝ ինդուստրիալ դարը, հայտնվում էր նրա հետ պարզ հակադրության մեջ: Պատմական ժամանակի այս պայմանականացումը ժամանակի հետ հարաբերման ստալինյան քաղաքական մոտեցումն էր, երբ քաղաքականությունն ինքը դեմ է ելնում պատմականությանը: Քաղաքական հռետորաբանության ուժով ներկայի խնդիրներին լուծում գտնելու պահանջը սրվում է այնքան, որ ներկան ինքնին կորցնում է իր պատմականությունը, իսկ անցյալը կարծես դառնում է նշան՝ հղելով ընդհանրական, պայմանական պատմական մի պատկերի: Կենցաղի խնդիրը հայտնվում է այս պայմանական անցյալի ու պայմանական ներկայի արանքում՝ դառնալով մի տեղ, որտեղ քաղաքական նախագծի համաձայն «ինչ վոր նորություն» էր մտնում:

Քաղաքական մակարդակում այդ նորությունը կենցաղ բերելու հավակնություն ունեցողը նույն Հայկազ Կոստանյանի գլխավորությամբ Հայաստանում իշխանության անցած նոր ղեկավարությունն էր: 1928-ին հաստատված այդ նոր ղեկավարությունը նորություն բերում էր ոչ միայն կենցաղում, այլ նախևառաջ քաղաքական դաշտում: Նույն հուլիսյան պլենումում էր, որ կուսակցական նոր վերնախավը հրապարակայնորեն իրեն կոչված հռչակեց ուղղելու հին ղեկավարության թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ իդեոլոգիական ճակատներում «գործած սխալները»:[75] Քննադատելով նախկին ղեկավարությանը՝ պլենումը նրա գործունեության մեջ տեսնում էր սխալներ, որոնք, ոչ ավել, ոչ պակաս հանգեցրել էին «բալշևիկական լենինյան գծի աղավաղմանը և դեպի «ուկլոնիզմ» և ազգայնության ռելսերը շեղվելուն»:[76] Նախկին ղեկավարության հանդեպ քաղաքական գնահատականը 1928-ին արդեն հնչում էր քաղաքական ամենաբարձր ամբիոնից.

> Մեր կազմակերպության նախկին ղեկավարության ամենահիմնական սխալը յեղել ե այն, վոր նա թերագնահատել ե ազգայնական տրամադրությունների աճման վտանգը մեր յերկրում.... Կենտկոմի վերջին պլենումն արձանագրելով նախկին ղեկավարության մեջ նկատվող ազգայնական թեքումի տենդենցները.... մատնանշեց նացիոնալիստական տենդենցների և բուրժուական դաշնակցական ազգայնականության դեմ անխնա հետեվողական բայլշևիկյան պայքար մղելու անհրաժեշտությունը:[77]

Ազգայնական թեքումների մեջ մեղադրվող նախկին կառավարության սխալները մատնացույց էին արվում նաև շինարարության մեջ, որն իր հերթին առաջ էր քաշում կենցաղում թույլ տված թերացումները.

> Իդեոլոգիական աշխատանքներում նկատվող ազգայնական սայթաքումները չեյին կարող չանդրադառնալ մեր շինարարության վրա, այդ նկատելի յե նամանավանդ մեր բնակարանային շինարարության մեջ, վորտեղ նոր պրոլետարական կենցաղի ներկա պահանջները տեղի յեն տվել ազգային ռոմանտիզմին և միջնադարյան կոնսերվատիզմին:

Հուլիսյան պլենումի ընթացքում նախկին կառավարությանն աջ ազգայնականության մեջ մեղադրելն այս կերպ բացահայտ է դարձում, թե իրապես ինչ էր նշանակում ճարտարապետական ոճը եկեղեցական, ֆեոդալական, միջնադարյան անվանելն ու

---

[75] «Հ.Կ.(բ.) Կ. պլենումը», *Խորհրդային Հայաստան,* 3 հուլիսի 1928 թ.:
[76] «Հ.Կ.(բ.) Կ. պլենումը»:
[77] «ՀԿ (բ.) Կ Կենտկոմի չորրորդ պլենումի արդյունքները», *Խորհրդային Հայաստան,* 5 հուլիսի 1928 թ.: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

կենցաղում դրա դրսևորումներն իբրև «միջնադարյան կոնսերվատիզմ» որակելը: Նախկին ղեկավարության հասցեին հնչող սուր մեղադրանքները սրում էին նաև դրանց դեմ պայքարելու ձևերը: Ըստ նոր ղեկավարության՝ պետք էր «մաքրել այն ամբողջ կեղտն ու փտածությունը, վոր կուտակվել են մեզ մոտ, շտկելով բոլոր թեքումներն ու շեղումները»: Կուսակցական քաղաքական գիծը «մաքրելու» այս մոտեցումն, ուրեմն, չէր կարող շրջանցել նոր կենցաղի հաստատման խնդիրը, որտեղ «նացիոնալիստական շեղումներ» թույլ տված ղեկավարության մոտեցումներն իրենց ուղիղ արձագանքն էին գտել: Ուրեմն ինչպե՞ս պետք է «մաքրվեր» կենցաղը: Այս հարցի պատասխանը պետք է փնտրել մասնագիտական այն դիտարկումների մեջ, որոնց ինքը՝ Կոստանյանը կոնկրետ քաղաքական գնահատականներ էր տալիս:

Ընդդեմ «պատմական հայ ճարտարապետության ֆորմաների» վերածնման

Կոստանյանի ելույթում հնչած քննադատությունը երևան էր բերվել *Խորհրդային Հայաստան* թերթի էջերում մինչև 1928-ի հուլիսյան պլենումը: Ճարտարապետության և կենցաղի խնդիրների առնչությամբ որդեգրված պետական քաղաքական գիծը մասնագիտական մակարդակում պաշտպանում էին երիտասարդ ճարտարապետները՝ մասնավորապես Կարո Հալաբյանը, Միքայել Մազմանյանն ու Հովհաննես Մարգարյանը: Վերջիններիս հոդվածները հունիսի վերջին և հուլիսի սկզբին միմյանց հաջորդեցին հայաստանյան պաշտոնաթերթի էջերում:[78] Համախոհ և ընկեր ճարտարապետների հնչեցրած փաստարկներն ըստ էության նույնական էին, որոնք հաստատելու հետևողականությամբ թերևս առավել աչքի ընկնողը Միքայել Մազմանյանն էր: Վերջինիս հոդվածը հատկապես ուշագրավ է թվում, եթե մտաբերում ենք նույն Մազմանյանի՝ մոտ կես տարի առաջ գրված և վերը քննարկված հոդվածը: Մազմանյանի հոդվածի ակնհայտ փոփոխված ու հաղթական տոնը հասկանալու մեկնակետը հոդվածի սկզբում վերջինիս հատուկ ընդգծած հաստատումն է, թե «*ճարտարապետական ֆորմայի հարցերը – իդեոլոգիայի հարցերն են*» (ընդգծումը՝ Մազմանյանի):[79] Պարզ ձևակերպմամբ Մազմանյանի այս համոզմունքը բացորոշում է ստալինյան քաղաքականության հաստատմամբ անթաքույց դարձած փաստը, որ 1920-ականների սկզբին նախկին ղեկավարության ջանքերով քաղաքական գաղափարախոսության և ճարտարապետության միջև հենց քաղաքականապես ամրագրված սահմանը վերջնականապես հանված էր: Ճարտարապետն ինքը ճարտարապետական ձևերի քննարկման մակարդակում դառնում է քաղաքական իդեոլոգիայի հանձնառուն. Մազմանյանի դեպքում գաղափարախոսության և ճարտարապետության հարցերը նույնական են դառնում: Նույնացման այս քայլն է բացահայտում ճարտարապետությունն ու կենցաղը իդեոլոգիապես մաքրելու ստալինյան մտայնությունը:

Պատահական չէ, որ Հայկազ Կոստանյանի հոդվածում ազգային, «հայկական ոճի» վիճարկմանը զուգահեռ Մազմանյանի մտահոգության կենտրոնում ևս տեսնում ենք ազգային ոճի խնդիրը: Ընդ որում այն ձեռք է բերում շատ կոնկրետ նկարագիր.

> Հայ բուրժուազիան յերազում եր ստեղծել իր «ազգային» վոճը ճարտարապետության մեջ, հասկանալով այն վորպես պատմական հայ ճարտարապետության ֆորմաների վերածնում.... Բուրժուազիան պատմական հայ

[78] Տե՛ս Կարո Հալաբյան, «Շինարարական խնդիրները», *Խորհրդային Հայաստան,* 24 հունիսի 1928 թ.; Մազմանյան, «Ճարտարապետության յեվ վոճի մասին»; Մարգարյան, «Ճարտարապետական շինարարության խնդիրներից»:
[79] Մազմանյան, «Ճարտարապետության յեվ վոճի մասին»: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

> Ճարտարապետության ֆորմաները մեքենայորեն փոխադրում եր 20-րդ դարը՝ ինքնուրույն ճարտարապետություն ստեղծելու հավակնությամբ:

Մազմանյանի քննադատության առանցքում պատմական ճարտարապետական ձևերի մեքենայական փոխադրումն է: Սակայն դասակարգային պարզ հակադրության սկզբունքին ենթակա՝ Մազմանյանը պարզ ձևով հայ ճարտարապետական ձևերի վերածնումը կապում է հայ բուրժուազիայի հետ: Անցկացված այս ուղիղ կապերի արդյունքում՝ վերածնել հայ ճարտարապետության ձևերը, Մազմանյանի ըմբռնմամբ, նշանակում էր հավատարիմ մնալ հայ բուրժուազիայի երազանքին: Սա քաղաքական նույն՝ «ազգայնական» թեքման մեղադրանքն էր, որ Մազմանյանի համար մեղադրական էր դառնում նաև ճարտարապետության դաշտում: Պատահական չէ, որ ինչպես Տեր-Սիմոնյանի դեպքում, Մազմանյանի թիրախում հայտնված ճարտարապետներից էր, օրինակ, նույն Նիկողայոս Բունիաթյանը, որի հոդվածին հղումներով վերջինս հիմնավորում է «ազգային կուլտուրա» ստեղծելու թշնամական՝ բուրժուական երազումի վտանգը ներկայում.

> Մեզանում ազգային կուլտուրա կառուցելու նպատակով, գործնականում իրականացվում ե դեռ բուրժուազիայի նվիրական իղձը – վերականգնել պատմական «ազգային» ճարտարապետությունը, «վերստեղծել մոռացված տրադիցիաները»: («Արվեստ», Բունիաթյանի հոդվածը):

Առանցքային է, որ Մազմանյանի համար «պատմական հայ ճարտարապետության» ձևերի վերականգնման փորձերը քննադատելու և նոր ճարտարապետություն ստեղծելու մեկնակետը քաղաքական իրադարձությունն է: Հոկտեմբերյան հեղափոխությունն էր, որ բուրժուազիայի հետ միասին «դեն [էր] շպրտել նաև ազգային կուլտուրայի և ազգային ճարտարապետության մասին նրա ունեցած ըմբռնումը»:[80] Հենց այս կետում է բացահայտվում, թե ինչպես է Մազմանյանն ըմբռնում ճարտարապետության ու գաղափարախոսության հարցերի նույնությունը. Մազմանյանի մոտեցմամբ քաղաքական իրադարձության ուժն էր, որ «զտեց ճարտարապետությունը հին վոճերից և առաջ մղեց կառուցողական նոր սկզբունքներ»: Քաղաքականությանն անվերապահ տրվող այս ուժը՝ ճարտարապետությունը մաքրելու, զտելու կարողությունն է Մազմանյանը դնում նոր ճարտարապետության ստեղծման հիմքում: Իր հերթին հենց քաղաքական ուժով «զտված» ճարտարապետությունն էր, որ, Մազմանյանի համոզմամբ, դառնում էր «նոր

[80] Մազմանյանի՝ քաղաքական իրադարձությունն իբրև նոր ճարտարապետություն ստեղծելու մեկնակետ սահմանելը հիմքում տեսական հարցեր է ենթադրում: Երիտասարդ ճարտարապետների՝ նոր ճարտարապետությունն անցյալից ու անցյալի ավանդույթից կտրելու ձգտումն ու դա հաջողելու համոզմունքը կապված էր հեղափոխության պատմական որոշակի ըմբռնման հետ: Անցյալի ավանդույթից կտրված արվեստի ու ճարտարապետության հնարավորությունը ենթադրում էր, որ հեղափոխությունն ինքը անցյալի հետ պատմական կապեր չուներ: Ավագ սերնդի արվեստագետների ու ավանգարդիստ ճարտարապետների միջև հակասությունն, ուրեմն, բացվում է արվեստի ու հեղափոխության փոխկապակցվածության ավելի լայն՝ տեսական, պատմանակ խնդիրների համատեքստում: Ավագ սերնդի արվեստագետների՝ անցյալի ավանդույթին տեղ տալու, այդ ավանդույթը վերամտածելու մոտեցումն արձագանքում էր քաղաքական իրադարձությունը պատմականորեն դիտելու, պատմական կապերին տեղ տալու ըմբռնմանը: Երիտասարդ ճարտարապետների մոտեցումն իր հերթին ենթադրում էր հեղափոխության բացառիկ, ապապատմական ըմբռնում: Այդ կերպ երիտասարդ ճարտարապետների անցյալից հրաժարման կտրուկության մեջ երևում է վստահությունը հեղափոխության նոր, ապապատմական լինելու ու դրանով անցյալից կտրվելու ուժ ունենալու հանդեպ: Այս խնդիրներն էին բացահայտում դեռ 1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ արվեստի դասակարգայնության, պրոլետարական մշակույթ ու արվեստ ստեղծելու խնդիրների շուրջ դիրքորոշումներն ու տեսական հիմնավորումները: Տե՛ս, օրինակ, Ա. Բոգդանով, *Գեղարեստը եւ բանւոր դասակարգը* (Մոսկւա: Հրատարակութիւն հայկական գործերի կոմիսարիատի, 1920); Գ. Պլեխանով, *Գեղարեստը եւ հասարակական կյանքը* (Մոսկվա: Մուրճ եւ մանգաղ, 1923); Н. Бухарин, *Пролетарская революция и культура* (Петербург: Прибой, 1923); *Լենինը կուլտուրայի և արվեստի մասին* (Երևան: Հայպետհրատ, 1958):

կենցաղն ու սոցիալիստական շինարարությունը կազմակերպող գործոններից մեկը»: Այսպիսով, քաղաքականությամբ զտված ճարտարապետությունն իր հերթին կոչված էր հաստատելու նոր կենցաղ:[81]

Միաժամանակ Մազմանյանի այս նույն՝ ճարտարապետությունը հին ոճերից զտելու գործողության մեջ է բացահայտվում, թե քաղաքական մակարդակում, ի դեմս Հայկազ Կոստանյանի ելույթի, ինչպես էր հաստատագրվում ազգային ոճի հասկացությունը: Հին ղեկավարությանն աջ-ազգայնականության մեջ մեղադրելու պաշտոնական քաղաքական կուրս դարձած մոտեցումն ազգային ոճի սահմանման քաղաքական լայն համատեքստն էր: Հին ղեկավարության իշխանության գալով մեկնարկած ՆԷՊ-ի ու դրանով տնտեսության մեջ արտահայտված կապիտալիստական տարրերի հետ էր ուղղակիորեն Մազմանյանը կապում պատմական ոճերի վերստեղծման նպատակադրումը. տարրեր, «վորոնք աշխատում են սողոսկել կուլտուրական շինարարության բնագավառը՝ քարշ տալով իրենց հետ նացիոնալ դեմոկրատական իդեոլոգիան»:[82] Քաղաքական-իդեոլոգիական այս պայքարի տրամաբանության մեջ է, որ Մազմանյանը խնդիր է դնում «զտել ազգային կուլտուրայի ամեն մի հատվածը պրոլետարիատին անհարազատ ազդեցություններից»: Մշակույթի վրա դրված իդեոլոգիական այս չափանիշը՝ «անհարազատ ազդեցությունից» զտումը, միաժամանակ նույնացնում է քաղաքականության ու մշակույթի հետ աշխատանքի ձևերն ու մեթոդները: Այնպես, ինչպես քաղաքական իդեոլոգիան պետք էր մաքրել «կեղտից ու փտածությունից», այնպես էլ պետք էր մշակույթը «զտել անհարազատ ազդեցություններից»: Այդ էր հուշում ճարտարապետական ձևի Մազմանյանի ըմբռնումը. «....*Յուրաքանչյուր շենք՝ շինված «հայկական վոճով»՝ ամենալավ «ագիտպրոպն» է, վոր աղաղակում ու պրոպագանդ է մղում կղերական ֆեոդալական կարգերի ու մտայնության ոգտին*» (ընդգծումը՝ Մազմանյանի):[83] Նույն կերպ, ինչպես Կոստանյանը, այս՝ ֆեոդալական կարգերից ելած «հայկական ոճից» է, որ Մազմանյանը մաքրում է ազգային ճարտարապետությունը՝ ըստ էության սահմանելով ազգային ճարտարապետության նոր բանաձևը.

> Ազգային ճարտարապետությունը, *յելնելով պրոլետարիատի յեվ գյուղացիության պահանջներից ու առաջավոր տեխնիկայից, լիովին կներդաշնակվի մեր յերկրի աշխարհագրական առանձնահատկություններին, իր յերանգը կստանա նրանից: Պրոլետարական՝ ըստ բովանդակության յեվ ազգային՝ իր կոլորիտով* (ընդգծումը՝ Մազմանյանի):[84]

---

[81] Տեղական կենցաղին քաղաքական գործիչների ու ճարտարապետների տված գնահատականն ըստ էության նույնական էր: Եթե Դրաստամատ Տեր-Սիմոնյանի գնահատմամբ հայկական գյուղերը «նախակենցաղ» էին, Գևորգ Քոչարի բնորոշմամբ՝ հայաստանյան տնային տնտեսությունը գտնվում էր ««նախամարդկային», հետամնաց դրության մեջ»: Տե՛ս Քոչար, «Արևմուտքի ճարտարապետական տեխնիկայից»:

[82] Հալաբյանը քիչ ավելի մեղմ տոնով, բայց պատմական ոճերի դեմ նույն քննադատությունն էր առաջ տանում. «Միանգամայն ռեակցիոն յերեվույթ պետք է համարել բոլոր պատմական վոճերի, ինչպես և մեր յեկեղեցական վոճի ռեստավրացիան.... Ամեն մի պատմական վոճ կապված է իր ժամանակի իդեոլոգիայի և տեխնիկայի զարգացման հետ»: Տե՛ս Հալաբյան, «Շինարարական խնդիրները»:

[83] Ինժեներ Մ. Մելիքյանը «միջնադարյան ֆեոդալական տարրի»՝ ոճի վերականգնումը կապում էր մասնագետների հետ, որոնք «դեռևս չկարողացան ըմբռնել հեղափոխությունը, նրա առաջադրած խնդիրներն ու իդեոլոգիան, ուստի և պիտի շինեին յեկեղեցանման բանկեր ու վանքանման տներ»: Տե՛ս Մելիքյան, «Մեր շինարարության հիմնական խնդիրներից»:

[84] Գործնականում Մազմանյանը պրոլետարական ճարտարապետության զարգացման համար իբրև աղբյուր տեսնում էր ժողովրդական ճարտարապետությունը, գյուղական տներն իրենց «պարզ, անպաճույճ, բայց միևնույն ժամանակ չափազանց կոնստրուկտիվ կազմվածքով». տներ, որոնք «զարմանալի կերպով իրենց հիմքում համապատասխանում են ներկայիս ճարտարապետության պահանջներին»: Հետաքրքրականորեն Մազմանյանի այս ձևակերպումը մոտ է թվում Սարյանի՝ անցյալի ճարտարապետական հուշարձաններին տրված գնահատականին, այն տարբերությամբ սակայն, որ Մազմանյանի համար այդ առանձնահատկությունները հայկական մոնումենտալ ճարտարապետության հետ չեն կապվում:

Այս սահմանումը վերաձևակերպում էր ազգային ճարտարապետության ըմբռնումն ու հաստատում «իսկական ազգային ճարտարապետությունը (առանց չակերտների)»:[85] Այդ վերաձևակերպման հիմքում ազգի նոր ըմբռնումն էր. ինչպես Մազմանյանն է իր հոդվածում սահմանում, «ազգը – դա պրոլետարիատն ու գյուղացիությունն է»:[86] Ազգի վերասահմանման Մազմանյանի այս փորձն է, որ «ազգային պատմական ոճը» հակադրում է «իսկական ազգային»՝ «ժողովրդական ճարտարապետությանը»: Դրանցից առաջինը Մազմանյանը կապում է «նացիոնալ դեմոկրատական իդեոլոգիայի», երկրորդը՝ ազգի՝ պրոլետարիատի ու գյուղացիության հետ: Թվում է, այս բաժանումն է պարզորոշ դարձնում, թե ինչպես է ճարտարապետությունը հիմնավորապես որդեգրում քաղաքական մաքրության ուղեգիծը: Եթե իդեոլոգիական մաքրության հրամայականն այլ բան չէր, քան սեփական քաղաքական «խառը» ավանդույթի հետ հարաբերման անկարողություն, ապա ճարտարապետության ասպարեզում ազգային ճարտարապետությունը զտելու արարքն այլ բան չէր, քան սեփական «խառը» մշակութային ավանդույթն առերեսելու անկարողություն:

Ճարտարապետությունն «իդեոլոգիական ֆակտորներից» մեկը հռչակած երիտասարդ ճարտարապետների ըմբռնմամբ, ինչպես Հալաբյանն էր ձևակերպում, ճարտարապետական-ձևային հարցերը «խոշոր դեր ուն[եին] կատարելու պրոլետարիատի պսիխիկան և կենցաղը կազմակերպելու գործում»:[87] Պարզ էր նաև, որ վերջիններս ճարտարապետական շինարարության ասպարեզում, Հովհաննես Մարգարյանի հավաստմամբ, պայքար էին հայտարարել մինչ այդ «սխալ» տարված ուղղության դեմ և տրամադիր էին այդ պայքարը շարունակել «մինչև հաղթական ավարտը»:[88] Նոր ճարտարապետության ու նոր կենցաղի համար հայտարարված այդ պայքարում ավանգարդիստ ճարտարապետները չափանիշն արդեն սահմանել էին.

«Պրոլետարական՝ ըստ բովանդակության յեվ ազգային՝ իր կոլորիտով» ձևակերպումն ըստ էության մինչև սոցիալիստական ռեալիզմի հաստատումը մշակույթի ստալինյան ըմբռնում էր. ձևով՝ ազգային, բովանդակությամբ՝ պրոլետարական: Տե՛ս, օրինակ, Иосиф Сталин, «О политических задачах университета народов Востока: Речь на собрании студентов КУТВ, 18 мая 1925 г.», ըստ՝ *Сочинения*, հ. 7 (Москва: Государственное издательство политической литературы, 1952), էջ 137: Ստալինի՝ պրոլետարական կուլտուրայի այդ ըմբռնումը «սպեկուլյացիայի յենթարկելու» մեջ էր Մազմանյանն իր հոդվածներից մեկում մեղադրում Արտաշես Կարինյանին: Տե՛ս Մ. Մազմանյան, «Եկլեկտիզմի առաքյալը», *Խորհրդային Հայաստան,* 16 դեկտեմբերի 1928 թ.:

[85] *Խորհրդային ավանգարդի ճարտարապետությունը* գրքում Խան-Մագոմեդովը հպանցիկ անդրադառնում է 1920-ականների վերջի և 1930-ականների սկզբի հայաստանյան ճարտարապետությանը՝ նշելով. «Հայաստանի նորարարական ճարտարապետական դպրոցը կարելի է դիտարկել իբրև ժամանակակից ազգային առանձնահատկությունների ձևավորման առաջին հաջողված փորձերից (ոչ միայն խորհրդային, այլև ողջ համաշխարհային ճարտարապետության մեջ), որոնցում ներդաշնակ համադրվում էին տեղական ավանդույթներն ու նոր ճարտարապետության միջոցների ու հնարների նորարարական զարգացումը»: Տե՛ս С. Хан-Магомедов, *Архитектура советского авангарда,* к. 1 (Москва: Стройиздат, 1996), էջ 604:

[86] Այս ըմբռնման հիմքում ըստ էության կարելի է տեսնել դեռևս Լենինի առաջ քաշած բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի գաղափարը: Տե՛ս Верт, *История Советского государства,* էջ 111-115: Մազմանյանի մոտ, սակայն, ըստ առաջադրված խնդիրների այն ավելի սուր շեշտադրում է ստանում:

[87] Հալաբյանի ըմբռնմամբ՝ ստեղծվում էր «նոր կուլտուրա, վոր իր բնույթով միանգամայն հակադիր ե նախկին բոլոր կուլտուրաներին»: Զուգահեռաբար վերջինիս քննադատության թիրախում ևս բնակելի տներն էին, որոնք կառուցվում էին «կարծես մարդկանց ել ավելի մեկուսացնելու և կղզիացնելու նպատակով, ել ավելի խորացնելու քաղքենիական կենցաղը»: Տե՛ս Հալաբյան, «Շինարարական խնդիրները»: «Սոցիալական նոր սպառողի»՝ պրոլետարիատի «ուրույն» պահանջները նույնպես հակադրության սկբունքով էր ըմբռնում Մարգարյանը: Այդ պահանջները, ըստ ճարտարապետի, «անցյալին միանգամայն հակադիր» էին, ուստի «նոր արտադրական, կենցաղային պրոցեսները պահանջում [էին] տարածության կազմակերպման նոր ձևեր»: Տե՛ս Մարգարյան, «Ճարտարապետական շինարարության խնդիրներից»:

[88] Մարգարյան, «Ճարտարապետական շինարարության խնդիրներից»: Թվում է այլ տեսանկյունից, բայց երիտասարդ ճարտարապետների այս մարտական դիրքորոշման հենքն է երևան բերում Սթայթսի դիտարկումը ժամանակի քաղաքաշինության վերաբերյալ. «Քաղաքի պլանավորումը պլանային պետությունում (սա այն էր, ինչ Խորհրդային Ռուսաստանը դարձավ 1928-ին) փոքր զբաղմունք չէր. այն փաստացիորեն «ազգի պլանավորում» էր, մեծամասշտաբ համայնական նախագծում, այլ կերպ ասած, գետնի վրա և հնարավոր

Պրոլետարիատի դիկտատուրայի յերկարատեվ շրջանում ճարտարապետությունը չի կարող չյենթարկվել դասակարգային պայքարի որենքներին: Նա, ով չի ըմբռնում այս պարզ ճշմարտությունը, չի կարող կանգնել պրոլետարական կուլտուրայի, պրոլետարական ճարտարապետության մարտիկների շարքում (ընդգծումը՝ Մազմանյանի):[89]

Ուրեմն, դեմ լինել ճարտարապետությունը դասակարգային պայքարի օրենքներին ենթարկելուն նշանակում էր չլինել պրոլետարական ճարտարապետության մարտիկ: Գաղափարական այս հանձնառությունն էր, որ երիտասարդ ճարտարապետների մարտական սվիններն ուղղում էր նրանց դեմ, ովքեր չէին հասկանում այս «պարզ ճշմարտությունը», հետևաբար առաջ բերում դասակարգային պայքարի իդեոլոգիային հավատարիմ լինելու քաղաքական հարցը: Ովքե՞ր էին, ուրեմն, այդ «պարզ ճշմարտությունը» չհասկացողները:

«Դեռ ևս աղվամազ չբուսած մի քանի երիտասարդների» դեմ ուղղված քննադատությունը

Հաշվի առնելով հարցի հստակ քաղաքական ենթատեքստը, պատահական չպետք է համարել, որ սրված իդեոլոգիական պայքարի այս պայմաններում երիտասարդ ճարտարապետների հարձակումներին հակազդելու փորձ ձեռնարկողներ դարձան ոչ թե արվեստագետները կամ ճարտարապետները, այլ քաղաքական գործիչները:[90] Արամայիս Երզնկյանը՝ Խորհրդային Հայաստանի հողագործության ժողովրդական կոմիսարն այն բարձրաստիճան ղեկավարներից էր, որը մեկ անգամ չէ, որ հանդես եկավ երիտասարդ ճարտարապետների դեմ քննադատությամբ: Երզնկյանի անդրադարձներից մեկն ուղիղ արձագանքում էր նախորդիվ *Խորհրդային Հայաստանում* տպագրված Կարո Հալաբյանի, Միքայել Մազմանյանի ու Հովհաննես Մարգարյանի հոդվածներին: Երիտասարդների

ամենամեծ մասշտաբով ուտոպիայի կառուցում: Իր տաղանդի ու երևակայության արտահայտման այսպիսի հնարավորություններ ունենալով առջևը՝ ո՞ր քաղաքաշինարարը, ճարտարապետը, տնտեսագետը, սոցիոլոգը կամ աշխարհագրագետը սպասումից շնչակտուր չէր լինի»: Տե՛ս Stites, *Revolutionary Dreams,* էջ 190:

[89] Մազմանյան, «Ճարտարապետության յեվ վոճի մասին»:

[90] Խոսքը հատկապես Խորհրդային Հայաստանի հողագործության ժողովրդական կոմիսար Արամայիս Երզնկյանի և Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Արտաշես Կարինյանի մասին է, որոնք անձնապես ներգրավված էին երկրում ընթացող շինարարական աշխատանքների մեջ, ինչպես և ճարտարապետության շուրջ ծավալված բանավեճերում: Երզնկյանի՝ երիտասարդ ճարտարապետների դեմ ուղղված անդրադարձները տե՛ս Յերզնկյան, «Մի քանի խոսք յեվ մի փոքրիկ պահանջ» [ֆելիետոն]; Ա. Երզնկյան, «Մեր շինարարության հիմնական խնդիրներից», *Խորհրդային Հայաստան,* 3, 8 օգոստոսի 1928 թ.: Հետաքրքրականորեն Երզնկյանի ֆելիետոնի դեմ անմիջապես հանդես եկան գրողները՝ Ալազանը և Լեռ Կամսարը: Տե՛ս Ալազան, «Լենինականում (Փաստեր յեվ դիտողություններ)», *Խորհրդային Հայաստան,* 14 հուլիսի 1928 թ. և Լեռ Կամսար, «Ֆելյետոնի փոխարեն... (Դիսկուսիա)», *Խորհրդային Հայաստան,* 15 հուլիսի 1928 թ. (Լեռ Կամսարի՝ ճարտարապետության խնդիրները շոշափող ֆելիետոններից տե՛ս նաև Լեռ Կամսար, «Մեր ճարտարապետության մասին», *Խորհրդային Հայաստան,* 1 հուլիսի 1928 թ.; Լեռ-Կամսար, «Ճարտարապետական նոթեր», *Խորհրդային Հայաստան,* 19 հունվարի 1930 թ.): Երզնկյանն էր նաև հրապարակվող ընկերական շարժերի գլխավոր հերոսը: Տե՛ս «Ընկեր Ար. Յերզնկյանի վերջին հոդվածի առթիվ», *Խորհրդային Հայաստան,* 15 հուլիսի 1928 թ.; ««Նոր» շինարարությունը Հայաստանում», *Գրական դիրքերում,* 1928, թիվ 7-8, էջ 60: Կարինյանն իր հերթին ուղիղ բանավեճի բռնվեց ճարտարապետների հետ: Ըստ էության արձագանքելով Մազմանյանի «О национальной архитектуре» հոդվածին (որը բովանդակային իմաստով կրկնում էր հայերենով արդեն լույս տեսած «Ճարտարապետության յեվ վոճի մասին» հոդվածը)՝ Կարինյանը հրապարակեց «О „стиле“ и строительстве» հոդվածը: Սրան ի պատասխան տպագրվեց նախ Մազմանյանի «Եկլեկտիզմի առաքյալը», ապա Քոչարի «Մի անհաջող փորձ ճարտարապետական վոճի խնդրում» հոդվածները: Տե՛ս Микаел Мазманян, «О национальной архитектуре», *На рубеже Востока,* 1928, թիվ 8, էջ 126-136; А. К., «О „стиле“ и строительстве», *Большевик Закавказья*, 1928, թիվ 7-8, էջ 103-112; Մազմանյան, «Եկլեկտիզմի առաքյալը» և Գեորգ Քոչար, «Մի անհաջող փորձ ճարտարապետական վոճի խնդրում (Պատասխան ընկ. Ա. Կ.-ին)», *Նոր ուղի,* 1929, թիվ 1, էջ 329-337:

բացահայտ հարձակումների դեմ հնչող Երզնկյանի ֆելիետոնային արձագանքը հեգնական էր.

> ....Մեր յերիտասարդ ինժեներները համալսարանների աթոռները դեռ յերեկ թողած կամ չթողած, ամենայն իրավամբ նկատելով մեր հսկայական թերությունները շինարարության բնագավառում – աշխատում են մեզ հետ բաժանել իրենց պրոֆեսորներից դեռ յերեկ լսած նոր թեզերը, կամ տեխնիկային և շինարարության նվիրված թերթերի հոդվածների եյությունը:[91]

«Դեռ ևս աղվամազ չբուսած մի քանի երիտասարդների» ու իրենց՝ «տնտեսվարների» միջև տարակարծությունների ակոսն է խորացնում Երզնկյանը, երբ նույն՝ ազգային ճարտարապետության խնդիրը դարձնում է հոդվածի առանցքային կետերից մեկը: Երզնկյանի ձևակերպած փաստարկն այլ բան չէ, քան փորձ պաշտպանելու «հայկական ոճն» ու դրանով խուսափելու ազգային ոճը կա՛մ ֆեոդալական, կա՛մ ժողովրդական համարելու մոտեցումից: Թամանյանի կառուցած Հողժողկոմատի (ներկայիս՝ կառավարության) շենքն իբրև օրինակ բերելով՝ Երզնկյանը հակազդում է երիտասարդ ճարտարապետներին.

> Դուք այդ շենքի կողքովն անցել եք, այնտեղ տեսել եք քանդակված խաղողի վողկույզներ: Ինչպես ամեն մի *բարեպաշտ* և հայրենասեր հայ պարտավոր ե տեսնել Զվարթնոցը – դուք ևս տեսել եք Զվարթնոցը և տեսել եք այնտեղ քանդակված վողկույզներ: Ուրեմն Հողժողկոմատի շենքի վոճը վանական-կղերական ե:
>
> Եհ, ինչ արած, վոր ձեր աչքից վրիպել են Արարատյան դաշտի տասը հազար դեսյատին խաղողի այգիները, իրենց լիառատ վողկույզներով:
>
> Թե ինչո՞ւ Զվարթնոցից են վերցրած այդ խաղողի վողկույզները յեվ վոչ այգիներից, վոր մշակում ե հայ աշխատավոր գյուղացին – անհասկանալի յե (ընդգծումը՝ Երզնկյանի):[92]

Երզնկյանի քննադատությունն ուրեմն փորձ էր վիճարկելու Հողժողկոմատի շենքի ոճին տրվող «վանական-կղերական» բնորոշումը: Ուշագրավ է, որ դա հաջողելու համար Երզնկյանի քայլը գրեթե նույնական է նրան, ինչ ձեռնարկել էին ճարտարապետները. երիտասարդ ավանգարդիստներն ազգային ժողովրդական ճարտարապետությունը կապում էին պրոլետարիատի ու գյուղացիության հետ՝ հակադրելու համար այն «հայկական ոճի» «վանական-կղերականությանը»: Երզնկյանն իր հերթին «հայկական ոճն» էր կապված տեսնում աշխատավոր գյուղացիությանն ու դրա կյանքին՝ վիճարկելով «հայկական ոճի» հենց «վանական-կղերականությունը»: «Հայկական ոճի» դասակարգային պատկանելության խնդիրն ու ի վերջո ազգային ոճին տրվող գնահատականի շուրջ այս կռիվը բացահայտորեն կռիվ էր քաղաքական դիրքորոշման համար, որն իր հերթին պետք է որոշեր նաև նոր կենցաղին տրվող գնահատականը:[93]

---

[91] Յերզնկյան, «Մի քանի խոսք յեվ մի փոքրիկ պահանջ»: Ըստ էության նույն դիրքորոշումը կիսող Կարինյանն իր հերթին կոչ էր անում լուրջ վերաբերմունք ցուցաբերել առհասարակ անցյալի մշակութային ժառանգությանն ու հին սերնդի ճարտարապետների աշխատանքին: Ըստ Կարինյանի՝ «միայն «երիտասարդ ճարտարապետների» ձեռքերով, որոնք հենց նոր են մի կողմ թողել գիրքն ու դեռևս չեն կառուցել անգամ մի պահակախցիկ, շատ դժվար է իրականացնել սոցիալիստական շինարարության բարդագույն խնդիրները»: Տե՛ս А. К., «О „стиле“ и строительстве», էջ 106:

[92] Յերզնկյան, «Մի քանի խոսք յեվ մի փոքրիկ պահանջ»:

[93] Այդ գնահատականի համար բանավիճող Արտաշես Կարինյանն իր հերթին նկատում էր. ««Նոր ոճ» դեռևս գոյություն չունի: Իբրև «նոր ոճ» ընդունել այն միատեսակ ու միագույն արկղ-տները, որոնք ներկայացվում են իբրև «իդեալական», մենք, պետք է խոստովանել, չենք խիզախում…. Երբ ցույց են տալիս «մոդեռն» ոճի ֆասադներով տներ..., երբ ամբողջ այդ անճաշակությունն անվանվում է «նոր գիծ» ճարտարապետության մեջ, ապա մենք դառնում ենք համոզված կողմնակիցներ այն հիանալի ու խիստ և իր ողջ գեղարվեստական

1929-ին *Կայծ* ամսագրի առաջին համարում տպագրված ոմն Մ. Մխիթարյանի «Հինը, թե նորը» ուշագրավ վերտառությամբ հոդվածում այդ գնահատականը հստակ ձևակերպված էր.

> Նեպի շրջանում գոյություն ունեցող յուրաքանչյուր քաղքենին, վորը տոգորված ե յեղել ֆիոդալական վարգ ու բարգով այժմ աշխատելով շինարարության ասպարեզում ամեն կերպ աշխատում ե .... ռեստավրացիայի յենթարկել այն ամենը, վորը կապ ունի անցյալի վերհիշման հետ:[94]

ՆԷՊ-ը, ֆեոդալական մշակույթն ու շինարարության մեջ անցյալի վերհիշումն այն փոխկապակցված օղակներն էին, որոնց դեմ ուղղված ստալինյան քաղաքականությունների աճող թափը միաժամանակ ազդարարում էր 1920-ականների սկզբի մեծամասնական գործիչների հաստատած քաղաքական նախագծի ավարտն ու այլափոխումը: Այս պայմաններում ՆԷՊ-ով իշխանության գլուխ անցած քաղաքական գործիչը՝ Արամայիս Երզնկյանը, փորձում էր ազգային ոճը պաշտպանել փեղեկումից: Չընդունելով ճարտարապետական ոճը դասակարգի հետ ուղիղ կապելու սկզբունքը՝ վերջինս ջանք էր գործադրում հարաբերվել սեփական ավանդույթի հետ դրա բարդությամբ հանդերձ և չդարձնել այդ ավանդույթը միագիծ: Երզնկյանի այս մոտեցումը նշանակում էր դեմ ելնել մաքուր պատմական ավանդույթի ու զտված ճարտարապետական ձևերի ստալինյան գաղափարախոսությանը:

1928-1929-ին՝ առաջին հնգամյակի մեկնարկային տարիներին ստալինիզմի հռետորաբանությունն էր այլևս տիրող քաղաքական պայմանների ցուցիչը: Պատահական չէ, որ ֆելիետոնի հրապարակումից քիչ ավելի ուշ նույն *Խորհրդային Հայաստանում* տպագրված ծավալուն հոդվածում շինարարության խնդիրների շուրջ քննարկման ելակետը Երզնկյանի համար այլևս կուսակցության XV համագումարի դրույթներն էին:[95] Ինքը Երզնկյանը հոդվածն սկսում է այդ դրույթներից ուղիղ մեջբերմամբ.

> «Անհրաժեշտ ե պատմական համեմատաբար կարճատև ժամանակամիջոցում նախ՝ հասնել և ապա գերազանցել կապիտալիստական առաջավոր յերկրների ինդուստրիալ զարգացման մակարդակին»:
>
> Գյուղատնտեսության զարգացման բնագավառում ևս մեր առաջ դրված են նույնքան ծանրակշիռ հարցեր՝ ազատագրվել մանր անհատական տնտեսություններից և գյուղի ամբողջ տնտեսությունը դնել կոլեկտիվ հունի մեջ:[96]

Քաղաքական հրահանգով 1928-ին մեկնարկած համատարած կոլեկտիվացումն ու արդյունաբերականացումը, որ ողջ Խորհրդային Միության համար տնտեսական

չափավորությամբ հասարակ «ոճի», որը, լինելով «ազգային», ընդհանուր ոչինչ չունի ո՛չ տաճարների, ո՛չ ֆեոդալական ամրոցների հետ: Տե՛ս А. К., «О „стиле“ и строительстве», էջ 106: Կարինյանի այս քննադատությունն անպատասխան չմնաց: Մազմանյանի ու Քոչարի՝ բացեիբաց թշնամական դիրքերից Կարինյանի դեմ գրված հոդվածները նաև անթաքույց քաղաքական մեղադրանքներ էին առաջադրում: Ըստ Մազմանյանի՝ Կարինյանն «իր բոլոր «փաստերը» ուղղել ե խորհրդային հեղափոխական ճարտարապետության դեմ, լուռ պայքար մղելով նրա դեմ և դրանով նեցուկ հանդիսանալով ճարտարապետության մեջ արտահայտված նացիոնալիստական տրամադրություններին»: Տե՛ս Մազմանյան, «Եկլեկտիզմի առաքյալը»: Իր հերթին Քոչարը Կարինյանի առաջ քաշած թեզերի «ներքին իմաստն» էր վեր հանում. «Ամեն կերպ առաջացնել մեր *քննադատության, ինչպես և մեր նոր շինարարության հանդեպ առաջադրած պահանջների շուրջն այնպիսի հասարակական մթնոլորտ, ուր հեշտությամբ կարելի լինի անցկացնել և արդարացնել ազգային վոճի նացիոնալիստական սկզբունքը*» (ընդգծումը՝ Քոչարի): Տե՛ս Քոչար, «Մի անհաջող փորձ ճարտարապետական վոճի խնդրում», էջ 334:

[94] Մ. Մխիթարյան, «Հինը թե, նորը», *Կայծ,* 1929, թիվ 1-2, էջ [7]:

[95] Կոմունիստական կուսակցության XV համագումարը կայացավ 1927-ի վերջին: Համագումարում ընդունված այլևայլ փաստաթղթերի շարքում էին նաև ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը կազմելու մասին դիրեկտիվները:

[96] Երզնկյան, «Մեր շինարարության հիմնական խնդիրներից»: Տեքստից հետագա մեջբերումներն օգոստոսի 8-ի համարից՝ տողամիջում:

զարգացման հետագա ուղին էր բացում, միաժամանակ ազդարարում էր ՆԷՊ-ի ավարտը:[97] Տնտեսական գծի այս փոփոխությունը, սակայն, երկրի քաղաքական գծի փոփոխություն էր միաժամանակ: Դրա ամրագրողը Հայաստանում նույն Հայկազ Կոստանյանն էր, որը քաղաքական մեղադրանքների ու քննադատության թիրախում էր առել հին ղեկավարությանը: Ինքը՝ Արամայիս Երզնկյանը մեկն էր այդ հին ղեկավարությունից: Հուլիսյան պլենումից հետո գրված վերջինիս հոդվածը, մի կողմ թողած նախորդիվ հրապարակված ֆելիետոնի հեգնական գրելաոճը, ակնհայտորեն իր վրա կրում էր երկրում մեկնարկած քաղաքական ու տնտեսական վայրիվերումների կնիքը:

Ուշագրավ է, որ Երզնկյանն իդեոլոգիական խնդիրների քննարկումը սկսում է կենցաղի խնդրից: Քննարկման մեկնակետը տնտեսական սոցիալիստական կառուցվածքի զարգացման ընթացքն է, որ, Երզնկյանի բնորոշմամբ, «առաջ ե բերում մասսաների կենցաղի հեղաշրջում». «Հին տնտեսական ձևերը քայքայվելով, միաժամանակ քայքայվում ե հին կենցաղը: Հին կենցաղի փլատակների վրա աստիճանաբար ստեղծվում ե մարդկային նոր կենցաղը՝ համապատասխան սոցիալիստական տնտեսության նոր ձևերին»: Նոր կենցաղի խնդիրն այս դեպքում ևս կապվում էր շինարարական խնդիրներին: Շինարարության զարգացումն, ըստ Երզնկյանի, պետք է այժմ կառուցումներին տար այնպիսի բովանդակություն, որը պետք է զարկ տար նոր կենցաղի զարգացմանը և ոչ թե «արգելակ» հանդիսանար: Երզնկյանը հաստատակամ է, որ կենցաղի քայքայումը «պատմական անհրաժեշտություն ե, նա բղխում ե մեր սոցիալիստական տնտեսության նոր կառուցվածքից», այնուամենայնիվ նրա գնահատմամբ «կենցաղի նոր պայմաններն ստեղծվում են խոշոր դժվարությամբ, ... հին կենցաղի քայքայումը կատարվում ե դանդաղորեն»:[98] Ստալինյան հնգամյակի պայմաններում, սակայն, դանդաղելու ժամանակ այլևս չկար: «Հասնել ու անցնելու» քաղաքական հրամայականը ժամանակը փոխարինել էր ստալինյան «ինքնաքննադատության» լոզունգով: Հետահայաց սեփական սխալներն ընդունելու ու դրանք ոչ թե ժամանակի ընթացքում, այլ սահմանված ժամկետում ուղղելու պահանջ էր առաջադրել ստալինյան քաղաքականությունը:[99] Թե՛ կենցաղի, թե՛ շինարարության ասպարեզում տարված աշխատանքներում ճիշտն ու սխալը միմյանցից զատելու տրամաբանությունն էր, որ գործի էր դնում ինքնամաքրման ու խոստովանանքի մեխանիզմը: Ուղղվելու, սխալներից ազատվելու քաղաքական պահանջն իրագործելով է ի վերջո Երզնկյանը կենցաղի ու շինարարության ասպարեզում արձանագրում «իդեոլոգիական խոշոր պակաս»:

---

[97] Մոշե Լևինը 1928-ին երկրի կյանքի առանց բացառության բոլոր ասպարեզներում մեկնարկած արմատական փոփոխությունները նկարագրում է որպես «աշխարհի երկունքի ցավեր»: Տե՛ս Lewin, «Society, State, and Ideology during the First Five-Year Plan», էջ 52:

[98] Հետաքրքրականորեն, եթե Երզնկյանը կենցաղի վերափոխման բերումով դիմում է «դանդաղել» բառին, ապա, օրինակ, Նադեժդա Կրուպսկայան հասարակական կյանքի սոցիալիստական կազմակերպման խնդիրը քննարկելիս օգտագործում է «հետ մնալ» բառակապակցությունը: Առաջին հայացքից ոչ այնքան սկզբունքային տարբերությունը սակայն, թվում է, ցույց է տալիս կենցաղի հանդեպ քաղաքական գնահատականի տարբերությունը: Պատահական չէ, որ Կրուպսկայայի համոզմամբ հենց հնգամյակն է լավագույն կերպով ցույց տալիս այդ «հետամնացությունը»: Տե՛ս Н. Крупская, «Вопрос поставленный Октябрем», ըստ՝ *Города социализма*, էջ 6:

[99] Ժամանակ չունենալու քաղաքական այս սկզբունքը, որն արդեն գործում էր ճարտարապետության ու կենցաղի ոլորտում, հստակ երևում է 1930-ին լույս տեսած *Սոցիալիզմի քաղաքները և կենցաղի սոցիալիստական վերակառուցումը* գրքի առաջաբանում Լունինի մի ձևակերպման մեջ. «Մենք կոչված ենք գործնականում իրականացնելու այն, ինչ միայն երևակայության ու ուտոպիայի առարկա էր: Պետք է խոստովանել, որ մենք նույնիսկ ուշացրել ենք «ուտոպիայի» իրագործման խնդրի տեսական մշակումը, որը մեզ թելադրում են հենց կյանքը, ամենահիրական, կարելի է ասել, ամենաայսօրյա (самого сегодняшнего) շինարարության կենսական կարիքները»: Տե՛ս Б. Лунин, «Предисловие», ըստ՝ *Города социализма*, էջ 3:

> Նա [շինարարությունը] տարվել է անհատական տնտեսության սահմաններում, նա միայն հաշվի չէ առել բացառապես ներկա անհատ ընտանիքն իր մասնավոր տնտեսությամբ: Հասկանալի է, վոր սա չեղել է խոշոր սխալ, սա վոչ թե հեշտացրել է կենցաղի նոր ուղիները, այլ ընդհակառակը, նրա առաջ բացել է նոր խոչընդոտներ....[100]

Այս «խոշոր սխալի» արդյունքում, ըստ Երզնկյանի, ապագայում զարգացող նոր կենցաղը անխուսափելիորեն պիտի բախվեր արդեն կառուցված շենքերի «հետամնաց կառուցվածքին»: Այստեղ էր հարուցվում ուրեմն շինարարության առջև դրվող «իդեոլոգիական բովանդակության խնդիրը», որի լուծման «ուղեցույց» պետք է դառնային նոր կենցաղի զարգացման արդեն գծված ուղիները: Սխալից ազատվելու հնարավորությունն այս կերպ կապվում էր սոցիալիստական տնտեսության ու կենցաղի պահանջների հետ, որոնք պետք է ընդգրկեին շինարարության «ներքին ամբողջ բովանդակությունը»: Միաժամանակ պատահական չէ, որ այդ կառուցումների՝ դասակարգայնորեն մաքուր՝ «պրոլետարիատի իդեոլոգիայով» համակված լինելու պահանջը շեշտադրելն էր, որ առաջ էր բերում նաև «վոճի հարցը»:

Երզնկյանը ոճի խնդրի քննարկումը սկսում է այն «անհամար սխալներն» ընդունելով, որոնք տեղ էին գտել նախկինում ձեռնարկված շինարարության մեջ: Սխալների արդյունքներն ի ցույց էին դրվում հրապարակայնորեն. «Քիչ չեն մեզանում շենքեր, վորոնք իրենց վրա կրում են ֆեոդալիզմի և յեկեղեցականության կնիքը»: Երզնկյանի այս հաստատումն առաջին հայացքից ուղիղ հակառակ է այն մարտնչող դիրքին, որից նա իր ֆելիետոնում պաշտպանում էր եղած կառուցումները «վանական, կղերական» բնորոշելու մտայնության դեմ: Հակառակը՝ այն ինքնին թվում է դասակարգային սրված պայքարի սկզբունքներին հավատարիմ դիրքորոշման պաշտպանություն: Հաշտվողական, դիրքերը զիջելու տրամադրության տպավորությունը, սակայն, հերքվում է հոդվածի հետագա ընթերցմամբ: Այն ընդգծում է Երզնկյանի՝ երիտասարդ ճարտարապետների որդեգրած մոտեցումները քննադատելու հետևողականությունը: Արձանագրելով, որ ոճի խնդիրը լուծելու առջև կանգնած խորհրդային ճարտարապետությունը դեռևս որոնումների շրջանում է, Երզնկյանը քննադատության սլաքն ուղղում է հենց երիտասարդ ճարտարապետների դեմ, որոնք «դնելով ճշգրիտ պահանջը, իրենց համար աննկատելի կերպով այդ խնդրի լուծման պրոցեսում կտրվում են իրականությունից»: Հնչող այս քննադատության մեջ ուշագրավ փաստ է առկա. Երզնկյանը երիտասարդ ավանգարդիստներին քննադատելու փաստարկը գրեթե ամբողջովին հիմնում է մոսկովյան *Պրավդա* թերթի մի անդրադարձի վրա, որից իր հոդվածում ընդարձակ մեջբերումներ է անում: Թեև Երզնկյանն ինքը չի հիշատակում, թե մասնավորապես որ հոդվածի մասին է խոսքը, բայց հստակ է, որ մեջբերումներն արվեստաբան, ճարտարապետության պատմաբան ու տեսաբան Դավիդ Արկինի «Վոճը ճարտարապետության մեջ» հոդվածից են. նույն այն հոդվածից, որ թարգմանաբար վերատպվել էր նաև *Խորհրդային Հայաստանի* էջերում:[101] Հենց Արկինի հոդվածում ենք գտնում երիտասարդ ճարտարապետների գործունեությանը տրված գնահատական, որ առանցքային էր արդեն Երզնկյանի հնչեցրած քննադատության համար.

---

[100] Անցյալում տարված շինարարության մեջ սխալներ տեսնելու այս տրամաբանությունը գործում էր ոչ միայն Հայաստանում: Կոմունիստական կուսակցության բարձրաստիճան գործիչներից Գրիգորի Զինովևն իր հերթին գրում էր. «Չպետք է մեզնից թաքցնենք փաստը, որ մեր բնակարանաշինության առաջին տարիներին (սկսած 1925 թ.) մեր երկրում շատ բան արվում էր հապճեպ, առանց խիստ մտածված պլանի և երբեմն էլ՝ չափազանց անփույթ»: Տե՛ս Г. Зиновьев, «От утопии к действительности», ըստ՝ *Города социализма*, էջ 15:

[101] Դ. Արկին, «Վոճը ճարտարապետության մեջ», *Խորհրդային Հայաստան,* 25 հուլիսի 1928 թ.:

> ....Պայքարելով ճարտարապետական եկլեկտիզմի և տակավին կենսունակ վոճավորման գերիշխանության դեմ, մեր ապագա ճարտարապետներն ունեն մեկ ուրիշ պակասություն.– նրանց աշխատանքները մեծ մասամբ շատ տեսական են, նրանց մեջ տակավին շատ թույլ ե արտահայտվում կենցաղային պահանջների իսկական նշանակությունը, ինչպես նաև մեր կառուցողական գործի կոնկրետ պայմանները:[102]

Առանձնակի կարևոր փաստ է թվում այն, որ Արկինի այս դիտարկումներն արված են Մոսկվայի բարձրագույն գեղարվեստական-տեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի ուսանողների ավարտական նախագծերի ցուցահանդեսի առթիվ. հաստատություն, որտեղ ուսանում էին նաև նույն Մազմանյանը, Քոչարն ու Հալաբյանը: Հոդվածում Արկինին արված հղումներն ուրեմն Երզնկյանի համար վերաբերում էին նաև Մոսկվայում կրթություն ստացած և 1920-ականների երկրորդ կեսին հայաստանյան գեղարվեստական կյանքում ասպարեզ իջած երիտասարդ ճարտարապետների գործունեությանը: Մյուս կողմից՝ Արկինի քննադատական հայացքը հայ ճարտարապետների հավակնությունները երևան էր բերում ոչ միայն հայաստանյան, այլև առավել լայն՝ Միության կենտրոնի համատեքստում: Արկինն իր անդրադարձում առանց երկմտելու մատնանշում էր երիտասարդ մասնագետների «գլխավոր դժբախտությունը».

> Սխեմատիզմն ու վերացականությունը, վորոնք մինչև իսկ ուտոպիզմի յեն հասնում, ցուցադրված սովորական նախագծերի գլխավոր արատներն են. դրանք չափազանց աշակերտորեն նման են գերմանական «Բաուլ-Հազե»յի կամ նույնիսկ «Կորբյուզի» աշխատանքների ծանոթ նմույշներին: Սակայն այս չե գլխավոր դժբախտությունը, այլ այն, վոր նախագծերի նշանավոր մասը թվում ե ինքնանպատակ սխեմա, կտրված իրական տեղից, ճարտարապետական գոյություն ունեցող անսամբլից:[103]

Երզնկյանի համար Արկինի հոդվածից վերցրած այս ընդարձակ մեջբերումներից արվող եզրակացությունը հետևյալն էր.

> Նոր ճարտարապետությունը դնելով պրոլետարական շինարարության ճշգրիտ պրոբլեմը, ինքը կտրվում ե հողից և սավառնում յեթերում, նկատի չառնելով տեղական պայմանները և շատ անգամ նույնիսկ կենցաղային խնդիրները, տարվելով «կաբինետային ուտոպիզմով»:[104]

Տեղական պայմաններն ու կենցաղային խնդիրները հաշվի չառնելու դեմ հնչող Երզնկյանի քննադատության մեջ երևում է 1920-ականների սկզբին ձևակերպված ազգային կոմունիստների դիրքորոշումը: Ի վերջո, այդ քննադատությունն է, որ դասակարգայնորեն մաքուր ճարտարապետական ոճի համար առճակատումներում Երզնկյանի առջև ճանապարհ է բացում նաև «հայկական ոճը» պաշտպանելու համար:

---

[102] Նույնը Արկինի հոդվածում, տե՛ս Արկին, «Վոճը ճարտարապետության մեջ»:

[103] Այս մեջբերումը որոշակի տարբերություն ունի Արկինի տեքստի հայերեն թարգմանությունից. ահա այդ հատվածը. «Սխեմատիզմն ու վերացականությունը, վորոնք մինչև իսկ ուտոպիզմի յեն հասնում,–ցուցադրված ավարտական նախագծերի գլխավոր արատներն են: Դրանք չափազանց աշակերտորեն նման են գերմանական «Բաուհաուսի» կամ նույն ինքն Կորբյուզեի աշխատանքների ծանոթ նմուշներին: Սակայն այս չե գլխավոր դժբախտությունը. այլ այն, վոր նախագծերի նշանակալի մասը թվում ե ինքնանպատակ սխեմա, կտրված իրական տեղից, ճարտարապետական գոյություն ունեցող անսամբլից»:

[104] Երզնկյանի համոզմունքն էր, որ «հարցը գրելու, խոսելու ու վորոշելու մեջ չի, այլ կիրառելու հնարավորությունների մեջ»: Միաժամանակ նա քննադատում էր ճարտարապետներին, որոնք «Հայաստանում թեկուզ մի գոմ» չէին կառուցել, որը ենթարկված լիներ ստանդարտիզացիայի, մեքենայացման և կառուցված լիներ պրոլետարական ոճով: Տե՛ս Յերզնկյան, «Մի քանի խոսք յեվ մի փոքրիկ պահանջ»:

Երզնկյանի ելակետը, առաջին հայացքից որքան էլ տարօրինակ, ոչ թե կառույցների արտաքին ձևավորման մեջ և կառուցվածքում «հայկական ոճի», այլ «պրոլետարական դասակարգային բնույթի» պաշտպանությունն է: Սակայն Երզնկյանի առաջ քաշած հարցն է, որ որոշարկում է ինքնին այդ բնույթը. «Հայկական վոճի աշխատավորական ելեմենտները պիտի ոգտագործե՞նք մեր շինարարության ընթացքում, թե՞ վոչ»: Ինչպես ֆելիետոնում, այնպես էլ այստեղ Երզնկյանը վերափոխում է «հայկական ոճի» դասակարգային պատկանելությունը՝ դրա մեջ շեշտելով աշխատավորական տարրերը: «Հայկական ոճի» դասակարգայնության շուրջ բանավեճերում Երզնկյանը ձևակերպում է իր դիրքորոշումը.

> Կա մի խոշոր թյուրիմացություն, վոր բղխում ե ծայրահեղ անգիտությունից, կամ նույնիսկ տգիտությունից: Շատերը չեն կարող տարբերել իսկական «հայկական վոճը», վորի ելեմենտները բղխում են ժողովրդական – աշխատավորական ստեղծագործությունից և շփոթում են յերկրում գոյություն ունեցող ֆեոդալական և յեկեղեցական «վոճի» հետ: Սա հետևանք ե նյութի անծանոթության և մակերեսային մոտեցման:[105]

Առաջադրելով «հայկական ոճի» «աշխատավորական ստեղծագործական մոտիվների» օգտագործման պահանջը՝ Երզնկյանն իր հերթին քաղաքական գնահատական էր տալիս «անհուսալի կոսմոպոլիտ – նիհիլիստներին», որոնք «ձախության հիվանդությամբ» բռնված, «ժխտում են ամեն մի ազգային կուլտուրա»:[106]

Ազգային ոճի ու կենցաղի խնդիրների շուրջ այս հակամարտը, որ երկուստեք քաղաքական գնահատականների ու որակումների առիթ էր տալիս, ինքնին ցուցիչն էր երկրում տիրող քաղաքական լարված մթոլորտի: Ստալինյան հնգամյակով ազդարարված համատարած կոլեկտիվացման ու արդյունաբերականացման ծրագիրն իր բարձրակետին էր հասնում: Դասակարգային պայքարի սրման ստալինյան կարգախոսն իր հերթին գործի էր դրել քաղաքական մեղադրանքների հրապարակայնացման, դասակարգային թշնամիներին երևան բերելու ու չեզոքացնելու տրամաբանությունը: Թվում է՝ դրա

---

[105] Իր հերթին Արտաշես Կարինյանը ժողովրդական ու ֆեոդալական ճարտարապետությունների փոխհարաբերման խնդրի կապակցությամբ ուշագրավ շրջում է կատարում՝ նշելով. «Ճիշտ կլիներ ենթադրել, որ իրենց խնդիրների հաջող իրագործման համար հենց եկեղեցիների կառուցողներն են օգտագործել ժողովրդական ստեղծագործության փորձն ու առկա օրինակները»: Տե՛ս А. К., «О „стиле“ и строительстве», էջ 111: Սակայն, ինչն առավել ուշագրավ է թվում, «հայկական ոճի» Կարինյանի մեկնաբանման պարագայում դրա՝ իբրև «խառը» ավանդույթ ընդունելու հանգամանքն է: Կարինյանը «հայկական ոճում» չի վարանում նկատել «Հռոմի, արաբների, հարևանների ազդեցությունը»: Միաժամանակ, Կարինյանի համոզմամբ, հայ եկեղեցական ֆեոդալներն այդ ազդեցությունների ներդաշնակ համադրությամբ ստեղծելով իրենց յուրահատուկ «ոճը» փորձում էին ընդգծել իրենց իդեոլոգիան առանձին դետալների շեշտադրմամբ: «Խելացի ճարտարապետը», ըստ Կարինյանի, պետք է կարողանար մի կողմ թողնել ավելորդությունները և օգտագործել էականն ու արժեքավորը: Տե՛ս А. К., «О „стиле“ и строительстве», էջ 106: Որքան էլ առաջին հայացքից հակադիր, բայց Կարինյանն առաջ է քաշում մի մոտեցում, որ ամեն դեպքում այլևս գործում էր ավանդույթը մաքրելու միևնույն տրամաբանության ուղեծրում:

[106] Արտաշես Կարինյանը շեշտում էր, որ պայքարը նացիոնալիզմի, կղերականության, ֆեոդալ-պալատական իդեոլոգիայի դեմ պարտադիր է: Բայց այդ կոնկրետ պայքարի փոխարինումն ազգային կուլտուրայի դրական կողմերի օգտագործման դեմ քողարկված ելույթներով նա համարում էր աշխատանք, որը նպաստում էր նույն այդ նացիոնալիզմի վերածննդին: Տե՛ս А. К., «О „стиле“ и строительстве», էջ 106: Հատուկ նշել է պետք, որ առավել լայն՝ անցյալի ավանդույթի հանդեպ նույնական դիրքորոշում ունեին կուսակցական հին կադրերը նաև Ռուսաստանում: Ամենաակնառու քաղաքական դեմքերից մեկը՝ մինչև 1929-ը լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնը զբաղեցնող Անատոլի Լունաչարսկին նոր ճարտարապետության խնդիրների առումով գրում էր. «Մշակելով քաղաքի մեր ձևերը՝ որպես կենցաղի և մշակույթի զետեղարան (вместилище), մենք պետք է փոխառենք (ինչն օրինական է) ոչ միայն ժամանակակից ինժեներիայի բազմաթիվ տեխնիկական և նույնիսկ ձևային նվաճումները, այլև, իհարկե, դասական արվեստի մեծագույն նվաճումները դրա տարբեր պատմական դրսևորումներով»: Տե՛ս А. Луначарский, «Архитектурное оформление социалистических городов», ըստ՝ *Города социализма*, էջ 68:

վկայություն պետք է համարել նաև թե՛ երիտասարդ ճարտարապետների դեմ Երզնկյանի պաշտպանած դիրքորոշումը, թե՛ հատկապես այդ դիրքորոշումն արտահայտելու կերպը:

Անխոս, սկզբունքորեն Երզնկյանը հավատարիմ էր նոր կենցաղի հաստատման համար ժամանակ տալու, ճարտարապետական ոճի խնդրում տեղական պայմանների ու առանձնահատկությունների հանդեպ նրբանկատ լինելու ազգային կոմունիստ գործիչների որդեգրած մոտեցմանը: Սակայն Երզնկյանի խոսքն ինքնին կարծես հնչում է ստալինյան քաղաքականությունների արդյունքում իսկական ռազմադաշտի վերածված մի իրականությունից, որտեղ ժամանակն ու նրբանկատությունն ինքնին քաղաքական անտեղի մոտեցումներ էին գնահատվում: Երզնկյանի խոսքը կոպիտ է ու հեգնական, ստանձնած դիրքը երիտասարդ ճարտարապետների հանդեպ՝ բացահայտորեն առավել փորձառուի ու գիտակի: Սրված քաղաքական իրադրությունում ճարտարապետության ու կենցաղի խնդիրների շուրջ քաղաքական կոշտ դիրքորոշում ստանձնելու ու այն պաշտպանելու ստալինյան գործի գցված տրամաբանությունը կոպտացրել ու սրել էր նաև ազգային կոմունիստի դիրքորոշումը. նուրբ մոտեցումը պաշտպանվում էր կոպտորեն: Մի իմաստով, թերևս հենց այս փոփոխությունն էր ազդարարում ստալինիզմի հաստատումը, երբ թե՛ Երզնկյանը, թե՛ Մազմանյանը գործում էին միևնույն տրամաբանությամբ:

«Հին աշխարհին ընդմիշտ հրաժեշտ տալու» պահանջը

Առաջին հնգամյակի մեկնարկով հստակ դարձավ, որ տնտեսության մեջ «մեծ բեկում մտցնելու» ստալինյան ծրագրում նոր ճարտարապետությամբ ստեղծվող նոր կենցաղն իրեն վերապահված քաղաքական դերն ունի: 1929-ին *Խորհրդային Հայաստան* պաշտոնաթերթում հրապարակված կոմունիստական կուսակցության ղեկավար դեմքերից՝ Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Հայկ Ազատյանի «Ինդուստրացում, կուլտուրա, կենցաղ» հոդվածը փորձ էր պարզաբանելու այդ դերը:[107] Ողջ Միությունում մեկնարկած արդյունաբերականացման ծրագիրը, ըստ Ազատյանի, առաջին հերթին արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ծրագիր էր, սակայն դրա նշանակությունն այդքանով չէր սահմանափակվում.

> Ինդուստրացման զենքով միայն մենք կարող ենք արագ տեմպով զարգացնել նաև մեր կուլտուրան, նրա միջոցով միայն կառուցել մեր սոցիալիստական կուլտուրայի շենքը և մեր վողջ կենցաղը սոցիալիստորեն հեղաշրջել, սոցիալիստական հողի վրա դնել, մեր կուլտուրան ու կենցաղը սոցիալիզմի վերջնական հաղթության գործին ծառայեցնել:

1929-ին ուրեմն «ինդուստրացման զենքը» բարձրացված էր նաև կենցաղի ասպարեզում ու այդ զենքն էր, որ կենցաղի վերափոխմանը պետք է հաղորդեր արագ տեմպեր. ստալինյան հնգամյակի տրամաբանությամբ քաղաքական պարտադրանքով ու ճնշումներով 50-100 տարվա տնտեսական հետամնացությունը հաղթահարելու տենդը պետք է վարակեր նաև կենցաղը:[108] Արագ տեմպերով տնտեսության սոցիալիստական

---

[107] Հ. Ազատյան, «Ինդուստրացում, կուլտուրա, կենցաղ», *Խորհրդային Հայաստան*, 20 սեպտեմբերի 1929 թ.: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[108] Ստալինն ինքը 1931-ին հայտարարում էր. «Մենք հետ ենք մնացել առաջավոր երկրներից 50-100 տարով: Մենք պետք է անցնենք այդ տարածությունը տասը տարում: Կամ մենք կանենք դա, կամ մեզ կտրորեն»: Տե՛ս Иосиф Сталин, «О задачах хозяйственников. Речь на Первой Всесоюзной конференции работников социалистической промышленности 4 февраля 1931 г.», ըստ՝ *Сочинения*, հ. 13, էջ 39: Ստալինի պնդումը, թե «չի կարելի նվազեցնել տեմպերը», խտացնում էր քաղաքականությամբ սեղմված ժամանակի տրամաբանությունը: Տե՛ս Сталин, «О задачах хозяйственников», էջ 38:

հիմքերը դնելու քաղաքական պահանջը նույն արագությամբ հավակնում էր հեղաշրջել նաև կենցաղը: Այս կերպ քաղաքական ու մշակութային ժամանակները նույնացվում էին ու կենցաղն ամբողջովին ենթակա էր դառնում քաղաքական ուղիղ գործադրվող հրահանգներին:[109] Կենցաղի սոցիալիստական հեղաշրջումը քաղաքական անհետաձգելի պահանջ էր դառնում.

> Սոցիալիստական կենցաղը նախ և առաջ պահանջում ե, վոր մեր գյուղն ու քաղաքը հիմնովին վերակառուցվեն, վոր անհատական տնտեսության հետ միասին վերանան նաև անհատի ու նրա ընտանիքի պահանջներին հարմարեցրած բնակարանները, վոր ամենուրեք հիմնվեն սոցիալիստական կենցաղի պահանջներին հարմարեցրած շենքեր՝ ընդհանուր խոհանոցներով, լվացարաններով, դահլիճներով, գրադարան-ընթերցարաններով, ակումբներով, ռադիո-ապարատներով, մսուրներով, պահեստներով և այլն:[110]

Գյուղում մեկնարկած կոլեկտիվացմանը զուգահեռ սոցիալիստական կենցաղի հաստատումը հատուկ ու առաջնահերթ խնդիր է դիտում Ազատյանը: Տնտեսության կոլեկտիվացումն ուղիղ կապի մեջ էր դրվում կոլեկտիվ կենցաղի հաստատման հետ: Ինքնին կոլեկտիվ տնտեսությունները և կոմունաները կոչված էին «իսպառ վերացնելու» գյուղատնտեսության մասնավոր սեկտորը, բայց նույն այդ կոլեկտիվ տնտեսություններն ու կոմունաները, Ազատյանի գնահատմամբ, «ամենամեծ դժվարությունների, իսկ հաճախ ուղղակի անհաղթելի արգելքների կհանդիպեն, յեթե արտադրության սոցիալիստական վերակառուցման պրոցեսին զուգընթացաբար նրանց անդամների կենցաղում ել չկատարվի համապատասխան հեղաշրջում սոցիալիզմի ուղիով»: Կենցաղից էր ելնում այն վտանգը, որ սպառնում էր կազմալուծել կոլեկտիվ տնտեսություններն ու կոմունաները: Դրանք «մեծամեծ» արգելքների էին հանդիպում, եթե «նրանց անդամները շարունակում են կառչել հին կենցաղին, պապենական նիստ ու կացին, յեթե ղեկավարվում են մասնավոր սեփականության դարաշրջանին հատուկ սովորություններով, գաղափարներով և բարոյական սկբունքներով»:[111]

---

[109] Այս առումով հիրավի նշանային է թվում Ազատյանի այն դիտարկումը, որ «կուսակցական շարքերի զտումն» է ղեկավար մարմիններին «չափազանց հարուստ նյութ մատակարարում այն մասին, թե կուսակցական և անկուսակցական լայն մասսաները դեռ ինչքան հետամնաց, ինչքան անկուլտուրական են»:

[110] Կենցաղի հանրայնացում ենթադրող սոցիալիստական քաղաքների ու կոմունա-տների օրինակներ տե՛ս *Սոցիալիզմի քաղաքները և կենցաղի սոցիալիստական վերակառուցումը* ժողովածուում ներառված անդրադարձները՝ Т. Хвесин, «Как мы строим социалистический Сталинград», էջ 120-126; Г. Пузис, «Социалистический Магнитогорск», էջ 127-133; «Дом коллектива», էջ 137-138; П. Голубков, «В новом доме», էջ 139-140: Չնայած բնակարանային խնդիրն առաջնային էր ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Միության տարածքում, այնուամենայնիվ առաջին հնգամյակի ընթացքում գործնականում այդ խնդիրը հեռու էր լուծված համարվելուց: Իր՝ «Ստալինյան կոնստրուկտիվիզմ. ստալինյան ճարտարապետության ժամանակագրության խնդրի շուրջ» հոդվածում Դմիտրի Խմելնիցկին նշում է. «1920-ականների կեսերին Պետպլանի մասնագետները կանխատեսում էին բնակարանային խնդրի ապագա լուծումն ավանդական եղանակով՝ բնակչությանը բնակարաններով ապահովելու ճանապարհով: Սակայն առաջին հնգամյակի պլաններով նախատեսված չէր բոլորի համար բնակելի շենքերի մասսայական շինարարության ֆինանսավորում: Պետական միջոցների հաշվին բարեկարգ բնակարաններով պետք է ապահովվեր և ապահովվում էր միայն իշխող շերտը՝ ողջ քաղաքային բնակչության շատ քիչ տոկոսը: Բնակարանային շինարարության մեջ մասնավոր ներդրումները, որոնք 1924-1928 թվականներին զգալիորեն գերազանցում էին պետական ներդրումները, ամբողջությամբ դադարեցին մինչև 1930 թ., բնակչության համընդհանուր աղքատացման և մասնավոր առևտրի արգելքի պատճառով: Քաղաքների և բանվորական ավանների անբնական արագ աճող բնակչությունը պլանային կերպով բնակեցվում էր բարաքներում և գետնափոր տներում, որոնք այդ ժամանակ դարձել էին խորհրդային բնակարանի ամենամասսայական տեսակը»: Տե՛ս Дмитрий Хмельницкий, «Сталинский конструктивизм. к проблеме хронологии сталинской архитектуры», https://bit.ly/3PboFjh, այց՝ 3 հոկտեմբերի 2022 թ.:

[111] Կոլեկտիվացման և կոլեկտիվ կենցաղի միջև այս ուղիղ կապն անց էին կացնում նաև ռուս կուսակցականները: Մասնավորապես Զինովևը նշում էր. «Արդյունաբերականացումը գումարած կոլեկտիվացումը ամենակարևոր նախադրյալներն են կենցաղի բազմակողմանի վերափոխման համար՝ կոմունիստական (սկզբում՝ սոցիալիստական) հիմունքներով: Բայց և հակառակը: Կենցաղի կոմունիստական

Ուշագրավ է, որ հին կենցաղից, «պապենական նիստ ու կացից» մաքրվելու այս օրակարգում 1930-ին Մազմանյանը հղանում է «Եպոխայի մոնումենտը»՝ սոցիալիզմ հաստատող հասարակարգին հարիր ագրո-քաղաքի հատակագիծը:[112] Մազմանյանի համար այդ ագրո-քաղաքները հնարավոր էր կառուցել «*միայն համատարած կոլլեկտիվացման յենթարկված շրջաններում*» (ընդգծումը՝ Մազմանյանի):[113] Կոլեկտիվացմանը զուգահեռ կոլեկտիվ կենցաղ կազմակերպելու նույն խնդրից ելնելով՝ Մազմանյանը մերժում էր անհատական, իր տնտեսությունն ունեցող ընտանիքի կարիքները բավարարող բնակարանանային տիպը.

> Ծնունդ առնելով անհատական կենցաղից՝ հարմարվելով նրա պահանջներին, բնակարանի այդ տիպը մեկուսացնում ե աշխատավորության[ն] իր ընտանիքի սահմաններում, թունավորում ե նոր ծնվող սոցիալիստական կենցաղը:
>
> Անհրաժեշտ ե գտնել բնակարանի այնպիսի տիպ, վորը հնարավորություն կտա վտարելու այդ մանր բուրժուական անհատապաշտական կենցաղը և միջոցներ կստեղծի անցնելու սոցիալիստական կենցաղի ձևավորման:[114]

Համընդհանուր կոլեկտիվացման գործընթացներն էին, որ Մազմանյանի համար դեռ 1927-ին առաջ քաշած կոմունա-տների գաղափարի իրագործմանը հաղորդում էին ռեալություն: Ճարտարապետական նոր կառուցվածքներն այս կերպ պետք է «արմատախիլ» անեին «մանր-բուրժուական» կենցաղն ու «մաքուր» տեղ բացեին նոր՝ սոցիալիստական կենցաղի հաստատման համար:[115]

վերափոխումն արդյունաբերականացման և կոլեկտիվացման հաջողությունների լրջագույն նախադրյալներից մեկն է»: Տե՛ս Зиновьев, «От утопии к действительности», էջ 16:

[112] Միքայել Մազմանյան, «Եպոխայի մոնումենտը. սոցալիստական ագրո-քաղաքի հատակագծման պրոբլեմը», *Խորհրդային Հայաստան,* 22 փետրվարի 1930 թ.: Ֆրեդերիկ Սթարը, քննարկելով առաջին հնգամյակի ընթացքում քաղաքաշինական առաջադրվող նախագծերն ու տեսլականները, նշում է. «1928-30-ին իսկապես թվում էր, թե նոր աշխարհը ձեռքի տակ է: Պայծառատես նախագծողները խանդավառությամբ սպասում էին դրա գալստյանը և նրանց նախագծերն ու տեսական աշխատությունները փորձ էին անում նկարագրել դրա զարմանահրաշ կողմերը»: Տե՛ս S. Frederrick Starr, «Visionary Town Planning during the Cultural Revolution», ըստ՝ *Cultural Revolution in Russia,* էջ 209: Ասպեկտների այդ բազմազանությանն է ծանոթացնում, օրինակ, 1926-1932-ի ընթացքում ռուսական ճարտարապետական խմբավորումների գործունեությունը ներկայացնող փաստաթղթերի հավաքածուն: Տե՛ս *Из истории советской архитектуры, 1926-1932 гг.: Документы и материалы* (Москва: Наука, 1970): Ինչ վերաբերում է հենց ագրո-քաղաքի գաղափարին, անշուշտ, այն շրջանառվում էր նաև Ռուսաստանում: Տե՛ս Л. Сабсович, «Агро-индустриальные города», ըստ՝ *Города социализма*, էջ 72-74:

[113] Արդյունաբերականացման, կոլեկտիվացման և քաղաքաշինական, բնակարանային խնդիրների միջև ուղիղ այս կապը տարվում էր ոչ միայն ճարտարապետների, այլև կուսակցական բարձրաստիճան գործիչների կողմից: Գրիգորի Զինովևը հաստատում էր. «Բնակարանային, մասնավորապես սոցիալիստական քաղաքների խնդրի լուծումը պետք է ներառել ժամանակակից սոցիալիստական շինարարության ընդհանուր շրջանակի մեջ: Միայն այն հսկայական հաջողությունների առկայության դեպքում, որոնք կուսակցությունն արդեն իսկ ունի արդյունաբերականացման...., գյուղատնտեսության կոլեկտիվացման ոլորտներում, միայն հնգամյակի առկայությամբ հնարավոր դարձավ իրապես բարձրացնել ԽՍՀՄ-ում բնակարանային խնդրի լուծման հարցը»: Տե՛ս Зиновьев, «От утопии к действительности», էջ 13:

[114] Համատարած կոլեկտիվացման պայմաններում Մազմանյանի՝ ագրո-քաղաքի նախագծով ոգևորությունը կարծես քողարկում էր առաջին հնգամյակի քաղաքաշինության իրական պատկերը: Դմիտրի Խմելնիցկին անդրադառնալով խոշոր գործարանների շուրջ քաղաքների գոյացմանը՝ նշում է. «Նոր հսկայական գործարաններն ու արդյունաբերական համալիրները, որոնք ունեին զուտ ռազմական նշանակություն և արագորեն շրջապատվում էին դրանք կառուցող շինարարների և աշխատողների համար նախատեսված բարաքային «սոցքաղաքներով», ևս ստալինյան ժամանակաշրջանի գյուտն էին: Դրանք կառուցվում էին հումքի և էներգիայի աղբյուրների մոտ, հաճախ ամբողջովին ամայի վայրերում: Աշխատողներն այնտեղ էին բերվում հարկադրաբար և պլանային կերպով»: Տե՛ս Хмельницкий, «Сталинский конструктивизм»:

[115] Կենցաղի խնդրում երիտասարդ հայ ճարտարապետների այս դիրքորոշումն արձագանքում էր ռուսական հաճախ էլ ավելի արմատական մտայնությանը: Ոմն հոդվածագիր Ի. Չերնյա առանց այլևայլությունների պնդում էր. «Կենցաղի խնդիրներում հարցը հետևյալն է՝ անհատական, թե կոլեկտիվիստական կենցաղ: Երրորդ տարբերակ չկա: Երրորդը, չորրորդը և այլն հարում են դրանցից մեկին»: Տե՛ս И. Черня, «Города социализма», ըստ՝ *Города социализма*, էջ 23: Ուշագրավ է, որ նույն 1930-ին Հայաստանում երիտասարդ ճարտարապետները հիմնեցին Պրոլետարական ճարտարապետների միությունը: Միության դեկլարացիան հայտարարում էր. «Մեր կենցաղի մեջ հիմնական տենդենցն ե կոլեկտիվացման ձգտումը կյանքի բոլոր

> Ագրո-քաղաք կառուցելու խնդիրը մտացածին գաղափար չե և վոչ ել հերթական «ցնորամտություն» (ինչպես սիրում են հորջորջել մեր ամեն մի նոր քայլը մեր քաղաքական հակառակորդները), այլ հրամայական պահանջ, վոր առաջադրում ե մեզ ինքը կյանքը, համատարած կոլեկտիվացման յենթարկվող շրջանների ալեկոծվող կյանքը:[116]

Սոցիալիստական երկիր կառուցելու քաղաքական ծրագրում նոր կենցաղի հաստատման ստալինյան ձևը կարծես բյուրեղացնում են Հայկ Ազատյանի հոդվածի վերջին տողերը. սոցիալիստական տնտեսության հնգամյա պլանի իրագործումն էր պայմանը սոցիալիստական կենցաղի բնագավառում «հսկայի քայլերով առաջ գնալու և հին աշխարհին ընդմիշտ հրաժեշտ տալու համար»: «Հին աշխարհից» հրաժարվելու ու այդ հրաժարումն արագ ու մեծ քայլերով իրագործելու քաղաքական պահանջն էր ձևավորում նոր ճարտարպետություն ու նոր կենցաղ հաստատելու քաղաքական գործելակերպը:[117]

Վերջաբանի փոխարեն

«Կենտկոմը նշում է....»

1930-ին կոլեկտիվ կենցաղի կազմակերպման ծրագրի իրագործման իրական քաղաքական, տնտեսական պայմանները, սակայն, սկսել էին բացահայտել իրենց խնդրականությունը: Առաջին հնգամյակով ամբողջ երկրի արդյունաբերականացման համար սահմանված ըստ էության անիրագործելի ժամկետները երկիրը գցել էին համընդհանուր մոբիլիզացիայի և լարվածության մշտատև դրության մեջ: Դասակարգային սրված պայքարի նշանի ներքո իրականացվող ստալինյան «մեծ բեկումը» ողջ Միության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային կյանքը ենթարկել էր արմատական ու անշրջելի բեկբեկումների:[118] Անընդմեջ արագացող տեմպերով նոր պլանները չէին համապատասխանում արտադրության իրական հնարավորություններին: Պլանները չէին կատարվում, ինչը երկրում առաջացրել էր

ասպարեզներում և առողջ, ռացիոնալ ու կենսուրախ պայմանների ստեղծումը՝ համակեցության, աշխատանքի և հանգստի համար»: Տե՛ս «ՀՍԽՀ պրոլետարական ճարտարապետների միության դեկլարացիան», *Խորհրդային Հայաստան,* 31 հունվարի 1930 թ.: Տե՛ս նաև «Декларация об'единения пролетарских архитекторов ССР Армении», *На рубеже Востока,* 1930, թիվ 1, էջ 118-121: Պրոլետարական ճարտարապետների միության օրակարգի մասին տե՛ս «О работе ОПРА Армении», *Советская архитектура,* 1931, թիվ 1-2, էջ 67:

[116] Առաջին հնգամյակի ընթացքում մասնավորապես ռուսական քաղաքաշինական նախագծերի նորարարական մոտեցումներին անդրադառնալիս Սթարը նշում է. ««Ամենևին չլինելով ժամանակավոր խելագարության հատուկենտ պահեր՝ սրանք բոլորը լրջորեն ըմբռնված ջանքեր էին օգտագործելու քաղաքաշինությունը որպես «զանգվածների հոգեկանը կազմակերպելու ամենահզոր գործոն»: Տե՛ս Starr, «Visionary Town Planning», էջ 208: Առաջին հնգամյակի ընթացքում քաղաքաշինական ուրբանիստական ու հակաուրբանիստական տեսլականների քննարկման համար տե՛ս Տե՛ս Սթարի վերոհիշյալ հոդվածը, նաև Սթայթի *Revolutionary Dreams* գրքի «Utopia in Space: City and Building» գլուխը (էջ 190-204):

[117] Պատահական չէ, որ, նույն կերպ, օրինակ, Ի. Չերնյան նոր կենցաղի հաստատումը կապում էր հնգամյակի ընթացքում սոցիալիզմի «կատաղի տեմպերի» հետ: Տե՛ս И. Черня, «Города социализма», ըստ՝ *Города социализма*, էջ 25:

[118] Ողջ Միության տարածքում մեկնարկած մշակութային ու սոցիալական հեղափոխության բարդ ընթացքի մասին տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 216-223: Իր հերթին Շեյլա Ֆիցպատրիկը 1928-ի «նոր հեղափոխության» մասին գրում է. «1928-ը շրջադարձային էր ոչ միայն խորհրդային մշակութային քաղաքականության, այլև մյուս բոլոր ոլորտների քաղաքականության համար: Սա մի նոր հեղափոխության սկիզբն էր, որ բացի ստալինյան առաջնորդությունից՝ մնացած ամեն ինչ կործանեց. մի այնպիսի բռնի հեղաշրջում, որ թվում էր, թե ղեկավար կուսակցությունը ելել է միաժամանակ իր կառավարած հասարակության և իր կառավարող հիմնարկությունների դեմ»: Տե՛ս Fitzpatrick, *The Cultural Front,* էջ 91:

տնտեսության փլուզման շղթայական ռեակցիա:[119] Այս զարգացումներին զուգահեռ էր, որ ընթանում էին հին կադրերի դեմ քաղաքական արշավն ու նոր՝ կոմունիստական կադրերի առաջ քաշման գործընթացը:[120] Կադրային այս փոփոխությունը, որ մեծ թափով ընթանում էր նաև տնտեսական, արտադրական ոլորտում, խորացնում ու վատթարացնում էր արդյունաբերական արտադրությունը ոչ պակաս, քան անիրագործելի պլանները:[121] Արդյունքում՝ ստալինյան ղեկավարությունն այլևս անկարող էր հերքել, որ տնտեսության մեջ «մեծ բեկում» կատարելու քաղաքական հավակնությունը հանգեցրել էր սոցիալական անկայունության՝ հղի տնտեսության համար կործանարար հետևանքներով:[122]

1931-ի հունիսի 23-ին Ստալինը հրապարակում է իր հայտնի «վեց պայմանները», որոնք ազդարարում էին ստալինյան մշակութային հեղափոխության ավարտն ու միաժամանակ սկիզբ դնում նոր՝ «կարգուկանոնի հաստատման» ժամանակաշրջանի:[123] Ինչպես Ստալինի առաջ քաշած պայմաններն էին հուշում, քայքայված սոցիալական օրգանիզմի վերականգնման ուղիներից մեկը պետք է դառնար «մասնագետակերության» ավարտն ու հին դպրոցի մասնագետների հանդեպ հոգատարությունը:[124] Վարկաբեկված ու քննադատված հին կադրերը մշակութային հեղափոխության ավարտով վերականգնում էին իրենց դիրքերը:

Քաղաքական շրջադարձով մշակութային հեղափոխության ավարտն ու հին կադրերի հանդեպ ստալինյան հոգատարության հաստատումը ստալինիզմի ծնունդը վկայող բեկումնային կետ են դառնում:[125] Ստալինն ինքը դավաճանեց մշակութային հեղափոխության գաղափարին. դրա սիրտը կազմող նոր՝ մաքուր ու զտված ճարտարապետության ու կենցաղի քաղաքական նախագիծը մնաց անկատար: Կենցաղի

---

[119] Արագացող տեմպերն իրենց շրջապտույտի մեջ էին առել նաև ճարտարապետության ու շինարարության ոլորտները: Ա. Էպշտեյնի՝ սոցիալիստական քաղաքի կուլտուր-կենցաղային խնդիրները քննող հոդվածի մի հատվածը դրա վառ օրինակ է. «Դրամայական անհրաժեշտության ճնշման տակ մենք ստիպված ենք ենթարկվել կյանքի տեմպերին, քանի որ այս կյանքը չի սպասում, և բանվորական բնակարանային շինարարությունը ծավալվում է պլանով սահմանված ժամկետներում՝ անկախ նրանից՝ մեր մոդելային նախագծումները պատրաստ են, թե ոչ»: Տե՛ս А.Эпштейн, «Культурно-бытовая организация социалистического города», ըստ՝ *Города социализма*, էջ 86:

[120] Կատարվող կադրային փոփոխության և ստալինյան հեղափոխության միջև կապն է ցույց տալիս Շեյլա Ֆիցպատրիկը. «Դասակարգային պայքարի հռետորության հետևում արդյունաբերական բանվորների և բանվոր դասակարգի կուսակցականների լայնամասշտաբ վերընթաց շարժունակությունն էր դեպի բարձրագույն կրթություն և վարչական ու կառավարչական աշխատանքներ: Մշակութային հեղափոխությունն ապագա կոմունիստական վերնախավ ու նոր, խորհրդային ինտելիգենցիա ստեղծելու միջոց էր»: Տե՛ս Fitzpatrick, «Cultural Revolution as Class War», էջ 11:

[121] Կադրային փոփոխության տեսակետից մշակութային հեղափոխության մեկնարկին է անդրադառնում Դեյվիդ Ջորավսկին: Տե՛ս David Joravsky, «The Construction of the Stalinist Psyche», ըստ՝ *Cultural Revolution in Russia,* էջ 106:

[122] Տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 216-217, 221: Ստեղծված իրավիճակը կադրային քաղաքականության տեսակետից տե՛ս Lewin, «Society, State, and Ideology during the First Five-Year Plan», էջ 67-70:

[123] Ստալինի առաջ քաշած «վեց պայմանները» ենթադրում էին տնտեսական-քաղաքական համալիր միջոցառումներ, որոնք վերջինս ներկայացրեց իր «Новая обстановка – новые задачи хозяйственного строительства» ելույթում: Տե՛ս Сталин, «Новая обстановка», էջ 51-80: Տե՛ս նաև Верт, *История Советского государства*, էջ 221-222:

[124] Сталин, «Новая обстановка», էջ 73, 77:

[125] Մշակութային հեղափոխությունից ստալինյան «մեծ նահանջի» մասին տե՛ս, օրինակ, Fitzpatrick, *The Cultural Front,* էջ 238- 256: Առավել լայն իմաստով 1930-ականների ստալինյան քաղաքականություններն իբրև «մեծ նահանջ» ըմբռնելու առնչությամբ տե՛ս Nicholas S. Timasheff, *The Great Retreat: The Growth and Decline of Communism in Russia* (New York: E. P. Dutton and Company, 1946): Ճարտարապետության մեջ այս շրջադարձը քննելու անկյուն է բացում Վլադիմիր Պապերնիի *Культура два* գիրքը (Москва: Новое литературное обозрение, 1996), որին իրենց հանրային ելույթներում հղում են նաև հայ հեղինակներից ոմանք: Տե՛ս, օրինակ, Արևշատյան, «Empire Strikes Back կամ արդիությունների կոնֆլիկտ»; Աբրահամյան, «Թամանյանի Երևանը կոնստրուկտիվիզմի և ստալինյան ճարտարապետության միջև»:

վերափոխման համար պայմաններ ստեղծելուն կոչված քաղաքականությունը Ստալինի ձեռքում վրեժխնդիր եղավ թե՛ հին կենցաղից, թե՛ նոր:

Երիտասարդ ճարտարապետների՝ քաղաքականությունից մղում ստացած ազնիվ նպատակադրումները չափազանց առաջ էին անցել ստալինյան հաշվարկային քաղաքականությունից: Եթե դեռ 1928-1929-ին քաղաքական հռետորաբանությունն ու նոր ճարտարապետության գաղափարախոսությունը համաժամանակյա ընթացքի մեջ էին, ապա այժմ ստալինյան նահանջն անդառնալի ճեղք էր բացել ներկան վերագտած ստալինյան քաղաքանության ու դեպի ապագան միտված ճարտարապետական գաղափարների միջև:[126] Ստալինյան նահանջը հերթական անգամ քաղաքականության ուժով խեղել էր ժամանակը: Ստալինյան ներկայում երիտասարդ ճարտարապետների՝ դեպի ապագա միտված տեսլականը պետք է չեզոքացվեր անցյալի հետբերմամբ: Սակայն անցյալն ինքը «մեծ բեկմամբ» ու ստալինյան «ինքնաքննադատության» ուժով արդեն իսկ զտվել-մաքրվել էր «սխալներից»՝ այժմ ներկայանալով իբրև քաղաքականապես ճիշտ և ընդունելի: Իր ձեռնարկած մշակութային հեղափոխությունից Ստալինը հրաժարվում էր արդեն իսկ քննադատված, բայց իր հեղափոխականությունը չսպառած քաղաքական կուրսի որդեգրմամբ: Ստալինիզմը քաղաքական դիմաշրջմամբ իր նոր ուժը գտավ ազգային կոմունիստների քաղաքականության հետբերմամբ: Դրանով հենց Ստալինն ինքը մաքրվեց իր իսկ ձեռնարկած մշակութային հեղափոխությունից:

1930-ի մայիսին ստալինյան քաղաքականություններին հատուկ կոպիտ միջամտությամբ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «կենցաղի վերակառուցման աշխատանքի մասին»:[127] Երկրի տնտեսության քայքայման հանդիման կանգնած ստալինյան ղեկավարությունն այնուամենայնիվ հայտարարում էր, որ սոցիալիստական շինարարության, հատկապես երկրի արդյունաբերականացման հաջող ընթացքն էր, որ «արդեն տվյալ փուլում անհրաժեշտ նախադրյալներ է[ր] ստեղծում կենցաղը սոցիալիստական սկզբունքներով վերակառուցելու պլանաչափ աշխատանքի համար» (էջ 154): Երկրի տնտեսական, սոցիալական, մարդկային ներուժը երեք տարվա ընթացքում անդառնալիորեն մսխելուց հետո ստալինյան քաղաքականությունն իր նոր հանգրվանում հանդես էր գալիս լավատեսության ու հաստատակամության դիրքերից: Նույն այդ հանգրվանում ստալինիզմը միաժամանակ ելնում էր իր իսկ քաղաքական նախագծին զինվորագրված ճարտարապետների դեմ.

> Կենտկոմը նշում է, որ սոցիալիստական կենցաղի համար ծավալվող շարժման աճի հետ մեկտեղ առկա են առանձին ընկերների միանգամայն անհիմն, կիսաֆանտաստիկ և այդ պատճառով էլ չափազանց վնասակար փորձեր՝ «մի ցատկով» թռչելու սոցիալիստական վերափոխման ճանապարհի .... խոչընդոտների վրայով.... (էջ 154-155):

1920-ականների երկրորդ կեսին ստալինյան քաղաքականությունների պայմաններում հաստատված կենցաղն արմատախիլ անելու փորձը տարանջատելի չէր առաջին հնգամյակի տնտեսական «կիսաֆանտաստիկ» պլանների իրագործման ընթացքից: Այժմ, սակայն, հարկադրաբար իրականության հետ հաշվի նստող ստալինյան

---

[126] Այնինչ, ինչպես նշում է Սթարը, հնգամյակի ընթացքում աշխատող ճարտարապետ-քաղաքաշինարարների «բազմազան ու ստեղծագործական» նախագծերի առումով, «կլանելով հնգամյա պլանի ապոկալիպտիկ տրամադրությունը, այսպիսի նախագծերի հեղինակները վստահությամբ ակնկալում էին, որ իրենց երազած նոր աշխարհը կգա իրենց իսկ կյանքի ընթացքում»: Տե՛ս Starr, «Visionary Town Planning», էջ 209:

[127] «ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը կենցաղի վերակառուցման աշխատանքի մասին. 1930 թ. մայիսի 16», ըստ՝ *Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում,* հ. 5 (Երևան: Հայաստան, 1989), էջ 154-156: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

քաղաքականության գնահատմամբ այդ փորձերը «վնասակար» էին: Կուսակցությունն ինքը կոչ էր անում հաշվի առնել երկրի «տնտեսական ու կուլտուրական հետամնացությունն» ու երկրի արդյունաբերականացման համար «առավելագույն ռեսուրսների կենտրոնացման անհրաժեշտությունը» (էջ 155): Մշակութային հեղափոխությունից հրաժարված ստալինիզմի համար այժմ մշակութային հեղափոխության առաջամարտիկների դերը ստանձնած ճարտարապետներն իրենք քաղաքական մեղադրանքի առջև են կանգնում.

> «Ձախ ֆրազով» իրենց օպորտունիստական էությունը քողարկող որոշ աշխատողների այդպիսի փորձերին են վերաբերում վերջին ժամանակներս մամուլում երևան եկած՝ գոյություն ունեցող քաղաքների վերապլանավորման և բացառապես պետության հաշվին նոր քաղաքների կառուցման նախագծերը.... (էջ 155):

Ինքն իր «ձախությունից» հրաժարված ստալինիզմն այս կերպ քողազերծում էր այն ճարտարապետների «ձախ ֆրազը», որոնք միայնակ պետք է պատասխանատու լինեին հաստատված կենցաղից ազատվելու, դրանից մաքրվելու փորձի համար:[128] Նոր որոշմամբ այժմ քաղաքականապես դատապարտելի էին քաղաքների վերապլանավորումներն ու նոր քաղաքների կառուցումը, որոնք միաժամանակ ենթադրում էին նոր կենցաղաձևերի հաստատում: «Անհապաղ և լիակատար չափով հանրայնացն[ել] աշխատավորների կենցաղի բոլոր կողմերը՝ սնունդը, բնակարանը, երեխաների դաստիարակությունը՝ նրանց անջատելով ծնողներից, վերացն[ել] ընտանիքի անդամների կենցաղային կապերը և վարչական կարգով արգել[ել] սննդի անհատական պատրաստումը և այլն» (էջ 155). սրանք նոր կենցաղի այն դրսևորումներն էին, որոնք քաղաքականապես այլևս անընդունելի էին: Այդ ձեռնարկումները «վնասակար» ու «ուտոպիստական» համարող ստալինյան քաղաքական նոր կուրսը բարձրաձայնում էր երկրի նյութական ռեսուրսները և բնակչության պատրաստվածության աստիճանը հաշվի առնելու մասին:[129] Կենցաղի վերափոխման փորձն այժմ կարծես համարվում էր արդեն իսկ հաղթահարված վտանգ: Ըստ այդմ կուսակցական դեկրետն արձանագրում էր, որ առկա պայմանների հետ հաշվի չնստելը «կհանգեցներ վիթխարի միջոցների վատնման և կենցաղի սոցիալիստական վերակառուցման բուն գաղափարի խիստ վարկաբեկման» (էջ 155): Ստալինն ինքը սակայն վարկաբեկեց կենցաղի վերափոխման ողջ նախագիծը: 1930-ին հրապարակված կուսակցության պաշտոնական որոշման մեջ հստակ ընթերցվում էր երիտասարդ ճարտարապետների դեմ ուղղված ազգային կոմունիստ գործիչների քննադատությունը: Այլափոխված, բայց ստալինիզմի մեջ կրկին ուժ էր ստանում 1920-

---

[128] Հատուկ նշել է պետք, որ 1930-ի սկզբի դրությամբ Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում նոր քաղաքների կառուցմամբ կենցաղի վերափոխումը պետք է կատարվեր շատ ավելի կտրուկ ու առանց անցումների, քան, օրինակ, Ռուսաստանում: Այս մասին է ոմն Իլյինայի անդրադարձը. «Անդրկովկասում.– վորտեղ քիչ են քաղաքային մեծ կենտրոնները, վորտեղ խրճիթներից և գետնափոր տներից բաղկացած փոքրիկ գյուղերն ավելի հավասարաչափ են բաշխված և նոր արդյունաբերությունը, ինչպես և կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները ստեղծվում են համարյա ամայի վայրերում – ամեն ինչ ցույց է տալիս, վոր մենք պետք է անպայման ընթանանք քաղաքների սոցիալիստական տիպի ստեղծման ուղիով, զանց առնելով դեպի սոցիալիզմը տանող անցողիկ շրջանի միջանկյալ ձևերը»: Տե՛ս Իլյինա, «Շինարարությունը սոցիալիստական տեսակետից յեվ կենցաղի կուլտուրան», *Խորհրդային Հայաստան,* 22 մարտի 1930 թ.:

[129] Հատկանշական է, որ դեռ փետրվարին կուսակցական ղեկավարությունը կենցաղի կոլեկտիվացման խնդրում ճիշտ հակառակ դիրքորոշումն էր հայտնում. «*Նոր քաղաքներում* հետևողական կերպով կիրառվելու յե կենցաղի սոցիալիստական կազմակերպումը, վորը պարտադիր պետք ե լինի բնակիչների համար: Այդ քաղաքներում *լրիվ համայնացվելու յե ճաշ պատրաստելը և ընդհանրապես սնունդը, համայնացվելու յե յերեխաների դաստիարակումը և ազգաբնակչության կենցաղային կարիքների սպասարկումը.... Իսկ ներկայումս գոյություն ունեցող քաղաքներում սոցիալիստական կենցաղը մտցվելու յե կամավոր հիմունքներով և ունենալու յե անցողիկ ձևեր*» (ընդգծումները՝ բնագրի): Տե՛ս «Ամբողջ մասսայով անցնել կոլեկտիվ կենցաղի», *Խորհրդային Հայաստան,* 27 փետրվարի 1930 թ.:

ականների սկզբի հեղափոխական քաղաքականությունը, որն այս անգամ արդեն հաղթականորեն հնչում էր ստալինիզմի ներսից:[130]

1930-ի կենցաղի մասին դեկրետով ստալինիզմն իր մեջ պարփակեց ու միաժամանակ վերջնականապես փակեց 1920-ականների սկզբին մեկնարկած կենցաղի ու մշակույթի արդիականացման ծրագիրը: Ստալինիզմն ի վերջո մեծամասնական հեղափոխական ծրագրի յուրացմամբ դեմ ելավ իր իսկ քաղաքականության ծնունդ դարձած երիտասարդ ճարտարապետների արմատական դիրքորոշմանը: Սակայն կենցաղի վերափոխման հեղափոխական նախագծի վերագործարկումը ոչ թե ազդարարում էր մշակութային հեղափոխության նոր հանգրվանի մասին, այլ ստալինիզմի ներսից ազդարարում դրա ավարտը:

1920-ականների վերջի ու 1930-ականների սկզբի ճարտարապետությունն ու կենցաղը մաքրելու ու զտելու օրակարգն այսօր հետահայաց թվում է հենց իբրև ստալինիզմի ինքնամաքրման հակվածության նշան: Այդ հակվածությունը սակայն չծնվեց ստալինիզմից, այլ իբրև մշակույթի արդիականացման խորհրդային ողջ նախագծի հիմքում ընկած հարացույց իր ամենաբռնի ու արմատական դրսևորումը ստացավ դրա մեջ: Ի վերջո, այդ նախագծի ներսում գործած թե՛ ազգային կոմունիստ գործիչների, թե՛ երիտասարդ ավանգարդիստ ճարտարապետների ապագային թողած ժառանգությունը միևնույն բաց մնացած հարցն է. որքանո՞վ է հնարավոր քաղաքական միջոցների գործադրմամբ «մաքրելով» արդիականացնել սեփական մշակույթը: Այդ հարցին հետամուտ՝ քննելով մշակութային հեղափոխության խորհրդային նախագիծը այսօր այլևս անհնար է շրջանցել ստալինիզմի փորձառությունը: Ստալինիզմն ի վերջո հաջողեց ինքնամաքրվել՝ մաքրելով 1920-ականների մշակութային հեղափոխության պատմությունը: Ուրեմն այդ պատմությունը քննելիս մեր մարտահրավերն է դառնում ստալինիզմին մոտենալն իբրև սեփական կենցաղից ու վարքուբարքից արմատապես ազատվելու, դրանից մաքրվելու արդիականացման փորձառություն:

[130] Քաղաքական բեկումնային շրջադարձերի գնով ստալինյան մենիշխանության հաստատման պատմությունը տե՛ս, օրինակ, Олег Хлевнюк, *Хозяин. Сталин и утверждение сталинской диктатуры* (Москва: Фонд первого президента России Б. Н. Ельцина, Российская политическая энциклопедия, 2010); Ласло Белади, Тамаш Краус, *Сталин* (Москва: Издательство политической литературы, 1990); Stephen Kotkin, *Stalin, Paradoxes of Power, 1878-1928,* h. 1 (New York: Penguin Random House, 2014):